| 1) Արտավազդ II-ը        | 3) Ամֆիկրատես Աթենացին |
| 2) Մեթրոդորոս Սկեփսացին | 4) Օղյունյա քուրմը     |

**151. Ո՞ր արքայի թողած արձանագրության մեջ է առաջին անգամ հիշատակվում Գառնին.**

- |                  |                 |
|------------------|-----------------|
| 1) Սարդուրի II-ի | 3) Արգիշտի II-ի |
| 2) Արգիշտի I-ի   | 4) Ռուսա II-ի   |

**152. Ո՞ր ժամանակաշրջանին են հատուկ մեծ թվով նոր քաղաքների կառուցումը.**

- |                  |                   |
|------------------|-------------------|
| 1) ուրարտական    | 3) վաղմիջնադարյան |
| 2) հելլենիստական | 4) ուշմիջնադարյան |

**153. Ո՞րն էր Երվանդ IV-ի կառուցած քաղաք-սրբավայրը.**

- |                 |             |
|-----------------|-------------|
| 1) Երվանդաշատը  | 3) Բագարանը |
| 2) Երվանդակերտը | 4) Բագավանը |

**154. Ո՞ր կառույցն է Մովսես Խորենացին բնութագրել հետևյալ կերպ՝ «գեղեցիկ և շքեղ հորինվածքով».**

- |                           |                            |
|---------------------------|----------------------------|
| 1) Երվանդակերտ դաստակերտը | 3) Արեգ-Միհրի տաճարը       |
| 2) Անահիտի տաճարը         | 4) Նեմրուֆ լեռան սրբավայրը |

**155. Որտեղ է Նեմրուֆ լեռան սրբավայրը.**

- |                 |                         |
|-----------------|-------------------------|
| 1) Ծովքում      | 3) Փոքր Հայքում         |
| 2) Կոմմագենեում | 4) Վանա լճի արևմուտքում |

**156. Ինչ բարձրության վրա է կառուցված Նեմրուֆ լեռան սրբավայրը.**

- |           |           |           |           |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 1800 մ | 2) 1100 մ | 3) 2100 մ | 4) 2500 մ |
|-----------|-----------|-----------|-----------|

**157. Ո՞ւմ կողմից է թագադրվել Անտիոքոս I Երվանդունին.**

- |                |                 |
|----------------|-----------------|
| 1) Երվանդ I-ի  | 3) Տիգրան Մեծի  |
| 2) Արտաշես I-ի | 4) Արտաշես II-ի |

**158. Ո՞վ է կառուցել Գառնիի հեթանոսական տաճարը.**

- |                |               |                |              |
|----------------|---------------|----------------|--------------|
| 1) Արգիշտի I-ը | 2) Տիգրան I-ը | 3) Արտաշես I-ը | 4) Տրդատ I-ը |
|----------------|---------------|----------------|--------------|

**159. Ո՞ր տաճարն էր Գառնիի տաճարի նախորդինակը.**

- 1) Արտաշատում Անահիտի տաճարը
- 2) Թիլում Նանեի տաճարը
- 3) Արդինի-Մուսասիրում Խալդիի տաճարը
- 4) Աշտիշատում Աստղիկի տաճարը

**160. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթը.**

- |          |          |        |           |
|----------|----------|--------|-----------|
| 1) Մասիս | 2) Սիփան | 3) Սիս | 4) Արագած |
|----------|----------|--------|-----------|

**161. Որտեղից է սկիզբ առնում Արևելյան Տիգրիսը.**

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Ծովք լճից         | 3) Ծաղկանց լեռներից  |
| 2) Հայկական Տավրոսից | 4) Ծաղկավետ լեռներից |

**162. Որքան էր Փոքր Հայքի տարածքը.**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) 80 հազ. քառ. կմ  | 3) 50 հազ. քառ. կմ  |
| 2) 150 հազ. քառ. կմ | 4) 100 հազ. քառ. կմ |

**163. Ինչպես է կոչվել Արևելյան Եփրատը.**

- |             |            |         |         |
|-------------|------------|---------|---------|
| 1) Ախուրյան | 2) Արածանի | 3) Արփա | 4) Ողջի |
|-------------|------------|---------|---------|

**164. Ո՞ր արքայի օրոք է Վանի թագավորությունն ունեցել տարածքային ամենամեծ աճը.**

- |             |           |              |                |
|-------------|-----------|--------------|----------------|
| 1) Իշպուինի | 2) Մենուա | 3) Արգիշտի I | 4) Սարդուրի II |
|-------------|-----------|--------------|----------------|

**165. Երվանդունի իր արքայի օրոք Հայաստանում վերացվեց Մարաստանի գերիշխանությունը.**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Պարոյր           | 3) Երվանդ Սակավակյաց |
| 2) Տիգրան Երվանդյան | 4) Վահագն            |

**166. Որքան էր ռազմադաշտ դուրս բերվող հայոց բանակի հետևակի թիվը Հայկազուն-Երվանդականների օրոք.**

- |             |             |             |             |
|-------------|-------------|-------------|-------------|
| 1) 40 հազար | 2) 48 հազար | 3) 58 հազար | 4) 70 հազար |
|-------------|-------------|-------------|-------------|

**167. Որքան էր Տիգրան Մեծի տերությանը հպատակ թագավորությունների տարածքը.**

- |                        |                           |
|------------------------|---------------------------|
| 1) շուրջ 2 մլն քառ. կմ | 3) շուրջ 360 հազ. քառ. կմ |
| 2) շուրջ 1 մլն քառ. կմ | 4) շուրջ 400 հազ. քառ. կմ |

**168. Որքան էր Անտոնիոսի բանակի ընդհանուր կորուստը պարթևական արշավանքում.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) 44 հազար զինվոր | 3) 55 հազար զինվոր |
| 2) 20 հազար զինվոր | 4) 30 հազար զինվոր |

**169. Որտեղ էր կառուցվել Մծուրք քաղաքը.**

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Մշո դաշտում       | 3) Երզնկայի դաշտում |
| 2) Ալաշկերտի դաշտում | 4) Կարնո դաշտում    |

**170. Ո՞ր գավառում էր գտնվում Ոսխա գյուղը.**

- |          |            |             |          |
|----------|------------|-------------|----------|
| 1) Տարոն | 2) Եկեղյաց | 3) Դարանաղի | 4) Բասեն |
|----------|------------|-------------|----------|

**171. Ըստ Խորենացու՝ որտեղ է գտնվել մեհենական պատմագրության կարևորագույն արխիվը.**

- |               |                 |               |               |
|---------------|-----------------|---------------|---------------|
| 1) Աշտիշատում | 2) Անի ամրոցում | 3) Արտաշատում | 4) Բազարանում |
|---------------|-----------------|---------------|---------------|

**172. Տիգրան Մեծի կյանքի ու գործունեության մասին հայոց արքունիքում աշխատություն է գրել՝**

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Մար Աբաս Կատինան | 3) Վրույրը              |
| 2) Օղյումպը         | 4) Մեթրոդորոս Սկեփսացին |

**173. Ըստ ավանդության՝ դր տարածքի անվանումն էր կապված Աստղիկ աստվածուհու հետ.**

- |                   |                 |
|-------------------|-----------------|
| 1) Մշո դաշտ       | 3) Եփրատի հովիտ |
| 2) Արարատյան դաշտ | 4) Աղստևի հովիտ |

**174. Որտեղ էր Տիրի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.**

- |                    |                 |
|--------------------|-----------------|
| 1) Երազամույնում   | 3) Անի ամրոցում |
| 2) Բագադիճ ավանում | 4) Թիլ ավանում  |

**175. Հունարենն ու հելլենիստական մշակույթը Հայաստանում տեղ էին գտել գլխավորապես՝**

- 1) արքունիքում և գյուղական բնակչության շրջանում
- 2) արքունիքում և ավագանու շրջանում
- 3) քաղաքային և գյուղական բնակչության շրջանում
- 4) ավագանու և գյուղացիության շրջանում

**176. Ո՞վ էր հայոց դիցարանում արևի, լույսի, կրակի և արդարության աստվածը.**

- |              |            |          |         |
|--------------|------------|----------|---------|
| 1) Վանատուրը | 2) Վահագնը | 3) Միհրը | 4) Տիրը |
|--------------|------------|----------|---------|

**177. Քանի տառից էր կազմված հունական այբուբենը.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 22 | 2) 24 | 3) 26 | 4) 36 |
|-------|-------|-------|-------|

**178. Ո՞վ է վկայում նախաքրիստոնեական Հայաստանում դպրության աստված Տիրի պաշտամունքի մասին.**

- |                   |                     |
|-------------------|---------------------|
| 1) Փիլիսոստրատոսը | 3) Պլատոնը          |
| 2) Ագաթանգեղոսը   | 4) Մար Աբաս Կատինան |

**179. Ո՞ւմ հրամանով է ասորերենը հունարենին զուգահեռ կիրառվել Հայաստանում.**

- |                  |                |
|------------------|----------------|
| 1) Խոսրով Կոտակի | 3) Վռամշապուհի |
| 2) Տրդատ III-ի   | 4) Արշակ II-ի  |

**180. Ո՞ր գետի ափին էր կառուցվել Բագարան քաղաք-սրբավայրը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Մեծամոր  | 3) Արածանի  |
| 2) Ախուրյան | 4) Մեղրագետ |

**181. Ո՞վ է հիմնադրել Երվանդաշատը.**

- |              |               |
|--------------|---------------|
| 1) Երվանդ I  | 3) Երվանդ III |
| 2) Երվանդ II | 4) Երվանդ IV  |

**182. Որտեղ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.**

- 1) Արաքս և Մեծամոր գետերի միախառնման վայրում
- 2) Կուր և Արաքս գետերի ջրկիցում
- 3) Հրազդանի ափին
- 4) Արաքս և Եփրատ գետերի ջրկիցում

**183. Ինչ լեզվով է գրված Գառնիի արձանագրությունը.**

- 1) հունարեն
- 2) ասորերեն
- 3) պահլավերեն
- 4) լատիներեն

**184. Քանի սյուներով է շրջապատված Գառնիի տաճարը.**

- 1) 12
- 2) 24
- 3) 28
- 4) 34

**185. Ո՞ր երկրի թագավորի դեմ պատերազմում Արտաշեսը վերադարձրեց Տնորիքը.**

- 1) Մարաստանի
- 2) Պոնտոսի
- 3) Կորդուքի
- 4) Սելևկյան տերության

**186. Ինչ անունով է հին աշխարհում հայտնի եղել Հայաստանում աճող ծիրանը.**

- 1) արմենիկում
- 2) արմենիկա
- 3) արբիկոն
- 4) արբիկոս

**187. Ո՞ր երկրի սեպագիր արձանագրություններում է հիշատակվում Հայասա երկիրը.**

- 1) Մարաստան
- 2) Խեթական թագավորություն
- 3) Ասորեստան
- 4) Աքքադ

**188. Ո՞ր թագավորության կարևոր կենտրոններից էր Կումախան.**

- 1) Միտաննի թագավորության
- 2) Խեթական թագավորության
- 3) Արարատյան թագավորության
- 4) Հայասա թագավորության

**189. Խեթական թագավորի և Հայասայի ո՞ր արքայի միջև է կնքվել բարեկամության և փոխօգնության պայմանագիր.**

- 1) Կարանի
- 2) Արամու
- 3) Հայա
- 4) Խուկանա

**190. Ինչի՞ց էր ստացվում հռչակավոր որդան կարմիր ներկը.**

- 1) Արարատյան դաշտում աճող նռան հատիկներից
- 2) Արարատյան դաշտում աճող բույսի կարմիր արմատներից
- 3) Արարատյան դաշտում բազմացող կարմրաորդից
- 4) Արարատյան դաշտում բազմացող բզեզներից

**191. Քանի աստվածներից և քանի դիցուհիներից է կազմված Վանի թագավորության դիցարանը.**

- 1) 35 աստված, 35 դիցուհի
- 2) 38 աստված, 38 դիցուհի
- 3) 25 աստված, 25 դիցուհի
- 4) 45 աստված, 45 դիցուհի

**192. Ո՞վ էր Վանի թագավորության գլխավոր աստվածը.**

- 1) Հայան
- 2) Թեյշեբան
- 3) Շիվինին
- 4) Խալդին

193. Ո՞վ էր Խալդի աստծու կինը.

- 1) Աստղիկը                      2) Անահիտը                      3) Նանեն                      4) Արուբանին

194. Ո՞ր արձանագրությունում են թվարկված Վանի թագավորության աստվածների անունները և նրանց մատուցվող զոհաբերությունները.

- 1) Խալդի տաճարի                      3) Մհերի դռան  
2) Էրեբունի տաճարի                      4) Արդինի-Մուսասիրի տաճարի

195. Քանի՞ սեպագիր արձանագրություն է պահպանվել Վանի թագավորության շրջանից.

- 1) ավելի քան 1000                      3) ավելի քան 2000  
2) ավելի քան 1500                      4) ավելի քան 2500

196. Ո՞ր երկիրն է ասորեստանյան արձանագրություններում անվանվել «ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկիր».

- 1) Հայասան                      3) Թոգարման  
2) Նաիրին                      4) Արատտան

197. Ո՞րն է ՀՀ-ի երկրորդ բարձր լեռնագագաթը.

- 1) Արագած                      2) Թոնդուրեկ                      3) Կապուտջուղ                      4) Սիփան

198. Որքան է Սևանա լճի բարձրությունը ծովի մակերևույթից.

- 1) 1620 մ                      2) 1916 մ                      3) 1816 մ                      4) 1720 մ

199. Որքան է Ճորոխ գետի երկարությունը.

- 1) 345 կմ                      2) 453 կմ                      3) 545 կմ                      4) 565 կմ

200. Որքան է Տիգրիս գետի երկարությունը Հայաստանի մասում.

- 1) 500 կմ                      2) 1000 կմ                      3) 400 կմ                      4) 345 կմ

201. Ո՞րն է Մեծ Հայքի ամենանշանավոր աշխարհը.

- 1) Գուգարք                      2) Սյունիք                      3) Արցախ                      4) Այրարատ

202. Քանի՞ գավառ ունեին Մեծ Հայքի բոլոր նահանգները միասին.

- 1) 151                      2) 137                      3) 191                      4) 119

203. Հայկական լեռնաշխարհը հարավից եզերվում է՝

- 1) Հայկական Տավրոսի լեռնաշղթայով և Հյուսիսային Միջագետքի հարթավայրով  
2) Պոնտոսի լեռներով  
3) Կուր գետով  
4) Կասպից ծովով և Իրանական բարձրավանդակով

204. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի կենտրոնում ձգվող լեռնաշղթան.

- 1) Հայկական Տավրոս                      3) Գեղամա  
2) Հայկական պար                      4) Արցախի

**205. Ո՞ր լիճն է գտնվում Արագածի վրա.**

- 1) Քարի                      2) Յելի                      3) Պարզ                      4) Ծովք

**206. Որտեղի՞ց է սկիզբ առնում Արևելյան Եփրատը.**

- 1) Ծովք լճից                      3) Ծաղկանց լեռներից  
2) Հայկական Տավրոսից                      4) Ծաղկավետ լեռներից

**207. Ո՞ր գետին է միախառնվում Կուրը.**

- 1) Եփրատ                      2) Տիգրիս                      3) Արաքս                      4) Ճորոխ

**208. Ինչպե՞ս էր հնում կոչվում Արաքսը.**

- 1) Արածանի                      2) Ախուրյան                      3) Երասխ                      4) Հրազդան

**209. Ըստ ո՞ր աղբյուրի էր Մեծ Հայքը բաժանված 15 նահանգների.**

- 1) Մ. Խորենացու «Հայոց պատմության»                      3) Աստվածաշնչի  
2) «Աշխարհացոյց»-ի                      4) Քսենոփոնի «Անաբասիս»-ի

**210. Որտե՞ղ է գտնվում Կիլիկիան.**

- 1) Միջերկրական ծովի հարավ-արևելքում  
2) Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում  
3) Միջերկրական ծովի հյուսիս-արևմուտքում  
4) Միջերկրական ծովի հարավ-արևմուտքում

**211. Ո՞ր լեռնաշղթան է հարավից եզերում Հայկական լեռնաշխարհը.**

- 1) Հայկական Տավրոս                      3) Զանգեզուրի  
2) Հայկական պար                      4) Գեղամա

**212. Ո՞րն է հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին և ինքնուրույն լեզվաճյուղ.**

- 1) գերմաներեն                      3) պարսկերեն  
2) հայերեն                      4) ռուսերեն

**213. Որտե՞ղ է գտնվել Թորգոմա տուն կամ Թեգարամա երկիրը.**

- 1) Տիգրիսի վերին ավազանում                      3) Ճորոխի ստորին ավազանում  
2) Արաքսի ստորին ավազանում                      4) Եփրատի վերին ավազանում

**214. Ովքե՞ր են Նոյի որդիները.**

- 1) Հաբեթը, Քամը, Սեմը                      3) Թորգոմը, Սեմը, Հաբեթը  
2) Քամը, Բելը, Հայոսը                      4) Արմենոսը, Թորգոմը և Հայկը

**215. Ըստ վրացական ավանդազրույցի՝ քանի՞ որդի ուներ Թորգոմը.**

- 1) 6                      2) 8                      3) 10                      4) 14

**216. Ո՞ր արքան է Վանի թագավորությունը վերածել գերտերության.**

- 1) Սարդուրի I                      2) Մենուա                      3) Իշպուլինի                      4) Ռուսա II

217. Ո՞ր ամրոցն է հիմնադրվել Ք. ա. 782 թ.

- 1) Էրեբունի
- 2) Մենուախինիլի
- 3) Արգիշտիխինիլի
- 4) Թեյշեբահինի

218. Վանի թագավորության իր արքան է արձանագրություններում իրեն կոչում «Նաիրի երկրի արքա, մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա...».

- 1) Իշպուինի
- 2) Ռուսա III
- 3) Արամու
- 4) Սարգուրի I

219. Ինչ անունով էր հայտնի Վանի թագավորությունը ասորեստանյան արձանագրություններում.

- 1) Բիայնիլի
- 2) Ուրարտու
- 3) Հայասա
- 4) Էթինի

220. Ո՞վ է հաջորդել Մենուային.

- 1) Ռուսա I-ը
- 2) Արգիշտի I-ը
- 3) Սարգուրի II-ը
- 4) Ռուսա II-ը

221. Ուրարտական իր արքայի կողմից առաջին անգամ նվաճվեց Արդինի-Մուսասիր երկիրը.

- 1) Սարգուրի I
- 2) Իշպուինի
- 3) Ռուսա I
- 4) Սարգուրի II

222. Ինչ նպատակ էր հետապնդում Մենուայի ձեռնարկած արշավանքը Դիաուխի դեմ.

- 1) Վանի թագավորության հարավարևելյան սահմաններն ամրապնդելու
- 2) Ուրմիայի ավազանում հաստատվելու
- 3) Հայկական Տավրոսի կենտրոնական լեռնանցքներում հաստատվելու
- 4) պետության հյուսիսարևմտյան սահմաններն ամրապնդելու

223. Սարգուրի II-ի տերությունը արևելքից արևմուտք ձգվում էր՝

- 1) Սև ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան
- 2) Կասպից ծովից մինչև Պարսից ծոց
- 3) Սև ծովից մինչև Պարսից ծոց
- 4) Կասպից ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան

224. Ո՞վ էր Վանի թագավորության հստակ թվագրվող վերջին արքան.

- 1) Էրիմենա
- 2) Ռուսա II
- 3) Ռուսա III
- 4) Սարգուրի III

225. Ո՞ւմ անուններով անվանակոչեց Ռուսա I-ը Սևանա լճի ավազանում իր վերակառուցած երկու խոշոր ամրոցները.

- 1) Թեյշեբա աստծո և իր
- 2) Խալդի աստծո և իր
- 3) Խալդի և Թեյշեբա աստվածների
- 4) Սարգուրի II-ի և իր

226. Ո՞վ է հաջորդել Արգիշտի I-ին.

- 1) Արգիշտի II-ը
- 2) Սարգուրի II-ը
- 3) Ռուսա I-ը
- 4) Ռուսա II-ը

**227. Ո՞րն էր Խալդի աստծո «սրբազան քաղաքը».**

- 1) Տուշպա-Վանը
- 2) Մենուախինիին
- 3) Արդինի-Մուասիրը
- 4) Թեյշեբախին

**228. Վանի թագավորության իր արքայի օրոք ավարտվեց կուռ համակարգով կենտրոնացված պետության ստեղծման գործընթացը.**

- 1) Ռուսա I
- 2) Սարգուրի II
- 3) Արգիշտի II
- 4) Ռուսա II

**229. Վարչական առումով Վանի պետությունը բաժանված էր.**

- 1) նահանգների
- 2) մարզերի
- 3) ստրատեգիաների
- 4) սատրապությունների

**230. Ուրարտական զինված ուժերի կորիզը կազմում էր.**

- 1) ժողովրդական աշխարհագորը
- 2) արքունի մշտական զորաբանակը
- 3) թիկնապահ հեծելազորը
- 4) թեթևազեն հետևակը

**231. Ո՞ւմ գլխավորությամբ էր վերականգնվել Հայկազունների ավագ ճյուղի իշխանությունը.**

- 1) Պարույրի
- 2) Արամի
- 3) Երվանդի
- 4) Սկայորդու

**232. Ո՞ւմ քույրն էր Մարաստանի արքա Աժդահակի կինը.**

- 1) Երվանդ II-ի
- 2) Երվանդ Սակավակյացի
- 3) Տիգրան Երվանդյանի
- 4) Վահագնի

**233. Աքեմենյան տերության իր սատրապությունն էր կազմում Հայաստանը.**

- 1) XII
- 2) IX
- 3) XIII
- 4) XVII

**234. Ո՞վ է «Անաբասիս» աշխատության հեղինակը.**

- 1) Ստրաբոնը
- 2) Դիոն Կասիոսը
- 3) Հերոդոտոսը
- 4) Քսենոփոնը

**235. Ո՞վ էր ապաստան տվել Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդիներին.**

- 1) Պարույր Նահապետը
- 2) Սկայորդին
- 3) Տիգրան Երվանդյանը
- 4) Երվանդ Սակավակյացը

**236. Ո՞ր երկրի թագավորի կողմից է թագադրվել Պարույր Նահապետը.**

- 1) Բաբելոնի
- 2) Ասորեստանի
- 3) Մարաստանի
- 4) Աքեմենյան տերության

**237. Ո՞ր պատմիչն էր վկայում Տիգրան I-ի և Կյուրոս Մեծի մտերիմ հարաբերությունների մասին.**

- 1) Պլուտարքոսը
- 2) Մովսես Խորենացին
- 3) Քսենոփոնը
- 4) Դիոն Կասիոսը

**238. Ո՞վ է հաջորդել Տիգրան Երվանդյանին.**

- 1) Արամը
- 2) Վահագնը
- 3) Տիրիբազը
- 4) Երվանդ II-ը



**239. Քանի արշավանք է ձեռնարկվել Դարեհ I-ի օրոք Հայաստանում բռնկված ապստամբությունը ճնշելու համար.**

- 1) 2                                2) 3                                3) 5                                4) 8

**240. Ո՞վ էր Դարեհ I-ի կողմից Հայաստան ուղարկված հայազգի զորավարը.**

- 1) Դադարշիշը                                3) Քսենոփոնը  
2) Վահումիսան                                4) Միթրաուստեսը

**241. Ո՞վ էր Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը, որը ենթարկվում էր Երվանդ II-ին.**

- 1) Տիգրան I-ը                                3) Միթրաուստեսը  
2) Տիրիբազը                                4) Զարեհը

**242. Ո՞րն էր Մեծ Հայքի Հայկազուն-Երվանդականների վերջին մայրաքաղաքը.**

- 1) Վան                                3) Երվանդակերտ  
2) Բագարան                                4) Երվանդաշատ

**243. Ո՞րն էր Ալեքսանդր Մակեդոնացու տերության մայրաքաղաքը.**

- 1) Նինվեն                                3) Բաբելոնը  
2) Կարքեմիշը                                4) Ալեքսանդրիան

**244. Ինչ են անվանել Արտաշատը հունահռոմեական պատմիչները.**

- 1) «Հայկական Աթենք»                                3) «Հայկական Հռոմ»  
2) «Հայկական Անտիոք»                                4) «Հայկական Կարթագեն»

**245. Արտաշես I-ը քանի գավառների բաժանեց երկիրը.**

- 1) 191                                2) 190                                3) 160                                4) 120

**246. Ո՞վ էր Մեծ Հայքում Սելևկյանների կողմից նշանակված հայազգի կառավարիչը.**

- 1) Արտաշեսը                                2) Զարեհը                                3) Երվանդը                                4) Տիգրանը

**247. Ո՞ւմ միջև է մղվել Մագնեսիայի ճակատամարտը.**

- 1) Ասորեստանի ու Հայաստանի  
2) Հայաստանի ու Հռոմի  
3) Սելևկյան տերության ու Հռոմի  
4) Հայաստանի ու Սելևկյան տերության

**248. Հյուսիսում Արտաշես I-ը դր երկրամասն է միացրել Մեծ Հայքին.**

- 1) Փայտակարանը և Կասպեից երկիրը                                3) Գուգարքը  
2) Կարնո երկիրը, Եկեղիք ու Դերջան գավառները                                4) Տնորիքը

**249. Ո՞վ էր Սելևկյանների դեմ ապստամբած Մարաստանի սատրապը.**

- 1) Տիրիբազը                                3) Մանկայոսը  
2) Տիմարքոսը                                4) Զենոնը

**250. Բացի Արտաշատից՝ ուրիշ ինչ քաղաքներ է կառուցել Արտաշես I-ը.**

- |                        |                          |
|------------------------|--------------------------|
| 1) Զարեհավան և Արմավիր | 3) Զարեհավան ու Զարիշատ  |
| 2) Աշտարակ ու Զարիշատ  | 4) Երվանդակերտ և Բագարան |

**251. Որո՞նք էին արքունիքի կարևոր գործակալությունները Արտաշես I-ի ժամանակ.**

- 1) թագադիր ասպետություն և սպարապետություն
- 2) հազարապետություն և սպարապետություն
- 3) սպարապետություն և մարդպետություն
- 4) հազարապետություն և թիկնապահություն

**252. Ո՞ր երկրի թագավորի դեմ պատերազմում Արտաշեսը վերադարձրեց Տմորիքը.**

- |            |                       |
|------------|-----------------------|
| 1) Վիրքի   | 3) Բյութանիայի        |
| 2) Աղվանքի | 4) Սելևկյան տերության |

**253. Ո՞րն էր փոխարքա-կառավարիչ Բագարատի նստավայրը.**

- |          |           |           |          |
|----------|-----------|-----------|----------|
| 1) Ադանա | 2) Անտիոք | 3) Տարսոն | 4) Մծբին |
|----------|-----------|-----------|----------|

**254. Ո՞ւմ էր Հյուսիսային Միջագետքում փոխարքա նշանակել Տիգրան Մեծը.**

- |             |                |
|-------------|----------------|
| 1) Գողերձին | 3) Մեիրուժանին |
| 2) Գուրասին | 4) Բագարատին   |

**255. Որքան էր մայրաքաղաք Տիգրանակերտի բնակչության թիվը.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) շուրջ 100 հազար | 3) շուրջ 120 հազար |
| 2) շուրջ 150 հազար | 4) շուրջ 80 հազար  |

**256. Որտե՞ղ էր «70 հովիտներ» կոչվող տարածքը.**

- |                              |                                  |
|------------------------------|----------------------------------|
| 1) Փոքր Հայքի արևելքում      | 3) Ծովքի հյուսիս-արևելքում       |
| 2) Մեծ Հայքի հարավ-արևելքում | 4) Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում |

**257. Ո՞րն էր Ասորիքի մայրաքաղաքը.**

- |               |              |
|---------------|--------------|
| 1) Պտղոմայիսը | 3) Փրասասյան |
| 2) Անտիոքը    | 4) Էկբատանը  |

**258. Ըստ հույն պատմիչի՝ քանի լեզվով էին խոսում Տիգրան II-ի տերությունում.**

- |                |           |
|----------------|-----------|
| 1) 30-ից ավելի | 3) մոտ 25 |
| 2) 15-ից ավելի | 4) 10     |

**259. Որո՞նք էին Տիգրան II-ի տերության մեջ մտնող բուն հայկական հողերը.**

- |                        |                              |
|------------------------|------------------------------|
| 1) Մեծ Հայք, Փոքր Հայք | 3) Մեծ Հայք և Կոմմագենե      |
| 2) Մեծ Հայք և Պոնտոս   | 4) Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծովք |

**260. Կիլիկիայի քանի քաղաքների բնակիչներին էր Տիգրան II-ը բռնագաղթեցրել Հայաստան.**

- |       |       |       |       |
|-------|-------|-------|-------|
| 1) 10 | 2) 12 | 3) 14 | 4) 16 |
|-------|-------|-------|-------|

261. Ո՞ր պատմիչն է վկայել, որ Տիգրանակերտում եղել է թատրոն.

- 1) Տակիտոսը
- 2) Պոլիբիոսը
- 3) Պլուտարքոսը
- 4) Դիոն Կասիոսը

262. Որտեղ էր Տիգրան II-ը հռոմեական բանակի՝ Հայաստան ներխուժման պահին.

- 1) Արմավիրում
- 2) Վանում
- 3) Արտաշատում
- 4) Անտիոքում

263. Ո՞ւմ գլխավորությամբ է Տիգրան II-ը զորաջոկատ ուղարկել Լուկուլլոսի դեմ՝ մինչև հայոց զորքը կհասնե՞ր Հայաստան.

- 1) Մանկայոսի
- 2) Զարեհի
- 3) Մեիրուծանի
- 4) Տիգրան Կրտսերի

264. Որքան էր հռոմեական բանակի թիվը դաշնակցային զորամասերի հետ միասին Տիգրանակերտի ճակատամարտի նախօրյակին.

- 1) շուրջ 50 հազար
- 2) շուրջ 55 հազար
- 3) շուրջ 70 հազար
- 4) շուրջ 75 հազար

265. Որքան էր Անտոնիոսի տրամադրության տակ եղած բանակի թիվը պարթևական արշավանքի սկզբին.

- 1) 80 հազար
- 2) 50 հազար
- 3) 100 հազար
- 4) 120 հազար

266. Որքան զինվոր էր Անտոնիոսին տրամադրել Արտավազդ II-ը.

- 1) 13 հազար
- 2) 16 հազար
- 3) 24 հազար
- 4) 40 հազար

267. Որքան էր Կրասոսի հրամանատարությամբ Ասորիք ժամանած հռոմեական բանակի թիվը.

- 1) 100 հազար
- 2) 80 հազար
- 3) 60 հազար
- 4) 50 հազար

268. Արտավազդ II-ը որքան զորք էր խոստացել տրամադրել Կրասոսին.

- 1) 33 հազար
- 2) 40 հազար
- 3) 20 հազար
- 4) 13 հազար

269. Ո՞վ էր պարթև զորահրամանատարը Խառանի ճակատամարտում.

- 1) Վասակը
- 2) Ատրվշնասպը
- 3) Սուրենը
- 4) Բակուրը

270. Ո՞վ է «Բաքոսուհիներ» ողբերգության հեղինակը.

- 1) Վերգիլիոսը
- 2) Էվրիպիդեսը
- 3) Տակիտոսը
- 4) Արտավազդ II-ը

271. Արտաշես II-ը ի՞նչ թագավորությունն է միացրել Հայոց թագավորությանը.

- 1) Կապադովկիան
- 2) Ատրպատականը
- 3) Ծոփքը
- 4) Կոմմագենեն

**272. Ատրպատականում ո՞վ էր Հռոմի կողմից թագավոր կարգված կամակատարը.**

- |                   |                |
|-------------------|----------------|
| 1) Արտավազդ III-ը | 3) Արտանեսը    |
| 2) Արիոբարզանեսը  | 4) Տիգրան IV-ը |

**273. Ո՞վ է գահընկեց արել Տիգրան IV-ին.**

- |                     |                   |
|---------------------|-------------------|
| 1) Պոմպեոսը         | 3) Գայոս Կեսարը   |
| 2) Մարկոս Անտոնիոսը | 4) Հուլիոս Կեսարը |

**274. Ո՞ւմ է պարթև արքա Վաղարշ I-ը գահ բարձրացրել Ատրպատականում.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Վոնոնին  | 3) Տրդատին   |
| 2) Բակուրին | 4) Փարսմանին |

**275. Որտե՞ղ էր Սանատրուկ արքայի գերեզմանը.**

- |                       |                          |
|-----------------------|--------------------------|
| 1) Շիրակի Անի բերդում | 3) Անգեղ բերդում         |
| 2) Աշտիշատում         | 4) Դարանաղիի Անի բերդում |

**276. Թվարկված հայոց թագավորներից ո՞վ է հաղթել օլիմպիական խաղերում.**

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Տրդատ I   | 3) Խոսրով I |
| 2) Տրդատ III | 4) Տրդատ II |

**277. Նախապես ինչի՞ հետ էր կապված Արայի պաշտամունքը.**

- 1) երկրագործության, ցանքի և գարնան աճող բուսականության
- 2) երկրագործության, արհեստի և անասնապահության
- 3) արհեստի, ցանքի և գարնան աճող բուսականության
- 4) արհեստի, անասնապահության և գարնան աճող բուսականության

**278. Ո՞րն էր դաշնակից զորքերի՝ դեպի Կարբեմիշ արշավելու նպատակը.**

- 1) Միջագետքը գրավելը
- 2) Նինվեն գրավելը
- 3) Բաբելոնը գրավելը
- 4) Ասորեստանը վերջնականապես կործանելը

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

---

**1. Հայոց իր արքան է ասել հետևյալ խոսքերը.**

*«Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներիս ազատություն թողնեմ»:*

- |                       |            |
|-----------------------|------------|
| 1) Տիգրան Երվանդյանը  | 3) Պարոյրը |
| 2) Երվանդ Սակավակյացը | 4) Վահագնը |

**2. Ո՞ր արքայի մասին է պատմիչի ստորև բերվող վկայությունը.**

*«Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ ... և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:*

- |                        |                         |
|------------------------|-------------------------|
| 1) Երվանդ Սակավակյացի  | 3) Տրդատ III Արշակունու |
| 2) Տիգրան I Երվանդյանի | 4) Արտաշես I-ի          |

**3. Ո՞ր արքային են վերագրվում հետևյալ խոսքերը.**

*«Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը փապալելու... և մեր բնակության սահմաններն հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:*

- |                         |                   |
|-------------------------|-------------------|
| 1) Տիգրան I Երվանդյանին | 3) Երվանդ III-ին  |
| 2) Երվանդ Սակավակյացին  | 4) Արտավազդ II-ին |

**4. Ո՞ր արքայի մասին է հույն պատմագիր Պոլիբիոսի ստորև բերվող արտահայտությունը.**

*«Արմենիայի մեծագույն մասի փիրակալ»:*

- |                      |                |
|----------------------|----------------|
| 1) Պարոյրի           | 3) Տիգրան II-ի |
| 2) Տիգրան Երվանդյանի | 4) Արտաշես I-ի |

**5. Ո՞վ է ստորև բերվող վկայության հեղինակը.**

*«Արտաշեսը գնում է այն փետը, որփետը [գեփետը] խառնվում են, և այնփետ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»:*

- |                |              |
|----------------|--------------|
| 1) Պլուտարքոսը | 3) Խորենացին |
| 2) Պոլիբիոսը   | 4) Ստրաբոնը  |

**6. Տիգրան Մեծը հռոմեացի իր զորավարի ուղարկած դեսպանին է տվել հետևյալ պատասխանը.**

*«Ես Միհրդատին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա... հակահարված կդրամ նրանց»:*

- |             |                |
|-------------|----------------|
| 1) Սուլլայի | 3) Լուկուլլոսի |
| 2) Պոմպեոսի | 4) Կրասոսի     |

**7. Հայոց դր մայրաքաղաքի մասին են հույն պատմիչի ստորև բերվող տողերը.**

«Նոր մայրաքաղաքը բնակեցնելու համար ... այսօրեղ հրավիրում է հայերից լավագույններին և սպառնում է բռնազանձել այն ամենը, որ իրենց հետ ... չէին փանելու»:

- 1) Արտաշատ
- 2) Տիգրանակերտ
- 3) Երվանդաշատ
- 4) Դվին

**8. Հայոց դր արքայի մահվանից հետո է Հայաստանում տիրող իրավիճակն այսպես պատկերավոր բնորոշել հռոմեացի պատմիչը.**

«Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:

- 1) Տիգրան Մեծի
- 2) Արտաշես I-ի
- 3) Տիգրան IV-ի
- 4) Արտավազդ II-ի

**9. Հայոց դր արքայի մասին է հույն պատմիչի հետևյալ բնութագրումը.**

«Հայոց թագավոր [.....-ը] ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:

- 1) Տրդատ II-ի
- 2) Վաղարշ I-ի
- 3) Սանատրուկի
- 4) Տրդատ I-ի

**10. Հայոց դր արքայի մասին են պատմիչի հետևյալ խոսքերը.**

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:

- 1) Վաղարշ II-ի
- 2) Տրդատ II-ի
- 3) Տրդատ III-ի
- 4) Խոսրով II-ի

**11. Ստորև բերված հատվածում դր քաղաքի անունն է բաց թողնված.**

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը, ..... քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:

- 1) Արտաշատ
- 2) Վաղարշապատ
- 3) Դվին
- 4) Արմավիր

**12. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

- 1) Պլուտարքոսը
- 2) Ապպիանոսը
- 3) Դիոն Կասիոսը
- 4) Ստրաբոնը

**13. Հայոց ո՞ր արքայի կառուցած քաղաքի մասին է պատմիչի խոսքը.**

*«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:*

- 1) Վաղարշ I-ի
- 2) Արտաշես I-ի
- 3) Երվանդ IV-ի
- 4) Տիգրան Մեծ-ի

**14. Ո՞ր քաղաքի մասին են հետևյալ խոսքերը.**

*«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:*

- 1) Արտաշատ
- 2) Տիգրանակերտ
- 3) Մծուրք
- 4) Դվին

**15. Ո՞ւմ խոսքերն են. «Գրիգոր Լուսավորիչը «տղայության հասակում» Հայաստանում սովորել է հայոց գիրն ու լեզուն».**

- 1) Բարդաճանի
- 2) Ագաթանգեղոսի
- 3) Գևորգ Ասորու
- 4) Մար Աբաս Կատինայի

**16. Ե՞րբ է տեղի ունեցել ստորև նկարագրված ճակատամարտը:**

*«Հայերը, նեպահարելով հռոմեացիներին, շարերին իսկույն սպանեցին, իսկ շար շարերին էլ վիրավորեցին:*

*...Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շարերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:*

- 1) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին
- 2) Ք. ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին
- 3) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին
- 4) Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22-ին

**17. Ո՞ւմ գահակալման հետ կապված է հռոմեական պատմիչը նշել, թե «...Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր են պատճառել հայերը»:**

- 1) Տիգրան II-ի
- 2) Տիգրան IV-ի
- 3) Արտավազդ III-ի
- 4) Արտաշես II-ի

**18. Ո՞վ է ստորև բերված վկայության հեղինակը.**

*«Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով... , և ուստի այսպետեղ բոլորը միալեզու են»:*

- 1) Պոլիբիոսը
- 2) Պլուտարքոսը
- 3) Ստրաբոնը
- 4) Խորենացին

**19. Ո՞վ է ստորև բերված վկայության հեղինակը.**

*«Արդաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ագարակների սահմանները..., կոփել է Կրկել քառակուսի քարեր և փնկել հողի մեջ»:*

- |                |              |
|----------------|--------------|
| 1) Պոլիբիոսը   | 3) Ստրաբոնը  |
| 2) Պլուտարքոսը | 4) Խորենացին |

**20. Ո՞ւմ անունն է բաց թողնված բերված հատվածում.**

*«Ես .....-ին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա... հակահարված կփամ նրանց»:*

- |             |               |
|-------------|---------------|
| 1) Տիգրանի  | 3) Մեհրուժանի |
| 2) Միհրդատի | 4) Արտավազդի  |

**21. Ո՞ր ճակատամարտի մասին են հետևյալ խոսքերը.**

*«Հայերը, ներսահարելով հռոմեացիներին, շարերին իսկույն սպանեցին, իսկ շար շարերին էլ վիրավորեցին:*

*Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շարերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:*

- |                 |             |
|-----------------|-------------|
| 1) Տիգրանակերտի | 3) Արածանիի |
| 2) Հռանդեայի    | 4) Խառանի   |

**22. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

*«Հայոց թագավոր [.....-ը] ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:*

- |             |                 |
|-------------|-----------------|
| 1) Արիանոսը | 3) Դիոն Կասիոսը |
| 2) Տակիտոսը | 4) Պլուտարքոսը  |

**23. Ո՞ւմ դեմ կատարած արշավանքից էր վերադարձել հայոց արքան.**

*«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շար ավարով ու ցնձալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շար ավարով»:*

- |                          |                 |
|--------------------------|-----------------|
| 1) Հռոմեական կայսրության | 3) Կապադովկիայի |
| 2) Կովկասի լեռնականների  | 4) Պարսկաստանի  |



**24. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

*«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնձալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:*

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Տակիտոսը         | 3) Փավստոս Բուզանդը |
| 2) Մովսես Խորենացին | 4) Արիանոսը         |

**25. Հայոց ո՞ր մայրաքաղաքի կառուցման մասին է պատմիչի խոսքը.**

*«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:*

- |               |                |
|---------------|----------------|
| 1) Արտաշատ    | 3) Տիգրանակերտ |
| 2) Երվանդաշատ | 4) Վաղարշապատ  |

**26. Ո՞ր պատմիչի խոսքերն են.**

*«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:*

- |              |                |
|--------------|----------------|
| 1) Ամմիանոսի | 3) Ապպիանոսի   |
| 2) Տակիտոսի  | 4) Պլուտարքոսի |

**27. Ո՞ր արքայի անունն է բաց թողնված ստորև բերված հատվածում.**

*«..... գնում է այն տեղը, որտեղ ..... և.....-ը խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում .....»:*

- |                |                  |
|----------------|------------------|
| 1) Տիգրան II-ի | 3) Խոսրով Կոտակի |
| 2) Արտաշես I-ի | 4) Վաղարշ I-ի    |

**28. Ո՞ր մայրաքաղաքի կառուցման մասին են մեջբերված խոսքերը.**

*«Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:*

- |                |               |
|----------------|---------------|
| 1) Արտաշատ     | 3) Մծուրք     |
| 2) Տիգրանակերտ | 4) Վաղարշապատ |

**29. Հայոց ո՞ր արքայի կառուցած մայրաքաղաքի մասին են մեջբերված խոսքերը.**

*«Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:*

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Վաղարշ I  | 3) Տիգրան II |
| 2) Երվանդ IV | 4) Արտաշես I |

## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ինչ էր կոչվում Մեծ Հայքի 15 խոշոր վարչական միավորներից յուրաքանչյուրը.**
  - 1) նահանգ կամ մարզ
  - 2) մարզ կամ գավառ
  - 3) նահանգ կամ աշխարհ
  - 4) գավառ կամ աշխարհ
2. **Ուրարտուում թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին՝**
  - 1) արքայի «խորհրդականներ»
  - 2) արքայի «փոխանորդներ»
  - 3) արքայի «գործակալներ»
  - 4) արքայի «կառավարիչներ»
3. **Ինչ էր կոչվում Աքեմենյան տերության 20 մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը.**
  - 1) աշխարհ
  - 2) նահանգ
  - 3) ստրատեգիա
  - 4) սատրապություն
4. **Ինչ էր կոչվում Հայաստանի կառավարիչն Աքեմենյան տիրապետության օրոք.**
  - 1) սատրապ
  - 2) մարզպան
  - 3) ստրատեգոս
  - 4) հյուպարքոս
5. **Ինչ տիտղոս էին կրում Հայկազուն–Երվանդական արքաները Ք. ա. VII–VI դդ.**
  - 1) «Մեծ Հայքի թագավոր»
  - 2) «Հայոց թագավոր»
  - 3) «Վանի թագավոր»
  - 4) «Թագավորների թագավոր»
6. **Ինչպե՞ս է կոչվում այն լեզվաընտանիքը, որին պատկանում է հայերենը.**
  - 1) ասիական
  - 2) եվրոպական
  - 3) սեմական
  - 4) հնդեվրոպական
7. **Հունահռոմեական հեղինակներն ինչ էին անվանում Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորները.**
  - 1) գավառ
  - 2) ստրատեգիա
  - 3) պրովինցիա
  - 4) սատրապություն
8. **Ինչ էին կոչվում զրադաշտական կրոնի սպասավորները.**
  - 1) քահանա
  - 2) մոզ
  - 3) քուրմ
  - 4) երեց
9. **Ինչ է հելլենիզմը.**
  - 1) հունականացում
  - 2) հունականություն
  - 3) հունապաշտություն
  - 4) հունասիրություն
10. **Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին.**
  - 1) Եվրոպայի ասիացիներ
  - 2) Արևմուտքի ասիացիներ
  - 3) Ասիայի եվրոպացիներ
  - 4) Փոքր Ասիայի եվրոպացիներ

- 11. Ինչպե՞ս էր կոչվում հայկական հելլենիզմի առաջին փուլը.**
- 1) վաղ հելլենիստական ժամանակաշրջան
  - 2) նախնական հելլենիստական ժամանակաշրջան
  - 3) բուն հելլենիստական ժամանակաշրջան
  - 4) ուշ հելլենիստական ժամանակաշրջան
- 12. Անահիտ դիցամոր պաշտամունքի շնորհիվ ի՞նչ անունով էր հայտնի Եկեղյաց գավառը.**
- 1) Դիցամոր գավառ
  - 2) Ոսկեղենիկ գավառ
  - 3) Անահտական
  - 4) Պտղաբերության գավառ
- 13. Ք. ա. IX դ. 30–ական թվականներին Հայկական լեռնաշխարհում ստեղծված խոշոր պետական կազմավորումները կոչվում էին՝**
- 1) համադաշնություններ
  - 2) միասնական թագավորություններ
  - 3) դաշնություններ
  - 4) բղեշխություններ
- 14. Վանի թագավորության ամենաընդարձակ տարածքի մասին վկայող սկզբնաղբյուրը կոչվում է՝**
- 1) Սարդուրյան տարեգրություն
  - 2) Միերի դուռ
  - 3) Խալդյան դարպաս
  - 4) Բեհիսթունյան արձանագրություն
- 15. Ք. ա. I դարի սկզբին Հռոմն իր պետական կառուցվածքով ինչպիսի՞ պետություն էր.**
- 1) միապետություն
  - 2) եռապետություն
  - 3) հանրապետություն
  - 4) կայսրություն
- 16. Ո՞ր լեզուն էր կոչվում պահլավերեն.**
- 1) պահլավունիների լեզուն
  - 2) հին պարսկերենը
  - 3) էլամերենը
  - 4) միջին պարսկերենը
- 17. Նոր ժամանակների գիտության մեջ ժողովուրդների ու լեզուների առաջացման հարցերով զբաղվող բնագավառը կոչվում է՝**
- 1) համեմատական փիլիսոփայություն
  - 2) լեզվաբանական պատմագրություն
  - 3) համեմատական լեզվաբանություն
  - 4) համեմատական հնագիտություն
- 18. Մայր ժողովուրդների զբաղեցրած տարածքները կոչվել են՝**
- 1) հայրենիք
  - 2) նախահայրենիք
  - 3) հայրենական
  - 4) պարզևականք
- 19. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**
- 1) Հայկազուն–Երվանդականների օրոք հիշատակվող գործակալների անվանումներից են արքունի–հացարարները, զորավար–սպարապետները, դպիրները, մատովակները:
  - 2) Աքեմենյան տերության տարածքում ստեղծված վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

- 3) Արտաշես I արքան կրում էր «Բարեպաշտ», «Բարի», «Աշխարհակալ» տիտղոսներ:
- 4) Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «տիեզերակալ», «գավառակալ» անունով գործակալություններ:
- 5) Անտիոքոս I Երվանդականի թագը հայտնի է «Արտաշեսյան» կամ «Հայկյան» անունով:

**20. Ինչ տիպի պետություն էր Վանի թագավորությունը Ք. ա. VII դարում.**

- 1) կախյալ կամ դաշնակից թագավորություններից կազմված համադաշնություն
- 2) կենտրոնացված պետություն
- 3) մի քանի հիմնական կենտրոններ ունեցող դաշնություն
- 4) մանր պետական կազմավորումներից բաղկացած միություն
- 5) հինարևելյան տիպի բացարձակ միապետություն

**21. Ռուսա I-ի օրոք իրականացված բարեփոխումների շնորհիվ բանակում ստեղծված նոր կազմավորումները կոչվում էին՝**

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1) հետևազոր        | 4) մարզային զորքեր    |
| 2) արքայական գունդ | 5) մաղխազական այրուձի |
| 3) աշխարհազոր      |                       |

**22. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Արշակունիները թագադրվել են «Տիգրանյան» կամ «Հայկյան» թագով:
- 2) Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:
- 3) Տիգրան Մեծի կրտսեր եղբայր Գուրասի պաշտոնն էր Հյուսիսային Միջագետքի փոխարքա:
- 4) Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը միմյանց հետ կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:
- 5) Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես I-ի ստեղծած չորս միավորները կոչվում էին մարզ:

**23. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Աքեմենյան տերությունում ստեղծված վարչական մեծ միավորները կոչվում էին սատրապություն:
- 2) Հայկազուն-Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքան հայտնի էր «Հայոց թագավոր» տիտղոսով:
- 3) Դարեհ I-ի թողած եռալեզու արձանագրությունը հայտնի է «Հարմինույա» անունով:
- 4) Ք. ա. IV–II դարերում Հայաստանի թագավորը կրում էր «Տիեզերակալ արքա» տիտղոսը:
- 5) Հայկազուն-Երվանդունիների թագավորության հռչակումով Հայաստանի տարածքում ստեղծվեցին երկու պետություններ, որոնք կոչվեցին Մեծ Հայք և Աղվանք:

**24. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայաստանում I դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:
- 2) Հայ պատմիչների վկայած՝ 22 տառերից բաղկացած հայերեն նշանագրերը հայտնի են «արամեական» անունով:
- 3) Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները և Հայկական լեռնաշխարհն ընդգրկող տարածքը հայտնի է «հնդեվրոպական նախահայրենիք» անունով:
- 4) Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
- 5) Մեծ Հայքի 15 խոշոր վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր նահանգ կամ մարզ:
- 6) Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին Ասիայի եվրոպացիներ:

**25. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Խեթերեն արձանագրություններում հիշատակվող Հայասա անվանումը նշանակում է Հայք, Հայաստան:
- 2) Արտաշեսյանների գահակալության ամբողջ ժամանակաշրջանում Մեծ Հայքի արքայի կրած տիտղոսը կոչվում էր «Արքայից արքա»:
- 3) Որոշ ուսումնասիրողների կարծիքով Աստղիկը եղել է նաև ռազմի դիցուհի:
- 4) Արգիշտի I-ի զորքերը շարունակել են հաղթարշավը դեպի Ալիշտու, այսինքն՝ Ալաշկերտի հովիտ:
- 5) Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:
- 6) Արտաշատը Տիգրանակերտին և Անտիոքին կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:

**26. Ընտրել պատմական տերմինների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայասա՝ խեթերեն նշանակում է մեծ երկիր:
- 2) Ուրարտուն Արարատ անվան ասորեստանյան տարբերակն է:
- 3) Թեգարամա երկիրն այդպես է կոչվել Արամ նահապետի հոր՝ Թորգոմի անունից:
- 4) Հունական ավանդության համաձայն՝ Հայաստանի Արմենիա անվանումն առաջացել է արգոնավորդ Յասոնի անունից:
- 5) Տուշպա անունը համարժեք է արդի հայերենի Տոսպ անվանը:

**27. Խալդյան դարպասը հետագայում ինչ է կոչել ժողովուրդը.**

- |                |                  |
|----------------|------------------|
| 1) Խալդիի դուռ | 3) Մենուայի դուռ |
| 2) Միերի դուռ  | 4) Սրբազան մուտք |

**28. Ինչ է նշանակում «Անաբասիս».**

- |                          |                                |
|--------------------------|--------------------------------|
| 1) «Քսան հազարի նահանջը» | 3) «Հույն վարձկանների նահանջը» |
| 2) «Տասը հազարի նահանջը» | 4) «Մեծ մարդկանց մասին»        |

**29. Ինչ էր կոչվում Հայաստանի արևմտյան մասի կառավարիչն Աքեմենյան տիրապետության օրոք.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) սատրապ  | 3) ստրատեգոս  |
| 2) մարզպան | 4) հյուպարքոս |

**30. Հունահռոմեական հեղինակներն ինչ էին անվանում Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորների կառավարիչներին.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) սատրապ     | 3) ստրատեգոս  |
| 2) հյուպարքոս | 4) աշխարհակալ |

**31. Ինչպե՞ս էր կոչվում հայկական հելլենիզմի երկրորդ փուլը.**

- |                    |                  |
|--------------------|------------------|
| 1) միջին հելլենիզմ | 3) վաղ հելլենիզմ |
| 2) ուշ հելլենիզմ   | 4) նոր հելլենիզմ |

**32. Ո՞վ էր Վահագնը հայոց դիցարանում.**

- 1) գիտության ու արվեստների հովանավորը
- 2) ռազմի, քաջության, ամպրոպի աստվածը
- 3) արևի, լուսի, կրակի և արդարության աստվածը
- 4) դպրության աստվածը

**33. Ո՞վ էր Աստղիկը հայոց դիցարանում.**

- 1) երկնային լուսի, սիրո և գեղեցկության դիցուհին
- 2) պտղաբերության ու մայրության դիցուհին
- 3) ռազմի աստվածուհին
- 4) հյուրասիրության աստվածուհին

**34. Ո՞վ էր Նանե դիցուհին հայկական դիցարանում.**

- 1) ընտանիքի հովանավորը
- 2) մայրության և պտղաբերության աստվածուհին
- 3) գիտության և արվեստի հովանավորը
- 4) հյուրընկալության աստվածուհին

**35. Ո՞վ էր Տիրը հայկական դիցարանում.**

- 1) դպրության աստվածը
- 2) հյուրընկալության աստվածը
- 3) արևի աստվածը
- 4) ռազմի աստվածը

### 36. Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) «Սահմանապահ կուսակալ»-ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:
- 2) Արարատյան կամ Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
- 3) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
- 4) Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանվում էր առանձին նահանգների, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից:
- 5) «Արքունի հացատար»-ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:

## 5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

### 1. Գտնել, թե թվարկածներից որոնք են Արտաշես I-ի հողային բարեփոխման իրականացման պատճառներից.

- ա. Համայնական հողերը զավթելով՝ գյուղացիներին զրկել գոյության հիմնական միջոցից և նրանց ստիպել անդամագրվել վարձու բանակին
  - բ. Ագարակատերերին իր կողմը գրավելու և արքունիքի սոցիալական հենարանն ուժեղացնելու նպատակը
  - գ. Թույլ չտալ հողազավթումներ, որովհետև վերջիններիս արդյունքում հողազրկված գյուղացին շահագրգռված չէր զինվորագրվելու բանակին
  - դ. Թույլ չտալ հողազավթումներ, որովհետև վերջիններիս արդյունքում հողազրկված գյուղացին այլևս չէր կարողանում հարկ վճարել պետությանը
  - ե. Խոշոր ագարակատերերի պահանջը և հողահարկի քանակը ճշգրտելու նպատակը
- 1) ա, դ                      2) բ, գ                      3) գ, դ                      4) դ, ե

### 2. Ինչ նպատակ էր հետապնդում Արտաշես I-ի կողմից անցկացված հողային բարեփոխումը.

- 1) կարգավորել հողի սեփականության խնդիրները՝ արգելելով ավագանուն (ագարակների սեփականատերերին) յուրացնել գյուղացի-համայնականների հողերը
- 2) վերացնել համայնքային սեփականությունը
- 3) գյուղացի-համայնականների հողերը կրկնապատկել
- 4) վերացնել ավագանու հողատիրական իրավունքը

### 3. Գտնել սխալ պատասխանը.

*Ինչ հեղևանք ունեցան Տիգրան Մեծի նվաճումները.*

- 1) Հայկական պետության սահմանները հասան Եգիպտոս:
- 2) Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը տարածաշրջանում իրենց դիրքերը զիջեցին Հայաստանին:
- 3) Տիգրան Մեծը դարձավ Առաջավոր Ասիայի մեծագույն մասի տիրակալ:
- 4) Հայաստանն ամրապնդվեց Միջերկրական ծովի արևմտյան ափերին:

### 4. Թվարկվածներից որոնք են Ք. ա. 69 թ. ծագած հայ-հռոմեական պատերազմի պատճառներ.

- ա. Հզոր Հայաստանն իր գոյությամբ խոչընդոտում էր դեպի Արևելք ծավալվելու նկրտումներ ունեցող Հռոմեական պետությանը:
- բ. Հռոմի անմիջական ծրագրերի մեջ էր մտնում Փոքր Ասիայի գրավումը, որն ամբողջությամբ ռազմակալել էր Տիգրան Մեծը:
- գ. Հռոմը չէր կարող հաշտվել այն իրողության հետ, որ Հայոց տերությունը դուրս էր եկել Միջերկրական ծով և ընդհուպ մոտեցել Եգիպտոսի սահմաններին:



դ. Հայ-հռոմեական ուղղափառական բախմանը նպաստեց նաև այն, որ Տիգրանը և Միհրդատ Եվպատորը այլևս դաշնակիցներ չէին:

ե. Հռոմի անմիջական ծրագրերի մեջ էր մտնում Փոքր Հայքի զավթումը, որտեղ գերիշխանություն էր հաստատել Հրահատ III-ը:

- 1) ա, գ                                      2) գ, դ                                      3) ա, դ                                      4) բ, ե

**5. Թվարկվածներից ո՞ր գործոնները նպաստեցին Տիգրան II-ի կողմից նոր մայրաքաղաքի կառուցմանը.**

1) Արտաշատի շուրջ ճահճուտներ էին գոյացել:

2) Արտաշատը մնացել էր երկրի ծայր հյուսիսում:

3) Նախորդ ժամանակաշրջանում կառուցված քաղաքներում այլևս բավականաչափ հայ բնակչություն չկար:

4) Անտիոքը բուն հայկական տարածքներից դուրս էր:

5) Արտաշատը նվաճվել էր պարթևների կողմից:

**6. Գտնել ճիշտ պատասխանները.**

*Ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ կայսր Մակրինոսը՝*

ա. Տրդատին է վերադարձնում Կապադովկիայի կալվածքները, որոնք ստացել էր դեռևս Խոսրով I-ը:

բ. Խոշոր գումար է վճարում Տրդատին, որպեսզի հայոց այրուձին հյուսիսում իրականացնի Կովկասյան լեռնանցքների և հարակից տարածքների պաշտպանությունը:

գ. Տրդատին է վերադարձնում Հայաստանից գերեվարված նրա կնոջը՝ թագուհուն:

դ. Հայաստանից դուրս է բերում հռոմեական լեգեոնները, իսկ նրանց պարտակա-նությունները ստանձնում է հայոց այրուձին:

ե. Տրդատին է վերադարձնում Հայաստանից թալանված ավարը:

- 1) ա, բ                                      2) գ, ե                                      3) ա, ե                                      4) ա, դ

**7. Ինչո՞ւ արգելվեց հայկական մեհենագրության կիրառումը.**

1) քանի որ ստեղծվել էր հայոց այբուբենը

2) քանի որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո արգելվեց նախորդ կրոնը

3) քանի որ այն դժվար էր կիրառել

4) քանի որ հունարենն ու ասորերենը ավելի լայն տարածում գտան ժողովրդի շրջանում

**8. Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1) Ռուսա II-ի օրոք Ասորեստանի և Վանի համահայկական թագավորության միջև մղված պատերազմն ավարտվեց խաղաղության և բարեկամության պայմանագրի կնքմամբ:

2) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան և դադարեց Առաջավոր Ասիայում Վանի թագավորության համար վտանգ ներկայացնելուց:

- 3) Բ. ա. 743–713 թթ. մղված երեսնամյա պայքարի արդյունքում Վանի թագավորությանը թեև հաջողվեց վերականգնել իր դիրքերը, սակայն նա այլևս Առաջավոր Ասիայի հզոր տերություններից չէր:
- 4) Բ. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը կարողացավ գրավել Տուշպան և կրկին դարձավ Վանի թագավորության գլխավոր մրցակիցն Առաջավոր Ասիայում:
- 5) Բ. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան, սակայն վերականգնեց իր դիրքերը Առաջավոր Ասիայում:

**9. Ո՞րն էր դրամական շրջանառության աշխուժացմանը նպաստող կարևոր գործոն Հին Հայաստանում.**

- 1) բանակի թվաքանակի մեծացումը
- 2) Դվինի կառուցումը
- 3) գյուղական համայնքների արտոնությունների մեծացումը
- 4) առևտրի և արհեստների զարգացումը

**10. Ի՞նչ հետևանք ունեցավ Սարգոն II-ի արշավանքը Ուրարտու.**

- 1) Նա վերադարձին մտավ Արդինի–Մուսասիր, գահընկեց արեց իշխանությանը տիրացած ասուրամետ դրածոյին և գահին վերահաստատեց իր վստահելի կառավարչին:
- 2) Վերադարձին մտավ Ալզի և վերականգնեց Ասորեստանի դիրքերը:
- 3) Նա գրավեց մայրաքաղաք Տուշպան:
- 4) Թալանվեց Խալդիի գլխավոր տաճարը:

**11. Տիգրանակերտը հանձնվեց Լուկուլլոսին, որովհետև՝**

- 1) քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները հռոմեացիների առջև բացեցին դարպասները
- 2) քաղաքում սպառվել էին սննդամթերքի և զենքի պաշարները
- 3) քաղաքի հայազգի կառավարիչը դավաճանաբար անցավ թշնամու կողմը
- 4) քաղաքի հայ պաշտպանները թշնամու առաջ բացեցին քաղաքի դարպասները

**12. Թվարկվածներից որո՞նք Գավգամելայի ճակատամարտի արդյունք չեն:**

- 1) Դարեհ III–ը տիրացավ աքեմենյան գահին:
- 2) Միթրաուստեսը հռչակեց Փոքր Հայքի անկախությունը:
- 3) Սելևկյան պետությունը մասնատվեց ստրատեգիաների:
- 4) Օրոնտես Երվանդ III–ը դարձավ Մեծ Հայքի թագավոր:
- 5) Հայաստանը թոթափեց աքեմենյան գերիշխանությունը:

**13. Արտաշեսյան թագավորության անկման հետևանքով՝**

- 1) շարունակվեց Հայաստանին տիրելու հռոմեա–պարթևական մրցակցությունը
- 2) Արտաշեսյանները գահազրկվեցին նաև Վիրքում

- 3) Էրատոն սպանվեց Հոռմում
- 4) Հայաստանի համար ծառացավ նոր հարստություն հաստատելու խնդիր
- 5) պարթևները ճանաչեցին իրենց քաղաքականության ձախողումը

**14. Տիգրանակերտի անկման պատճառով Տիգրան II-ը ընտրեց՝**

- 1) հանկարծակի հարձակումներով թշնամու ուժերը ջլատելու մարտավարությունը
- 2) պարթևների հետ հակահռոմեական դաշինք ստեղծելու մարտավարությունը
- 3) մինչև հիմնական ուժերի ժամանումը ժամանակ շահելու մարտավարությունը
- 4) թշնամուն երկրի խորքերը քշելու, նրան թիկունքից և մատակարարումից կտրելու մարտավարությունը
- 5) Հոռմի հետ բանակցելու և հաշտություն կնքելու մարտավարությունը

**15. Սեպտիմիոս Սևերոսի և Վաղարշ II-ի միջև կնքված պայմանագրի արդյունքում՝**

- 1) հռոմեական կայսրը գումար վճարեց հայոց այրուձիհին, որը հյուսիսում իրակա-նացնում էր Կովկասյան լեռնանցքների և մերձակա տարածքների պաշտպանու-թյունը լեռնային ցեղերի հարձակումներից
- 2) Հայաստանը դարձավ «Հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ»
- 3) Հոռմը օժանդակեց Հայաստանին Սասանյանների դեմ պայքարում
- 4) կայսրը ճանաչեց Վաղարշի իրավունքները Հյուսիսային Միջագետքի վրա
- 5) հռոմեական լեգեոնները դուրս բերվեցին Հայաստանից

**16. Ինչ նպատակներ էր հետապնդում պարթև արքա Վաղարշ I-ը՝ հարևան երկրնե-րում գահ բարձրացնելով իր եղբայրներին.**

- 1) ստեղծել նոր աշխարհակալ տերություն
- 2) ստեղծել դաշնակից երկրների զինակցություն ընդդեմ Հոռմի
- 3) չեզոքացնել Հայաստանից մշտապես եկող վտանգը
- 4) վերջ տալ իր թագավորությունում գահակալական կռիվներին
- 5) վերականգնել Աքեմենյան տերության սահմանները

**17. Ինչո՞ւ Ք. ա. 2 թ. հայերը Տիգրան IV-ի գլխավորությամբ ապստամբեցին և Հայաստանից վտարեցին Արտավազդ III-ին.**

- 1) Արտավազդ III-ը երկիրը կառավարում էր պարթևական սովորույթներով:
- 2) Արտավազդ III-ը խրախուսում էր հակահռոմեական տրամադրությունները:
- 3) Արտավազդ III-ը գահին էր բազմել իր հորեղբորը սպանելու ճանապարհով:
- 4) Արտավազդ III-ը երկիրը կառավարում էր հռոմեական օրենքներով:
- 5) Արտավազդ III-ը զբաղված էր անզուսպ թալանով:

**18. Թվարկվածներից որո՞նք Արտաշես I-ի բարեփոխումների հետևանքներ չեն.**

- 1) Գյուղական համայնքները հետ ստացան ագարակատերերի կողմից զավթված հողերը:
- 2) Օրինականացվեցին ագարակատերերի՝ մինչ այդ կատարած հողային զավթումները:
- 3) Պահպանվեց համայնքի հողային սեփականությունը:

- 4) Պահպանվեց նախկին վարչական բաժանումը:
- 5) Չորքը բաժանվեց 4 զորավարությունների:
- 6) Կարգավորվեցին արքունի գործակալությունները:

**19. Ինչո՞վ էր պայմանավորված III դարի երկրորդ կեսին Հայաստանում ձևավորված քաղաքական և կրոնական իրադրությունը.**

- 1) հռոմեա-պարսկական զինակցությամբ
- 2) Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականությամբ
- 3) Սասանյանների կողմից հայոց գահին իրենց գահաժառանգներին նշանակելու հանգամանքով
- 4) Սասանյանների ծրագրերին հայ ժողովրդի օժանդակությամբ
- 5) Հայաստանում պարսկասեր խմբավորման պարտությամբ

**20. Թվարկվածներից որո՞նք են Գավգամելայի ճակատամարտի արդյունքներ.**

- 1) Մեծ Հայքը մտավ Ալեքսանդր Մակեդոնացու տերության մեջ:
- 2) Միթրաուստեսը հռչակեց Փոքր Հայքի անկախությունը:
- 3) Սելևկյան պետությունը մասնատվեց ստրատեգիաների:
- 4) Օրոնտես Երվանդ III-ը դարձավ Մեծ Հայքի թագավոր:
- 5) Հայաստանը թոթափեց Սելևկյան գերիշխանությունը:
- 6) Դարեհ II-ը զրկվեց աքեմենյան գահից:

**21. Ինչո՞ւ ձախողվեց Լուկուլլոսի կայծակնային պատերազմի ծրագիրը.**

- 1) Մեհրուժան զորավարի գլխավորած հեծելազորի կողմից հռոմեական բանակի ռազմերթի կասեցման հետևանքով
- 2) հռոմեական բանակում առաջացած պարենի և հատկապես ռազմամթերքի պակասի հետևանքով
- 3) Հայաստանի հարավում սկսված անսովոր ցրտերի հետևանքով
- 4) հռոմեացիներին Տիգրանակերտ մայրաքաղաքի բնակչության ցույց տված համառու երկարատև դիմադրության հետևանքով

**22. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Մծբինի պայմանագրի համաձայն՝ պարսից Ներսեհ թագավորը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
- 2) Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքը կորցրեց իր բոլոր արտաքին նվաճումները:
- 3) Արտաշատում Ք. ա. 54 թ. կնքված հայ-պարթևական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը և Պարթևստանը ռազմակալեցին Հռոմի հպատակ Կապադովկիան:
- 4) Արտաշատում Ք. ա. 94 թ. կնքված հայ-պոնտական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը ձեռք բերեց Ծովքն ու Կորդուքը:

- 5) Ըստ Ապամեայի պայմանագրի՝ Հռոմը հօգուտ պարթևների հրաժարվեց Փոքր Ասիայից:
- 6) Մծբինի պայմանագրի արդյունքում Տրդատ III-ը վերջնականապես հաստատվեց հայոց գահին:

**23. Ո՞ր իրադարձությունը նպաստեց հայ-հռոմեական ռազմական բախմանը Տիգրան II-ի օրոք.**

- 1) Հայաստանի կողմից Փոքր Ասիայի գավթումը
- 2) Հայկական տերության՝ Սև ծով դուրս գալը
- 3) Միհրդատ Պոնտացու փախուստը Հայաստան
- 4) Հայաստանի կողմից դեպի Արևելք տանող ճանապարհների փակումը

**24. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.**

- 1) Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտրական ուղիները բարեկարգելու նպատակով Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- 2) Հռոմի դաշնակից Հայաստանը խնդրեց զիջումների գնալ, ուստիև Հռոմը Պարսկաստանի հետ կնքեց Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- 3) Քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել, ուստի Հռոմը համաձայնեց նրա հետ կնքել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- 4) Քանի որ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Սիրիա (Ասորիք) նահանգին, որի կառավարիչը Կորբուլոնն էր, ուստի վերջինս Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:
- 5) Ավերված և մոխրակույտի վերածված Տիգրանակերտ մայրաքաղաքը վերականգնելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:

**25. Սարգուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց՝**

- 1) դաշնային կառավարման
- 2) համադաշնային կառավարման
- 3) ամբողջատիրական պետության
- 4) կենտրոնացված պետության

**26. Գավգամելայի ճակատամարտի արդյունքում՝**

- 1) վերականգնվեց Հայաստանի անկախությունը
- 2) Հայաստանն ընկավ Աքեմենյան տիրապետության տակ
- 3) Մակեդոնացին նվաճեց Հայաստանը
- 4) Դարեհ III-ը գերեվարվեց և Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց

**27. Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում՝**

- 1) Պոնտոսի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց
- 2) ազդեցության ոլորտների շուրջ համաձայնագիր կնքվեց
- 3) Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց
- 4) վիճելի տարածքների վերաբաժանման մասին համաձայնագիր կնքվեց

**28. Ո՞րն էր Տիգրանակերտի անկման պատճառը.**

- 1) Քաղաքը պաշտպանող կայազորի հրամանատարն անցավ հռոմեացիների կողմը:
- 2) Քաղաքում վերջացել էին սննդամթերքն ու ջուրը, և սկսվել էր համատարած սովը:
- 3) Քաղաքում տարածվել էր համաճարակ, և պաշտպանների թիվը զգալիորեն կրճատվել էր:
- 4) Քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները հռոմեացիների առջև բացեցին դարպասները:

**29. Ինչո՞վ էր Անտոնիոսը բացատրում իր պարթևական արշավանքի ձախողումը Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում.**

- 1) իր ենթակաների ապաշնորհությամբ և անհեռատես գործելակերպով
- 2) եղանակային անբարենպաստ պայմաններով և զորքում բռնկված համաճարակով
- 3) հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ
- 4) պարթևական բանակի թվական գերակշռությամբ

**30. Ինչո՞ւ Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա.**

- 1) որպեսզի թույլ չտան Արտավազդի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը
- 2) որպեսզի Անտոնիոսին դիմագրավեն և թույլ չտան մտնել Պարթևստան
- 3) որպեսզի պաշտպանեն իրենց դաշնակից Հայաստանի սահմանները
- 4) որպեսզի ստիպեն Կրասոսին Պարթևստանի դեմ արշավել Հայաստանի տարածքով

**31. Ինչո՞ւ Փարսմանը սպանեց իր որդի Հռադամիզդին.**

- 1) հայերին իր հավատարմությունը ցույց տալու համար
- 2) Հռոմի դեմ պայքարում հայերին իր կողմը գրավելու համար
- 3) թագավորական գահին տիրանալու համար
- 4) հռոմեացիներին իր հավատարմությունը ցույց տալու համար

**32. Ինչո՞ւ կնքվեց Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը.**

- 1) քանի որ Պարսկաստանի դաշնակից Հայաստանը հանդես եկավ միջնորդությամբ
- 2) քանի որ պարտված հռոմեացիները չցանկացան շարունակել պատերազմը
- 3) Հռոմի դաշնակից Հայաստանը նրան ստիպեց գնալ զիջումների
- 4) քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել

**33. Ինչի հետևանք էին Իշպուհինի արձանագրած առաջին խոշոր հաջողությունները.**

- 1) քաղաքային կյանքի աշխուժացման
- 2) Ասորեստանի ցուցաբերած ռազմաքաղաքական օժանդակության
- 3) ռազմական բարեփոխումների
- 4) Բաբելոնի հետ կնքած դաշինքի

**34. Ինչ նպատակ էր հետապնդում Սարգուրի II-ը՝ ձգտելով Բաբելոն հասնելու Սիրիայի տարածքով և Եփրատի ավազանով.**

- 1) ցանկանում էր տիրանալ Սիրիայի ծովափնյա քաղաքներին
- 2) նպատակ ուներ Վանի թագավորության սահմանները հասցնելու մինչև Եգիպտոս
- 3) ցանկանում էր լիակատար շրջափակման ենթարկել Ասորեստանը
- 4) նպատակ ուներ իր վերահսկողությանը ենթարկելու Միջերկրական ծովի առևտրական ուղիները

**35. Ինչո՞ւ անհաջողություններ կրեց Ռուսա I-ը, և Սարգոն II-ը կարողացավ արշավել Վանի թագավորության դեմ.**

- 1) Վանի թագավորությունում առաջացան տնտեսական դժվարություններ:
- 2) Երկիրը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում:
- 3) Մինչ այդ անհաջողությամբ ավարտվեց Վանի թագավորության զորքերի արշավանքը դեպի Բաբելոն:
- 4) Ասորեստանը նախապես դաշնակցեց Մարաստանի հետ:

**36. Ինչո՞ւ ձախողվեց Դարեհ III-ի հետապնդումը, որ սկսել էր Ալեքսանդր Մակեդոնացին Գավգամելայի ճակատամարտում.**

- 1) Ճիշտ ժամանակին օգնության հասան Միջին Ասիայից եկած զորքերը:
- 2) Հերոսաբար կռվեցին կենտրոնի և ձախ թևի զորքերը և թույլ տվեցին Աքեմենյան արքային հեռանալ մարտադաշտից:
- 3) Վճռական պահին դանդաղկոտություն ցուցաբերեց մակեդոնական այրուձին:
- 4) Հերոսական գործողություններով աչքի ընկան աջ թևի զորքերը, որոնք հարկադրեցին Ալեքսանդրին դադարեցնել Դարեհի հետապնդումը:

**37. Ինչ նպատակ էր հետապնդում Արտաշես I-ը՝ օժանդակելով Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությանը.**

- 1) Ձգտում էր թուլացնելու Սելևկյան տերության դիրքերը Մերձավոր Արևելքում:
- 2) Նպատակ ուներ Տիմարքոսի հետ դաշնակցելով ազատվելու Սելևկյանների վերահսկողությունից:
- 3) Ցանկանում էր բարելավել հայ-պոնտական հարաբերությունները:
- 4) Միանալ Սելևկյաններին և պայքարել Հռոմի դեմ:

**38. Ինչ նպատակով էր Արտաշես I-ը հրապարակել հողային բարեփոխման վերաբերյալ իր հրամանագիրը.**

- 1) Ամրապնդում էր իր քաղաքական հենարանի՝ հողային խոշոր սեփականատերերի հետ դաշինքը և վերջնականապես զրկում էր գյուղացիներին իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից:
- 2) Ստիպելով ազարակատերերին վերադարձնել զավթած հողերը՝ հանդես էր գալիս որպես գյուղացիության պաշտպան և կանխում էր գյուղացիության հողազրկումը:
- 3) Մի կողմից օրինականացնում էր ազարակատերերի՝ մինչ այդ կատարած զավթումները, իսկ մյուս կողմից պահպանում էր համայնքային սեփականությունը:
- 4) Թույլ էր տալիս շարունակել համայնքային հողերի յուրացումը, որովհետև զգուշանում էր խոշոր հողատերերի միահամուռ ապստամբությունից:

**39. Ինչ հետևանքներ ունեցան Տիգրան Մեծի նվաճումները.**

- 1) Փոխվեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը:
- 2) Հռոմը պարտություն կրեց Միջերկրածովյան ավազանում գերիշխանության հասնելու համար ծավալված պայքարում:
- 3) Առաջին անգամ պատմության մեջ՝ Հայաստանի սահմաններում, ընդգրկվեց ամբողջ Փոքր Ասիան:
- 4) Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը իրենց դիրքերը զիջեցին Հայկական տերությանը:
- 5) Ստեղծվեց Հայկական տերությունը, որը հիմնավորապես տարբերվում էր Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տերություններից:

**40. Ինչո՞ւ էր Տիգրան Մեծի համար օրակարգի հարց դարձել նոր մայրաքաղաքի կառուցումը.**

- 1) Գերեվարված քաղաքային բնակչությունը այլևս հնարավոր չէր տեղավորել հին քաղաքներում, ուստի անհրաժեշտ էր ստեղծել խոշոր մի քաղաք:
- 2) Արտաշատը մնացել էր տերության ծայր հյուսիսում և այլևս չէր կարող մայրաքաղաքի դեր կատարել:
- 3) Անտիոքը չէր կարող Հայկական տերության մայրաքաղաք դիտվել, քանի որ հայկական տարածքներից դուրս էր և ուներ գերազանցապես օտար բնակչություն:
- 4) Հետևելով հին հայկական ավանդույթին՝ Տիգրանը պետք է մայրաքաղաք կառուցեր այն վայրում, որտեղ նա թագադրվել էր:
- 5) Նոր մայրաքաղաք կառուցելով՝ Տիգրանը ցանկանում էր դաշնակից ձեռք բերել անհնազանդ ավազանու դեմ պայքարում:

**41. Ինչո՞ւ էր Հռոմը լրջորեն նախապատրաստվում Հայկական տերության դեմ պատերազմին.**

- 1) Նպատակ ուներ խափանելու հայ-պոնտական միացյալ ուժերով Հունաստան ներխուժելու հին ծրագիրը, որը մշակել էր Միհրդատ Եվպատորը:
- 2) Հռոմը համարում էր, որ պետք է շտապել և հարձակվել Հայաստանի վրա մինչև հայ-պարթևական դաշինքի կնքումը:



- 3) Հայկական տերությունը դուրս էր եկել Միջերկրական ծով և ընդհուպ մոտեցել էր Եգիպտոսի սահմաններին:
- 4) Հռոմը ձգտում էր վրեժ լուծելու Տիգրան Մեծից՝ Հռոմի դեմ պատերազմում Միհրդատ Եվպատորին ցուցաբերած ռազմական մեծ օգնության համար:
- 5) Հզոր Հայաստանը Հռոմի առջև փակել էր Արևելք տանող բոլոր ճանապարհները:

**42. Ինչ հետևանք ունեցավ Հայաստանի համար Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի կնքումը.**

- 1) Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունը և պետական անկախությունը:
- 2) Տիգրան Մեծը կորցրեց «արքայից արքա» տիտղոսը:
- 3) Հայաստանը Հռոմին զիջեց իր երկրի արևմտյան նահանգները:
- 4) Հայաստանը կորցրեց իր անկախությունը:

**43. Սասանյանները, տիրանալով գահին, թշնամական դիրք բռնեցին հայերի նկատմամբ, որովհետև՝**

- 1) հայ Արշակունիները հավատարիմ էին մնացել իրենց դաշնակից պարթև Արշակունիներին:
- 2) Մեծ Հայքի թագավորությունը ձգտում էր Սասանյաններից գրավելու Ատրպատականը:
- 3) հայ Արշակունիները սատարում էին Արևելքի քրիստոնեական համայնքներին:
- 4) Մեծ Հայքի թագավորությունը ցանկանում էր ազատագրվել Սասանյանների գերիշխանությունից:

## 6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6-1. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ) պատասխանով առաջադրանքներ

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը

բ. Էրեբունի ամրոցի հիմնադրումը

գ. Մենուախինիլի քաղաքի հիմնադրումը

դ. Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը

1) ա, դ, բ, գ

2) դ, գ, բ, ա

3) դ, ա, գ, բ

4) ա, գ, դ, բ

2. Արգիշտի I-ի նվաճողական ձեռնարկումները ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. հաղթարշավը դեպի Ալիշտու

բ. արշավանքը դեպի Դիաուխի

գ. արշավանքը Զագրոսյան լեռներով մինչև Պարսուա

դ. արշավանքը դեպի Փոքր Ասիայի տարածք

1) բ, դ, ա, գ

3) ա, բ, գ, դ

2) դ, բ, գ, ա

4) գ, ա, դ, բ

3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Սարդուրի III-ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում

բ. հայկական նոր թագավորության հռչակումը Պարույր Հայկազունու գլխավորությամբ

գ. Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը

դ. Թիգլաթպալասար III-ի արշավանքը դեպի Տուշպա

1) բ, գ, դ, ա

2) դ, գ, բ, ա

3) գ, ա, դ, բ

4) գ, դ, ա, բ

4. Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

ա. Արգիշտի I

դ. Մենուա

բ. Սարդուրի II

ե. Ռուսա I

գ. Ռուսա II

զ. Սարդուրի I

1) դ, գ, ա, ե, բ, գ

3) գ, ա, դ, բ, գ, ե

2) դ, գ, բ, ա, ե, գ

4) գ, դ, ա, բ, ե, գ

**5. Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արգիշտի II  
բ. Ռուսա III

գ. Իշպուլինի  
դ. Էրիմենա

ե. Արգիշտի I  
զ. Սարդուրի II

- 1) գ, ե, ա, զ, բ, դ
- 2) ե, զ, ա, գ, բ, դ

- 3) գ, ե, զ, ա, դ, բ
- 4) զ, գ, ե, ա, բ, դ

**6. Հայկազուն-Երվանդունի արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Տիգրան I Երվանդյան  
բ. Արշամ  
գ. Պարույր

դ. Երվանդ Սակավակյաց  
ե. Շամ (Սամոս)  
զ. Երվանդ IV

- 1) գ, դ, ա, ե, բ, զ
- 2) գ, ա, դ, բ, ե, զ

- 3) ա, գ, դ, ե, զ, բ
- 4) դ, գ, ա, բ, զ, ե

**7. Նշված իրադարձություններից որն է խախտում դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Պտղոմայիս քաղաքի գրավումը Տիգրանի կողմից
- 2) Խառանի ճակատամարտը
- 3) Արաձանիի ճակատամարտը
- 4) Արտաշատի պայմանագրի կնքումը

**8. Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խառանի  
բ. Արաձանիի  
գ. Պոնտոսի Ջելա քաղաքի

դ. Ակցիումի  
ե. Տիգրանակերտի

- 1) ե, բ, գ, ա, դ
- 2) ե, գ, բ, դ, ա,

- 3) բ, ե, գ, ա, դ
- 4) գ, դ, ե, բ, ա

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Արշամաշատ քաղաքի կառուցումը  
բ. Սելևկյան պետության առաջացումը  
գ. Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում  
դ. Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում  
ե. Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ սելևկյան զորքերի արշավանքը Հայաստանի դեմ  
զ. Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը

- 1) բ, գ, ա, դ, ե, գ
- 2) դ, բ, ա, զ, գ, ե

- 3) բ, դ, գ, ա, գ, ե
- 4) դ, բ, գ, ա, ե, գ

**10. Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Արածանիի  
բ. Մազնեսիայի

գ. Տիգրանակերտի  
դ. Գավգամելայի

ե. Խառանի

1) բ, դ, գ, ա, ե

2) դ, բ, ա, ե, գ,

3) դ, բ, գ, ա, ե

4) բ, դ, ե, գ, ա

**11. Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Տիգրան III  
բ. Տիգրան I

գ. Արտաշես II  
դ. Արտավազդ II

ե. Արտավազդ I

1) բ, ե, դ, գ, ա

2) ե, բ, դ, գ, ա

3) ե, բ, դ, ա, գ

4) բ, ե, գ, դ, ա

**12. Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արտավազդ III  
բ. Տիգրան I

գ. Տիգրան III  
դ. Արտաշես I

ե. Տիգրան IV և Էրատո

1) դ, գ, բ, ա, ե

2) դ, բ, գ, ա, ե

3) գ, դ, բ, ե, ա

4) դ, բ, գ, ե, ա

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկիզբը  
բ. Վաղարշ I Արշակունու՝ Պարթևստանում գահ բարձրանալը  
գ. Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից  
դ. Ներոն կայսեր գահ բարձրանալը  
ե. Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռադամիզդի վտարումը

1) բ, դ, ե, ա, գ

2) բ, ե, դ, ա, գ

3) դ, բ, ե, գ, ա

4) բ, դ, ա, ե, գ

**14. Հայոց թագավորների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Վաղարշ I  
բ. Տրդատ I

գ. Վաղարշ II  
դ. Սանատրուկ

ե. Բակուր Արշակունի

1) դ, բ, ե, ա, գ

2) բ, դ, ա, ե, գ

3) դ, բ, ա, գ, ե

4) բ, ա, դ, ե, գ

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խոսրով I-ի արշավանքը Կովկասի լեռնականների դեմ  
բ. Սասանյան արքայատոհմի հաստատումը պարսից գահին  
գ. հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում  
դ. հայոց գահի բռնազավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից

1) ա, գ, բ, դ

2) գ, ա, դ, բ

3) գ, ա, բ, դ

4) գ, բ, ա, դ

**16. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Խոսքով I-ի մեկնումը Ասորիք և ձերբակալությունը
- բ. Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրան
- գ. Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդես
- դ. Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը

- 1) գ, ա, դ, բ
- 2) դ, գ, բ, ա
- 3) գ, դ, ա, բ
- 4) դ, գ, ա, բ

**17. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
- բ. հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում
- գ. Ներսես Սասանյանի կողմից Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
- դ. Տրդատ II-ի թագ ստանալը կայսր Մակրինոսից
- ե. հայ-հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
- զ. Խոսքով II-ի գահակալության սկիզբը

- 1) դ, գ, գ, ա, ե, բ
- 2) դ, գ, ա, գ, ե, բ
- 3) դ, գ, ա, ե, գ, բ
- 4) գ, դ, ա, գ, բ, ե

**18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. «Բաքոսուհիներ» ողբերգության բեմադրությունը Արտաշատում պարթև արքա Օրոդես II-ի ներկայությամբ
- բ. Անտիոքոս I-ի թագադրումը «Տիգրանյան» կամ «Հայկական» թագով
- գ. Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- դ. Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի գործածության սկիզբը
- ե. Տիգրան Մեծի թագադրությունը
- զ. Արշակ I-ի գահակալության սկիզբը

- 1) ե, դ, ա, բ, գ, գ
- 2) գ, ե, բ, ա, գ, դ
- 3) ե, բ, ա, գ, գ, դ
- 4) գ, դ, ե, ա, բ, գ

**19. Տրված իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը
- 2) Էրեբունի ամրոցի հիմնադրումը
- 3) Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
- 4) Մենուայիսինիի քաղաքի հիմնադրումը
- 5) Բաբելոնիայի նվաճումը Արգիշտի I-ի կողմից

**20. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Տուշպայի հիմնադրումը
- 2) Վանի թագավորության դաշնային աշխարհագրորի՝ արիեստավարժ կանոնավոր բանակով փոխարինման սկիզբը
- 3) «Մենուայի ջրանցքի» կառուցումը
- 4) Իշպուինիի գահակալման սկիզբը
- 5) Սարդուրի II-ի գահակալման սկիզբը

**21. Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
- 2) հունական 10-հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
- 3) Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ
- 4) Երվանդ III-ի դառնալը Հայաստանի սատրապ
- 5) Գավգամելայի ճակատամարտը
- 6) Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումը մի քանի մասերի

**22. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Երվանդ Սակավակյացի գահակալության սկիզբը
- 2) Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
- 3) Երվանդ III-ի դառնալը Հայաստանի սատրապ
- 4) զորավար Վահոմիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
- 5) Երվանդ II-ի գլխավորած ապստամբությունն Աքեմենյան տերության դեմ
- 6) Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ

**23. Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
- 2) Սելևկյան պետության առաջացումը
- 3) Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
- 4) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- 5) Արշամաշատ քաղաքի կառուցումը

**24. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա) Տիգրան Երվանդյանի ու դաշնակից զորքերի կողմից Բաբելոնի գրավումը
- բ) Արտաշես II-ի գահակալման սկիզբը
- գ) Խառանի ճակատամարտը

դ) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը

ե) Արտաշատի պայմանագրի կնքումը

1) ե

2) գ

3) դ

4) բ

**25. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ակցիումի ճակատամարտը

բ. Խառանի ճակատամարտը

գ. Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքի սկիզբը

դ. Մծուրք քաղաքի հիմնադրումը

ե. Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի կնքումը

1) ե, գ, ա, բ, դ

2) ե, բ, ա, դ, գ

3) ե, բ, գ, ա, դ

4) բ, ե, դ, ա, գ

**26. Ո՞ր ճակատամարտն է խախտում ճակատամարտերի տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Տիգրանակերտի

3) Խառանի

5) Ջելայի

2) Արածանիի

4) Ակցիումի

**27. Արքաների անունները դասավորել ըստ գահակալության ժամանակագրական հաջորդականության.**

ա. Տիգրան II

դ. Սարգսրի I

բ. Տիգրան I Երվանդյան

ե. Տիգրան III

գ. Արտավազդ III

զ. Արտաշես II

1) բ, դ, ա, գ, ե, գ

3) դ, բ, ա, գ, գ, ե

2) դ, բ, գ, ա, գ, ե

4) դ, բ, ա, գ, ե, գ

**28. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Արդինի-Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում

բ) «Նաիրի» մեկ միասնական պետական կազմավորման հիշատակումը

գ) Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը

դ) Արամ Ուրարտացու դիմակայելը ասորեստանյան արշավանքներին

1) դ, բ, ա, գ

2) բ, դ, գ, ա

3) դ, բ, գ, ա

4) բ, գ, դ, ա

**29. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը

բ) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից

գ) Պոմպեոսի ժամանումը Արևելք

դ) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը

ե) Տիգրան Մեծի և Գողերծ II-ի միջև հաշտության պայմանագրի կնքումը

1) բ, դ, ե, գ, ա

2) դ, ե, բ, ա, գ

3) ե, բ, դ, ա, գ

4) բ, դ, ե, ա, գ

**30. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել վերջինը.**

- ա) Վանի աշխարհակալության ստեղծումը
- բ) Թիզլաթպալասար III-ի արշավանքը դեպի Տուշպա
- գ) Սևանա լճի ավազանի իշխանությունների միացումը Վանի թագավորությանը
- դ) Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը
- ե) Էրեբունի ամրոցի հիմնադրումը
- զ) Արդինի-Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում

1) ա                      2) գ                      3) բ                      4) զ

**31. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) Կյուրոս Մեծի ապստամբությունը Մարաստանի դեմ
- բ) դաշնակից զորքերի արշավանքը Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ քաղաքի վրա
- գ) Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Հայկազունների տոհմի իշխանության վերականգնումը Սկայրդդու գլխավորությամբ
- դ) Աքեմենյան տերության բաժանվելը 20 սատրապությունների
- ե) Երվանդ I Սակավակյացի գահակալումը
- զ) Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը

1) բ                      2) ե                      3) ա                      4) զ

**32. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել հինգերորդը.**

- ա) Փոքր Հայքի ռազմակալվելը Պոնտոսի կողմից
- բ) Արտավազդ I-ի գահակալումը
- գ) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- դ) Երվանդ IV-ի գահակալումը
- ե) Տիմարքոսի գլխավորած ապստամբությունը

1) դ                      2) ա                      3) ե                      4) զ

**33. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել առաջինը.**

- ա) Տրդատ III-ի կառավարման մինչքրիստոնեական շրջանի սկիզբը
- բ) պարսից արքա Ներսեհի պատերազմվելը Հռոմի դեմ
- գ) Մծուրք քաղաքի հիմնադրումը
- դ) հայոց գահի հանձնումը Բակուր Արշակունուն
- ե) Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը

1) ե                      2) դ                      3) բ                      4) զ



**34. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից հինգն է տեղի ունեցել երկրորդը.**

- ա) Օրոդես II-ի հետ հայ-պարթևական պայմանագրի կնքումը
  - բ) Փրասպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը
  - գ) Պոմպեոսի ժամանելը Արևելք
  - դ) Կրասոսի ժամանելը Ասորիք
  - ե) Արտաշատի հայ-հռոմեական հաշտության պայմանագրի կնքումը
- 1) ե                      2) գ                      3) դ                      4) բ

**35. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից հինգն է տեղի ունեցել հինգերորդը.**

- ա) Խոսրով I-ի ձերբակալումը Կարակալա կայսեր կողմից
  - բ) Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
  - գ) Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայքի թագավորություն
  - դ) Տրդատ II-ի գահակալումը Հայաստանում
  - ե) Սոհեմոս-Տիգրանի գահակալումը
  - զ) Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերի սպանվելը
- 1) ե                      2) գ                      3) դ                      4) ա

**36. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից հինգն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) Տիգրան Երվանդյանի որդի Վահագնի գահակալման սկիզբը
  - բ) Հայաստանի՝ Աքեմենյան տերության XIII սատրապություն դառնալը
  - գ) Արտաքսերքսես II-ի դեմ նրա եղբոր ապստամբությունը
  - դ) Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը
  - ե) Տիգրան Երվանդյանի գլխավորությամբ Բաբելոնի գրավումը
  - զ) Կամբիզի գահակալման սկիզբը
- 1) բ                      2) ա                      3) դ                      4) գ

**37. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Արտաշես I-ի գահ բարձրանալը
- 2) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- 3) Գողգերձ II-ի հետ հաշտության պայմանագրի կնքումը
- 4) Լուկոլլոսի բանակի դուրս գալը Կորդուքից և Հայկական Տավրոսի վրայով անցնելը
- 5) Միհրդատ Եվպատորի բանագնացների ժամանումը Արտաշատ
- 6) հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը

**38. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Վանի աշխարհակալության ստեղծումը
- 2) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
- 3) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- 4) Տիմարքոսի ապստամբությունը
- 5) Արտավազդ III-ի գահակալումը
- 6) Տիգրան VI-ի գահակալումը

**39. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Պարթևստանում Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը
- 2) Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
- 3) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- 4) Հայ հայրենասերների դիմադրությունը Կորբուլոնի զորքերին Տարոն գավառում
- 5) հայոց Բակուր Արշակունուն գահընկեց անելը և Հռոմ տանելը
- 6) հույն մատենագիր Հիպպոլիտիսի «Ժամանակագրության» գրվելը

**40. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Սոհեմոս-Տիգրանի գահակալումը
- 2) Նիգերի սպանվելը Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
- 3) Հայաստանում արքայի հրամանով հունարենին զուգահեռ ասորերենի կիրառումը
- 4) Տրդատ II-ի գահակալումը Հայաստանում
- 5) Տրդատ III-ի հաստատվելը հայոց գահին
- 6) Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը

**41. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը
- բ) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում
- գ) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից
- դ) Հայոց մեծ թվականի սկիզբը
- ե) Հայոց փոքր թվականի սկիզբը
- զ) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնի ամրոցում

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) բ, ա, գ, գ, դ, ե | 3) ա, բ, գ, դ, ե, գ |
| 2) բ, գ, ա, գ, դ, ե | 4) ա, բ, գ, գ, դ, ե |

**42. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Սարդուրի III-ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
- բ) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում

- գ) Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
- դ) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը

- 1) բ, գ, դ, ա                    2) բ, դ, գ, ա                    3) դ, բ, ա, գ                    4) գ, դ, ա, բ

**43. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայասայի՝ վերջին անգամ հիշատակվելը
- 2) Վանի թագավորության դաշնային աշխարհագրի՝ արհեստավարժ կանոնավոր բանակով փոխարինման սկիզբը
- 3) «Մենուայի ջրանցքի» կառուցումը
- 4) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից
- 5) Սարդուրի II-ի գահակալման սկիզբը

**44. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայոց մեծ թվականի սկիզբը
- 2) Տուշպայի հիմնադրումը
- 3) Իշպուհինի գահակալման սկիզբը
- 4) Մենուայի ջրանցքի հիմնադրումը
- 5) Էրեբունի ամրոցի հիմնադրումը

**45. Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդեսա
- 2) Խոսրով I-ի մեկնումը Ասորիք և ձերբակալությունը
- 3) Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
- 4) Վաղարշ II-ի գահակալության ավարտը
- 5) Կարակալա կայսեր ուղարկած զորքի ջախջախումը Տրդատ II-ի գլխավորությամբ

**46. Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Խոսրով II-ի գահակալության սկիզբը
- 2) Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
- 3) Տրդատ II-ի թագ ստանալը կայսր Մակրինոսից
- 4) Ներսես Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
- 5) հայ-հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
- 6) 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում

## **6–II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

- 1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
  - 1) Սարգոն II–ի կողմից Խալդիի գլխավոր տաճարի թալանումը
  - 2) Ասորեստանի մղած երեսնամյա պայքարի սկիզբը Առաջավոր Ասիայում իր դիրքերը վերականգնելու համար
  - 3) Վանի թագավորության վերածվելը գերտերության
  - 4) Թիգլաթպալասար III–ի արշավանքը Տուշպա (Վան)
  - 5) Սարգոն II–ի արշավանքը Վանի թագավորության դեմ
  
- 2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
  - 1) Կարքեմիշ քաղաքի գրավումը դաշնակից զորքերի կողմից
  - 2) կիմերների թշնամական արշավանքները Վանի տերության դեմ
  - 3) Տիգրան Երվանդյանի կողմից դաշնակից զորքերի հետ Բաբելոնի գրավումը
  - 4) Կյուրոս II Մեծի զոհվելը
  - 5) Կյուրոս Մեծի ապստամբությունը Մարաստանի դեմ
  
- 3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
  - 1) Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը
  - 2) մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը
  - 3) սատրապի կարգավիճակով Աքեմենյաններին ենթակա Հայկազուն–Երվանդյանների իշխելու ավարտը Հայաստանում
  - 4) Արշամաշատ քաղաքի կառուցումը Ծոփքում
  - 5) Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումը
  
- 4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
  - 1) Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումը
  - 2) Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը
  - 3) Մեծ Հայքում Օրոնտես–Երվանդ III–ի գլխավորությամբ անկախության վերականգնումը
  - 4) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
  - 5) կարճ ժամանակով Սելևկյանների գերիշխանության հաստատումը հայկական չորս թագավորությունների վրա
  
- 5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
  - 1) Պարթևստանի Գոդերձ II–ի գահ բարձրանալը
  - 2) Տիգրան II–ի բանակների մուտքը Ասորիք
  - 3) Կորդուքի միացումը Մեծ Հայքին
  - 4) հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
  - 5) Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա

- 6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- 1) Արտաշատում հայ-պարթևական պայմանագրի կնքումը
  - 2) Խառանի ճակատամարտը
  - 3) Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում
  - 4) Կրասոսի զորքերի անցնելը Եփրատ գետը
  - 5) Ջելա քաղաքի մոտ հռոմեացիների նկատմամբ հայ-պոնտական ուժերի հաղթանակը
- 7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- 1) Տրդատ I-ի պայքարը ավանների դեմ
  - 2) Սոհեմոսի նշանակվելը Հայաստանի թագավոր
  - 3) Վաղարշ I-ի գահակալումը Մեծ Հայքում
  - 4) հայ Արշակունիների թագավորական իշխանությունը ժառանգական դարձնելը
  - 5) Տրդատ II-ի գահակալումը
- 8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- 1) Սասանյան արքայատոհմի հիմնումը
  - 2) հայոց Արշակ I արքայի գահակալումը
  - 3) Գառնիի ամրոցի կառուցումը
  - 4) Վաղարշ II-ի և հռոմեական կայսր Սևերոսի միջև հաշտության կնքումը
  - 5) Տրդատ III-ի վերջնականապես հաստատվելը Մեծ Հայքի թագավորության գահին
- 9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- 1) հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
  - 2) Արտաշատի պաշարումը Հրահատ III-ի կողմից
  - 3) հայ-հռոմեական պատերազմի ընթացքում հայկական բանակների կողմից Ծոփքի ազատագրումը
  - 4) հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը
  - 5) առաջին եռապետության ստեղծումը Հռոմում
- 10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- 1) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
  - 2) Պտղոմայիս քաղաքի գրավումը Տիգրան Մեծի բանակի կողմից
  - 3) Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը
  - 4) Լուկոլլոսի բանակի դուրս գալը Կորդուքից
  - 5) Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա
- 11. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- 1) «Յոթանասուն հովիտներ»-ի գիջումը Միհրդատ II-ին
  - 2) հայկական զորքերի ներխուժումը Կապադովկիա՝ հայ-պոնտական դաշինքի համաձայն

- 3) Պոմպեոսի ժամանումը Արևելք
- 4) Պոնտոսի Ջելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ
- 5) Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում

**12. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սելևկյան տերության առաջացումը
- 2) Արտաշեսի վճռական հակահարվածը Սելևկյան արքա Անտիոքոս IV-ին
- 3) մակեդոնա-հունական զորքերի անցնելը Հելլեսպոնտոսը Ալեքսանդրի գլխավորությամբ
- 4) Գավգամելայի ճակատամարտը
- 5) առաջին անգամ Հայաստանի տարածքում Մեծ և Փոքր Հայքերի հռչակումը որպես անկախ թագավորություններ

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Արդինի-Մուսասիրի տաճարի թալանումը ասորեստանցիների կողմից
- 2) Նաիրյան երկրների համադաշնության ստեղծումը
- 3) Վանի թագավորությունում կատարված գրային բարեփոխումը
- 4) սկյութների հարձակումների սկիզբը Վանի թագավորության դեմ
- 5) Վանի թագավորությունում կատարված կրոնական բարեփոխումը

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- 2) Արտաշատի պաշարումը Հրահատ III-ի կողմից
- 3) Գողթերձ II-ի և Տիգրան II-ի միջև պայմանագրի կնքումը
- 4) Տիգրան II-ի բանակի կողմից Կոմմագենեի, Դաշտային Կիլիկիայի և Փյունիկիայի գրավումը
- 5) Արածանիի ճակատամարտը

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հռոմեա-հայպարթևական տասնամյա պատերազմի սկիզբը
- 2) Նիգերի սպանվելը Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
- 3) Վաղարշ II-ի գահակալումը Մեծ Հայքում
- 4) Սոհեմոս-Տիգրանի գահակալումը
- 5) Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը Պարթևստանում

## 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

### 7-1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայկական լեռնաշխարհի գետերը համապատասխանեցնել լեռներին, որոնցից դրանք սկիզբ են առնում.

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| 1) Խաչափայտի            | ա. Արևելյան Եփրատ     |
| 2) Բյուրակնյան (Սրմանց) | բ. Արևելյան Տիգրիս    |
| 3) Ծաղկանց              | գ. Ճորոխ              |
| 4) Ծաղկավետ             | դ. Արևմտյան Եփրատ     |
| 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ   | 3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ |
| 2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ   | 4) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ |

2. Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթները համապատասխանեցնել իրենց բարձրություններին.

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) Արագած             | ա. 4434 մ             |
| 2) Սիս                | բ. 3906 մ             |
| 3) Սիփան              | գ. 2906 մ             |
| 4) Կապուտջուղ         | դ. 4096 մ             |
|                       | ե. 3925 մ             |
| 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ | 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե |
| 2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ | 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ |

3. Կատարել համարժեք անունների համապատասխանեցում.

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) Ծոփք                    | ա. Արմենիա մայր            |
| 2) Բարձր Հայք              | բ. Կարնո աշխարհ            |
| 3) Մեծ Հայք                | գ. Տնորիք                  |
| 4) Փոքր Հայք               | դ. Չորրորդ Հայք            |
| 5) Կորճայք                 | ե. Արմենիա մինոր           |
|                            | զ. Կորդուք                 |
| 1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-գ | 3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ |
| 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-գ | 4) 1-դ, 2-գ, 3-գ, 4-ե, 5-ա |

4. Անվանումները համապատասխանեցնել նահապետների անուններին.

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| ա. Արամ               | 1. Արմավիր            |
| բ. Արամանյակ          | 2. Արմենիա, արմեն     |
| գ. Արամայիս           | 3. Երասխ (Արաքս)      |
| դ. Երաստ              | 4. Արարատ             |
|                       | 5. Արագած, Արագածոտն  |
| 1) ա-4, բ-5, գ-2, դ-3 | 3) ա-2, բ-5, գ-1, դ-3 |
| 2) ա-4, բ-1, գ-5, դ-3 | 4) ա-5, բ-2, գ-1, դ-4 |

**5. Ժամանակաշրջանը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը
- 2) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից
- 3) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում
- 4) Արամ անունով երկրի հիշատակումը

ա. Ք. ա. XXIII դ.

դ. Ք. ա. XII դ.

բ. Ք. ա. IX դ.

ե. Ք. ա. XIV դ.

գ. Ք. ա. XIII դ.

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-դ

4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա

**6. Գահակալման տարիները համապատասխանեցնել Վանի թագավորության արքայի անվանը.**

- 1) Սարգուրի II
- 2) Ռուսա II
- 3) Արգիշտի I
- 4) Ռուսա I

ա. Ք. ա. 786–764 թթ.

բ. Ք. ա. 735–մոտ 710–ական թթ. վերջ

գ. Ք. ա. 764–735 թթ.

դ. Ք. ա. մոտ 685–645 թթ.

ե. Ք. ա. 810–786 թթ.

1) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե

3) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ

2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

**7. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Սարգոն II-ի արշավանքը Վանի թագավորության դեմ և Մուսասիրի նվաճումը
- 2) Արամ Ուրարտացու դիմակայումը ասորեստանյան արշավանքներին
- 3) Արգիշտի I-ի հաղթական պատերազմը Ասորեստանի դեմ
- 4) Հյուսիսից կիմերների քոչվոր ցեղերի անակնկալ հայտնվելը
- 5) Էրեբունի ամրոցի հիմնադրումը

ա. Ք. ա. 859–843 թթ.

դ. Ք. ա. 781–778 թթ.

բ. Ք. ա. 782 թ.

ե. Ք. ա. 716 թ.

գ. Ք. ա. 735 թ.

զ. Ք. ա. 714 թ.

1) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ

3) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ, 5-բ

2) 1-գ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

**8. Կատարել համապատասխանեցում.**

- 1) Դարեհ I-ի դեմ հպատակ երկրների ապստամբությունը
- 2) Աքեմենյանների դեմ մի քանի սատրապությունների ապստամբությունը Երվանդ II-ի գլխավորությամբ



3) Մարաստանի դեմ Կյուրոս Մեծի ապստամբության սկիզբը

4) Քսենոփոնի զորքի անցնելը Հայաստանի տարածքով

ա. Ք. ա. 553 թ.

բ. Ք. ա. 401 թ.

գ. Ք. ա. 521 թ.

1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ

դ. Ք. ա. 360-ական թթ.

ե. Ք. ա. 522-521 թթ.

3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

4) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ

**9. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերին.**

1) Շամ (Սամոս) Երվանդական

2) Երվանդ IV

3) Արտաշես I

4) Արտավազդ II

ա. Ք. ա. 220-201 թթ.

բ. Ք. ա. 189-160 թթ.

գ. Ք. ա. 55-34 թթ.

դ. Ք. ա. 260-240 թթ.

ե. Ք. ա. 240-210 թթ.

1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-գ

3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

4) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ

**10. Արտաշես I-ի՝ Մեծ Հայքին միացրած տարածքները համապատասխանեցնել ուղղությանը.**

1) արևելք

2) հարավ

3) հյուսիս

4) արևմուտք

ա. Կարնո երկիր, Եկեղիք, Դերջան

բ. Գուգարք

գ. Ծովիք, Կոմմագենե

դ. Փայտակարան, Կասպեից երկիր

ե. Տնորիք

1) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ

2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ

3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ

4) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա

**11. Արտաշես I-ի ստեղծած չորս զորավարությունների ղեկավարների անունները համապատասխանեցնել զորավարության ուղղությանը.**

1) արևելք

2) հարավ

3) հյուսիս

4) արևմուտք

ա. Արտաշեսի որդի Զարեհ

բ. Արտաշեսի որդի Վրույր

գ. Արտաշեսի որդի Տիրան

դ. Արտաշեսի որդի Արտավազդ

ե. զորավար Սմբատ

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ

2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե

4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե

**12. Կատարել Տիգրան Մեծի գահակալման շրջանի իրադարձությունների և տարեթվերի համապատասխանեցում.**

- |  |                                  |
|--|----------------------------------|
| 1) Սուլլայի գլխավորած հռոմեական բանակի մուտքը Կապադովկիա | ա. Ք. ա. 71 թ.                   |
| 2) հայկական բանակների մուտքը Ասորիք                      | բ. Ք. ա. 87 թ.                   |
| 3) Պտղոմայի քաղաքի գրավումը                              | գ. Ք. ա. 66 թ.                   |
| 4) հայկական բանակների ներխուժումը Պարթևստան              | դ. Ք. ա. 84 թ.                   |
| 5) Արտաշատի պայմանագրի կնքումը                           | ե. Ք. ա. 88 թ.<br>զ. Ք. ա. 92 թ. |

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-գ, 5-ա | 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-գ, 5-ե |
| 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ | 4) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-գ |

**13. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Կապադովկիա ներխուժած հռոմեական զորքի հրամանատարը  
բ. Անկախ Ծոփքի վերջին արքան  
գ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը  
դ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհի

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) Սելենե             | 3) Գոդերձ II          |
| 2) Սուլլա             | 4) Միհրդատ            |
|                       | 5) Արտանես            |
| 1) ա-5, բ-4, գ-3, դ-1 | 3) ա-5, բ-4, գ-2, դ-1 |
| 2) ա-5, բ-4, գ-3, դ-2 | 4) ա-2, բ-5, գ-4, դ-1 |

**14. Գահակալման տարիները համապատասխանեցնել թագավորի անվանը.**

- |                       |                                |
|-----------------------|--------------------------------|
| 1) Վաղարշ I           | ա. 161-163 թթ.                 |
| 2) Տրդատ I            | բ. 88-110 թթ.                  |
| 3) Բակուր Արշակունի   | գ. 117-140 թթ.                 |
| 4) Սանատրուկ          | դ. 110-117 թթ.<br>ե. 66-88 թթ. |
| 1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ | 3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ          |
| 2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ | 4) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ          |

**15. Կատարել համապատասխանեցում.**

**Հիմնադիր արքա**

- 1) Սարգստի I
- 2) Արգիշտի I
- 3) Արտաշես I

**Քաղաք**

- ա. Զարիշատ  
բ. Մծուրք  
գ. Տուշպա

4) Շամ Երվանդական

5) Սանատրուկ

1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-զ

2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-բ

դ. Երվանդաշատ

ե. Էրեբունի

զ. Սամոսատ

3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ

4) 1-ե, 2-զ, 3-ա, 4-զ, 5-դ

## 16. Կատարել համապատասխանեցում.

### Քաղաք

1) Մծուրք

2) Վաղարշապատ

3) Բագարան

4) Տիգրանակերտ

1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ

2) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա

### Հիմնադիր արքա

ա. Վաղարշ II

բ. Տիգրան II

գ. Սանատրուկ

դ. Երվանդ IV

ե. Վաղարշ I

3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ

4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

## 17. Կատարել համապատասխանեցում.

### Տարեթիվ

1) Ք. ա. 53 թ. մայիսի 6

2) Ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1

3) Ք. ա. 31 թ. սեպտեմբերի 2

4) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6

5) Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22

1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-բ

2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-բ

### Ճակատամարտ

ա. Գավգամելայի

բ. Տիգրանակերտի

գ. Խառանի

դ. Չելայի

ե. Ակցիումի

զ. Արածանիի

3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-զ

4) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ

## 18. Քաղաքների անունները համապատասխանեցնել դրանց վերաբերող բնութագրումներին.

1) «այն լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով»

2) «Հայկական Կարթագեն»

3) «գեղեցիկ և շքեղ հորինվածքով»

4) «Նոր քաղաք»

ա. Երվանդակերտ

բ. Վաղարշապատ

գ. Բագարան

1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-զ

2) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ

դ. Արտաշատ

ե. Տիգրանակերտ

3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա

4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

**19. Զորավարների անունները համապատասխանեցնել ճակատամարտերին.**

- 1) Ալցիումի
- 2) Արաձանիի

ա. Գնեոս Պոմպեոս  
բ. Պետոս  
գ. Մարկոս Կրասոս

- 1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ

- 3) Հուանդեայի
- 4) Խառանի

դ. Լուկիոս Լուկուլլոս  
ե. Մարկոս Անտոնիոս

- 3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ
- 4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա

**20. Տարեթիվը համապատասխանեցնել Տիգրան Մեծի գրաված երկրանվանը.**

1. Մարաստան
2. Կորդոբ
3. Ասորիք
4. Կապադովկիա

- 1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 2) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ

ա. Ք. ա. 84 թ.  
բ. Ք. ա. 93 թ.  
գ. Ք. ա. 94 թ.  
դ. Ք. ա. 88 թ.  
ե. Ք. ա. 87 թ.

- 3) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ
- 4) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ

**21. Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

1. Արտաշես II
2. Տիգրան IV
3. Արտավազդ II
4. Տիգրան III
5. Տիգրան II

- 1) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ, 5-դ
- 2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-դ

ա. Ք. ա. 20-8 թթ.  
բ. Ք. ա. 30-20 թթ.  
գ. Ք. ա. 5-2 թթ.  
դ. Ք. ա. 95-55 թթ.  
ե. Ք. ա. 8-5 թթ.  
զ. Ք. ա. 55-34 թթ.

- 3) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-դ
- 4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-գ

**22. Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

1. Արտավազդ III
2. Տիգրան I
3. Արտավազդ I
4. Արտաշես I
5. Տիգրան IV և Էրատո

- 1) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-գ
- 2) 1-գ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-ե

ա. Ք. ա. 160-115 թթ.  
բ. Ք. ա. 189-160 թթ.  
գ. Ք. ա. 2-Ք. հ. 1 թթ.  
դ. Ք. ա. 95-55 թթ.  
ե. Ք. ա. 5-2 թթ.  
զ. Ք. ա. 115-95 թթ.

- 3) 1-գ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-ե
- 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ, 5-գ

**23. Տարեթվերը համապատասխանեցնել ք. ա. I դարում տեղի ունեցած իրադարձություններին.**

- 1) Գայոս Կեսարի ժամանումը Հայաստան
- 2) Արտաշես II-ի սպանությունը
- 3) հայ-պարթևական պայմանագրի կնքումը Արտաշատում
- 4) Պտղոմայիս քաղաքի գրավումը
- 5) հայ-պոնտական դաշինքի կնքումը

ա. ք. ա. 66 թ.

բ. ք. ա. 71 թ.

գ. ք. ա. 5 թ.

1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ

2) 1-գ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ

դ. ք. ա. 94 թ.

ե. ք. ա. 20 թ.

զ. ք. ա. 54 թ.

3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ

4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-գ, 5-դ

**24. Հեղինակի անունը համապատասխանեցնել աշխատությանը.**

1. «Հայոց պատմություն»
2. «Ժամանակագրություն»
3. «Պատմություն»
4. «Բաքոսուիկներ»
5. «Մեծ մարդկանց մասին»

1) 1-գ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-բ

2) 1-գ, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ե

ա. Էվրիպիդես

բ. Ամֆիկրատես Աթենացի

գ. Ագաթանգեղոս

դ. Փիլոստրատոս

ե. Հիպոլիտիս

զ. Սեբեոս

3) 1-գ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-դ

4) 1-գ, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ե

**25. Կատարել համապատասխանեցում.**

N	Գետը	N	Ակունքը	N	Երկարությունը
1	Արաքս	1	Ծաղկանց և Ծաղկավետ լեռներ	1	500 կմ (Հայաստանի մասում)
2	Տիգրիս	2	Խաչափայտի լեռներ	2	600 կմ (Հայաստանի մասում)
3	Ճորոխ	3	Բյուրակնյան լեռներ	3	345 կմ
4	Եփրատ	4	Հայկական պար և Նազիկ լիճ	4	400 կմ (Հայաստանի մասում)
		5	Հայկական Տավրոս և Ծովք լիճ	5	1000 կմ

1	5	2
2	3	5
3	1	4
4	4	1

1)

1	3	1
2	2	4
3	4	3
4	1	5

2)

1	2	5
2	4	3
3	3	1
4	5	4

3)

1	3	5
2	5	4
3	2	3
4	1	1

4)

**26. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Նինվեի կործանումը	1	Ք. ա. 539 թ.	1	Տիգրան Երվանդյան
2	Մարաստանի դեմ ապստամբությունը	2	Ք. ա. 612 թ.	2	Քսենոփոն
3	Բաբելոնի նվաճումը	3	Ք. ա. 553 թ.	3	Պարույր Նահապետ
4	Տասը հազար հույների նահանջը	4	Ք. ա. 401 թ.	4	Կյուրոս Մեծ
		5	Ք. ա. 522 թ.	5	Դարեհ III

1. 

1	2	3
2	3	4
3	1	1
4	4	2

2. 

1	2	3
2	3	4
3	5	1
4	1	2

3. 

1	2	3
2	4	1
3	1	4
4	5	5

4. 

1	3	4
2	4	2
3	5	4
4	2	1

**27. Կատարել համապատասխանեցում.**

N	Պատմիչը	N	Վկայությունը	N	Իրադարձությունը
1	Դիոն Կասիոս	1	«Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:	1	Արտաշատի պայմանագրի կնքումը
2	Տակիտոս	2	«Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին»:	2	Հռանդեայի ճակատամարտը
3	Պլուտարքոս	3	«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ»:	3	Տիգրան IV-ի ճակատամարտը սարմատական ցեղերի դեմ
4	Ապպիանոս	4	«...գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում...»:	4	Արաձանիի ճակատամարտը
		5	«Հռոմեացիները նրան ողջունեցին արքայավայել»:	5	Տիգրանակերտի կառուցումը

1	4	5
2	5	1
3	1	3
4	3	2

1)

1	2	4
2	1	3
3	5	1
4	3	5

2)

1	2	2
2	3	5
3	1	3
4	5	4

3)

1	3	2
2	5	3
3	2	4
4	4	5

4)

### 28. Կատարել համապատասխանեցում.

N	Թագավորը	N	Հիմնադրած քաղաքը	N	Վայրը
1	Արտաշես I	1	Վաղարշապատ	1	Արածանիի ափին՝ Մշո դաշտում
2	Տիգրան II	2	Մծուրք	2	Արարատյան դաշտում՝ ներկայիս Խոր Վիրապի տեղում
3	Սանատրուկ	3	Տիգրանակերտ	3	Արարատյան դաշտում՝ Շրեշ բլրի վրա
4	Վաղարշ I	4	Արտաշատ	4	Աղձնիք նահանգում՝ Տիգրիս գետի վերին հոսանքում
		5	Արմավիր	5	Գառնիի մոտակայքում

1.

1	4	4
2	3	3
3	5	2
4	2	1

2.

1	4	5
2	3	3
3	5	4
4	1	2

3.

1	4	2
2	3	4
3	2	1
4	1	3

4.

1	2	3
2	1	4
3	3	1
4	5	2

### 29. Կատարել համապատասխանեցում.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Ալեքիումի ճակատամարտը	1	Ք. ա. 785 թ.	1	Տիգրան II
2	Արածանիի ճակատամարտը	2	Ք. ա. 185 թ.	2	Հաննիբալ
3	Էրեբունի ամրոցի հիմնադրումը	3	Ք. ա. 31 թ.	3	Արտաշես II
4	Արտաշատ քաղաքի կառուցումը	4	Ք. ա. 68 թ.	4	Արգիշտի I
		5	Ք. ա. 782 թ.	5	Օկտավիանոս

1.

1	4	3
2	2	1
3	1	2
4	5	5

2.

1	3	5
2	4	1
3	5	4
4	2	2

3.

1	3	5
2	4	1
3	1	4
4	2	3

4.

1	3	1
2	4	2
3	1	4
4	2	5

**30. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Հռանդեայի ճակատամարտը	1	Ք. ա. 331 թ.	1	Լուկուլլոս
2	Գավգամելայի ճակատամարտը	2	Ք. ա. 53 թ.	2	Անտոնիոս
3	Արաձանիի ճակատամարտը	3	Ք. ա. 31 թ.	3	Կրասոս
4	Խառանի ճակատամարտը	4	Ք. ա. 68 թ.	4	Պետոս
		5	62 թ.	5	Ալեքսանդր Մակեդոնացի

1	5	2
2	3	1
3	1	3
4	2	4

1)

1	3	4
2	2	1
3	1	2
4	4	3

2)

1	2	3
2	1	5
3	4	4
4	5	3

3)

1	5	4
2	1	5
3	4	1
4	2	3

4)

**31. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Մագնեսիայի ճակատամարտը	1	Ք. ա. 31 թ.	1	Պոմպեոս
2	Ակցիումի ճակատամարտը	2	Ք. ա. 53 թ.	2	Անտոնիոս
3	Տիգրանակերտի ճակատամարտը	3	Ք. ա. 190 թ.	3	Լուկուլլոս
4	Արտաշատի պայմանագրի կնքումը	4	Ք. ա. 69 թ.	4	Անտիոքոս III
		5	Ք. ա. 66 թ.	5	Ալեքսանդր Մակեդոնացի

1	5	4
2	3	2
3	1	3
4	2	1

1)

1	3	1
2	2	4
3	5	5
4	4	3

2)

1	2	3
2	1	5
3	4	4
4	5	2

3)

1	3	4
2	1	2
3	4	3
4	5	1

4)

**32. Կատարել համապատասխանեցում.**

N	Ճակատամարտը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Գավգամելայի	1	Ք. ա. 31 թ.	1	Տիգրան II
2	Մագնեսիայի	2	Ք. ա. 53 թ.	2	Անտիոքոս III
3	Ակցիումի	3	Ք. ա. 190 թ.	3	Մ. Անտոնիոս
4	Խառանի	4	Ք. ա. 331 թ.	4	Ա. Մակեդոնացի
		5	Ք. ա. 69 թ.	5	Մ. Կրասոս



1. 

1	4	3
2	3	2
3	1	5
4	2	1

 2. 

1	5	4
2	3	1
3	1	3
4	2	5

 3. 

1	4	4
2	3	2
3	1	3
4	2	5

 4. 

1	3	3
2	4	2
3	5	4
4	1	5

**33. Կատարել համապատասխանեցում.**

N	Դիցարանի աստվածը	N	Գործառույթները	N	Պաշտամունքի գլխավոր կենտրոնը
1	Տիր	1	Մայրության, պտղաբերության ու արգասավորության հովանավոր	1	Բագառիճ ավան
2	Նանե	2	Արևի, լույսի, կրակի և արդարության հովանավոր	2	Երազամույն
3	Անահիտ	3	Ընտանիքի հովանավոր	3	Աշտիշատ
4	Արեգ-Միիր	4	Ռազմի, քաջության և ամպրոպի հովանավոր	4	Երիզա ավան
		5	Դպրության, գրի ու գրականության, արվեստի ու գիտության հովանավոր	5	Թիլ ավան

1. 

1	5	2
2	3	5
3	1	4
4	2	1

 2. 

1	4	2
2	3	5
3	2	3
4	5	1

 3. 

1	5	1
2	3	5
3	1	4
4	2	2

 4. 

1	5	2
2	3	3
3	1	4
4	2	1

**7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

1. Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթների բարձրությունները համապատասխանեցնել լեռնագագաթների անվանումներին.

- |               |           |
|---------------|-----------|
| ա. Կապուտջուղ | 1) 5165 մ |
| բ. Արագած     | 2) 3925 մ |
| գ. Մասիս      | 3) 3906 մ |
| դ. Սիփան      | 4) 3975 մ |
| ե. Սիս        | 5) 4434 մ |
|               | 6) 4096 մ |

**2. Կատարել համարժեք անունների համապատասխանեցում.**

- |                |                 |
|----------------|-----------------|
| ա. Ծոփք        | 1) Կորճայք      |
| բ. Մոկք        | 2) Տարոն        |
| գ. Տուրուբերան | 3) Կարնո աշխարհ |
| դ. Բարձր Հայք  | 4) Մոկս         |
| ե. Կորդուք     | 5) Չորրորդ Հայք |
|                | 6) Տայք         |

**3. Հայկազուն–Երվանդական արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված փաստերին.**

- |                         |                        |
|-------------------------|------------------------|
| ա. Տիգրան Երվանդյան     | դ. Շամ (Սամոս)         |
| բ. Երվանդ (Օրոնտես) III | ե. Օրոնտես (Երվանդ II) |
| գ. Երվանդ I Սակավակյաց  |                        |

- 1) Գլխավորել է Աքեմենյանների դեմ բարձրացած մի քանի սատրապությունների ապստամբությունը:
- 2) Հատել է դրամներ, որոնք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են:
- 3) Կյուրոս Մեծի հետ միացյալ ուժերով ապստամբել է Մարաստանի դեմ:
- 4) Ապաստան է տվել սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը:
- 5) Գավգամելայի ճակատամարտում առաջնորդել է ակեմենյան զորքի աջ թևը:
- 6) Ապստամբել է Մարաստանի արքա Կիաքսարի դեմ:

**4. Տարեթվերը համապատասխանեցնել ճակատամարտերին.**

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| ա. Խառանի ճակատամարտը   | դ. Տիգրանակերտի ճակատամարտը |
| բ. Ակցիումի ճակատամարտը | ե. Հռանդեայի ճակատամարտը    |
| գ. Արածանիի ճակատամարտը |                             |

- |                |                |
|----------------|----------------|
| 1) Ք. ա. 53 թ. | 4) Ք. ա. 68 թ. |
| 2) Ք. ա. 69 թ. | 5) 62 թ.       |
| 3) Ք. ա. 31 թ. | 6) 61 թ.       |

**5. Կատարել համապատասխանեցում.**

- |              |   |
|--------------|---|
| ա. Էրատո     | 1) Սելևկյան թագուհի                                   |
| բ. Աստղիկ    | 2) Երկնային լույսի, սիրո, գեղեցկության դիցուհի        |
| գ. Սելենե    | 3) ընտանիքի հովանավոր դիցուհի                         |
| դ. Նանե      | 4) Եգիպտոսի թագուհի                                   |
| ե. Կլեոպատրա | 5) մայրության, պտղաբերության, արգասավորության դիցուհի |
|              | 6) Արտաշեսյան արքայատոհմի վերջին թագուհի              |

**6. Կատարել համապատասխանեցում.**

- |                                  |                  |
|----------------------------------|------------------|
| ա. շուրջ 70 000–80 000           | դ. 48 000        |
| բ. 16 000 այրուձի, 24 000 հետևակ | ե. շուրջ 350 000 |
| գ. 13 000                        |                  |

- 1) հայոց զինված ուժերի թիվը Արտաշես I–ի օրոք
- 2) Արտավազդ II–ի՝ Մարկոս Անտոնիոսին տրամադրած զինված ուժերի թիվը
- 3) հայոց զինված ուժերի թիվը Վանի թագավորությունում՝ ըստ «Սարգուրյան տարեգրության»
- 4) հայոց զինված ուժերի թիվը Երվանդ Սակավակյացի օրոք
- 5) հայոց զինված ուժերի թիվը Տիգրանակերտի ճակատամարտում
- 6) Արտավազդ II–ի՝ Կրատոսին խոստացած զինված ուժերի թիվը

**7. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել պատմիչների՝ նրանց վերաբերյալ կամ նրանց առնչվող խոսքերին.**

- ա. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:
- բ. Հայոց արքան ու նրա ընտանիքը.... «ցույց են տալիս իրենց ոգու արիությունը»:
- գ. «Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:
- դ. «Կառուցեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը, և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:
- ե. «Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ»:
- |                     |              |
|---------------------|--------------|
| 1) Արտավազդ II      | 4) Տրդատ III |
| 2) Տիգրան Երվանդյան | 5) Տիգրան IV |
| 3) Արտաշես I        | 6) Սանատրուկ |

**8. Պայմանագրերը համապատասխանեցնել դրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Դաշինքն ամրապնդվեց հայոց թագավորի քրոջ և պարթևների թագաժառանգ Բակուրի ամուսնությամբ:
- բ. Պարսից արքա Ներսեհը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը, և Տրդատը վերջնականապես հաստատվեց հայոց գահին:
- գ. Ի նշան հաշտության՝ Տրդատը թագը հանեց և դրեց Ներոնի արձանի մոտ այն կայսեր ձեռքից Հռոմում ստանալու պայմանով:
- դ. Դաշինքն ամրապնդվեց Միհրդատ Եվպատորի դստեր և Տիգրան II–ի ամուսնությամբ:

ե. Ըստ դաշինքի՝ «Հայաստանը հայտարարվեց հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1) Ապամեայի պայմանագիր  | 4) Մծբինի պայմանագիր        |
| 2) Հռանդեայի պայմանագիր | 5) հայ-պարթևական պայմանագիր |
| 3) Արտաշատի պայմանագիր  | 6) հայ-պոնտական պայմանագիր  |

**9. Տիգրան Մեծի կողմից գրավված երկրների կամ տարածքների անվանումները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |                |               |
|----------------|---------------|
| ա. Ք. ա. 87 թ. | 1) Ասորիք     |
| բ. Ք. ա. 93 թ. | 2) Ծովք       |
| գ. Ք. ա. 94 թ. | 3) Կապադովկիա |
| դ. Ք. ա. 71 թ. | 4) Պոնտոս     |
| ե. Ք. ա. 84 թ. | 5) Մարաստան   |
|                | 6) Պտղոմայիս  |

**10. Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

- |              |                |
|--------------|----------------|
| ա. Վաղարշ II | 1) 88–110 թթ.  |
| բ. Տրդատ II  | 2) 66–88 թթ.   |
| գ. Տրդատ I   | 3) 198–215 թթ. |
| դ. Խոսրով I  | 4) 164–185 թթ. |
| ե. Սանատրուկ | 5) 185–198 թթ. |
|              | 6) 216–252 թթ. |

**11. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- |  |           |
|--|-----------|
| ա. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի դեմ |           |
| բ. Ոսխայի ճակատամարտը                                    |           |
| գ. Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը                |           |
| դ. Հռանդեայի ճակատամարտը                                 |           |
| ե. Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում                    |           |
| 1) 298 թ.  | 4) 276 թ. |
| 2) 62 թ.   | 5) 226 թ. |
| 3) 252 թ.  | 6) 297 թ. |

**12. Պաշտամունքի կենտրոնները համապատասխանեցնել աստվածների անուններին.**

- |                                     |              |
|-------------------------------------|--------------|
| ա. Արամազդ                          | դ. Նանե      |
| բ. Անահիտ                           | ե. Արեգ–Միհր |
| գ. Վահագն                           |              |
| 1) Տուրուբերան նահանգ, Աշտիշատ ավան |              |
| 2) Բարձր Հայք նահանգ, Բագադիճ ավան  |              |
| 3) Բարձր Հայք նահանգ, Թիլ ավան      |              |

- 4) Բարձր Հայք նահանգ, Անի ամրոց
- 5) Այրարատ նահանգ, Երազամույն վայր
- 6) Բարձր Հայք նահանգ, Երիզա ավան

**13. Հեղինակի անունը համապատասխանեցնել աշխատությանը.**

- |                        |                         |
|------------------------|-------------------------|
| ա. «Անաբասիս»          | դ. «Հայոց պատմություն»  |
| բ. «Բաքոսուհիներ»      | ե. «Մեծ մարդկանց մասին» |
| գ. «Ժամանակագրություն» |                         |
| 1) Մեթրոդորոս Սկեփսացի | 4) Ամֆիկրատես Աթենացի   |
| 2) Քսենոփոն            | 5) Էվրիպիդես            |
| 3) Հիպպոլիտիս          | 6) Մովսես Խորենացի      |

**14. Արտաշեսյան արքայատոհմի արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- |               |                |
|---------------|----------------|
| ա. Տիգրան IV  | դ. Արտավազդ II |
| բ. Արտաշես II | ե. Արտավազդ I  |
| գ. Արտաշես I  |                |
- 1) Հռոմի դաշնակից Ատրպատականի թագավորությունը միացրեց հայոց թագավորությանը:
  - 2) Ջոհվեց Հայաստան ներխուժած սարմատական քոչվոր ցեղերի դեմ մղված ճակատամարտում:
  - 3) Կառուցեց «Արքունի պողոտան», որ միմյանց էր կապում իր տերության երեք մայրաքաղաքները:
  - 4) Պարթևստանի դեմ պայքարում պահպանեց Հայաստանի անկախությունը, բայց իր եղբորորդուն ստիպված պատանդ տվեց պարթևներին:
  - 5) Մահապատժի ենթարկվեց Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի կարգադրությամբ:
  - 6) Երկրի սահմանների պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար ստեղծեց չորս զորավարություններ:

**15. Գահակալման տարիները համապատասխանեցնել Վանի թագավորության արքայի անվանը.**

- |               |                          |
|---------------|--------------------------|
| ա. Մենուա     | 1) Ք. ա. մոտ 685–645 թթ. |
| բ. Ռուսա II   | 2) Ք. ա. մոտ 825–810 թթ. |
| գ. Սարդուրի I | 3) Ք. ա. 764–735 թթ.     |
| դ. Իշպուլինի  | 4) Ք. ա. մոտ 835–825 թթ. |
| ե. Արգիշտի I  | 5) Ք. ա. 786–764 թթ.     |
|               | 6) Ք. ա. մոտ 810–786 թթ. |

## 8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ, ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

### 8-1. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

#### 1. ՀՀ-ի կազմում գավառներ են ընդգրկված Մեծ Հայքի հետևյալ նահանգներից.

- 1) Այրարատ, Գուգարք, Սյունիք, Արցախ
- 2) Գուգարք, Սյունիք, Այրարատ, Ուտիք
- 3) Ուտիք, Այրարատ, Սյունիք, Տայք
- 4) Սյունիք, Գուգարք, Տայք, Այրարատ

#### 2. ԼՂՀ-ի կազմում գավառներ են ընդգրկված Մեծ Հայքի հետևյալ նահանգներից.

- 1) Արցախ, Այրարատ
- 2) Արցախ, Ուտիք
- 3) Սյունիք, Արցախ
- 4) Սյունիք, Ուտիք

#### 3. Ո՞ր շարքի բոլոր մայրաքաղաքներն են գտնվել Այրարատ նահանգում.

- 1) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Վան, Բագարան
- 2) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Տիգրանակերտ, Անի, Դվին, Երևան
- 3) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Վան, Երազգավորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան
- 4) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Երազգավորս, Անի, Դվին, Երևան

#### 4. Հայկական լեռնաշխարհը արևելքից սահմանակից է՝

- 1) Կասպից ծովին, Իրանական բարձրավանդակին և Ուրմիո լճին
- 2) Փոքրասիական սարահարթին, Կասպից ծովին և Ուրմիո լճին
- 3) Իրանական բարձրավանդակին, Փոքրասիական սարահարթին, Կասպից ծովին
- 4) Փոքրասիական սարահարթին, Իրանական բարձրավանդակին և Պարսից ծոցին

#### 5. Տրված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

- ա) Արաքսը (հնում՝ Երասխ) սկիզբ է առնում Բյուրակնյան (Սրմանց) լեռներից և խառնվելով Կուր գետին՝ թափվում է Կասպից ծով:
- բ) Ճորոխն ունի 345 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծովք լճից և միախառնվելով Տիգրիսին՝ թափվում է Պարսից ծոց:
- գ) Եփրատ գետն ունի երկու ճյուղ՝ Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ (Արածանի), որոնք միախառնվում են Ակն քաղաքի մոտ:
- դ) Տիգրիսը, որ Հայկական լեռնաշխարհի հարավային մասում է, Հայաստանով անցնում է 400 կմ և նույնպես ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և Արևելյան:
- ե) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1916 մ և ունի 4 կղզի:

1) բ, ե

2) բ, դ

3) ա, գ

4) ա, ե

**6. Ընտրել այն շարքը, որը կազմված է բացառապես Վանա լճի կղզիներից.**

- 1) Լիմ, Կտուց, Արճակ, Նագիկ
- 2) Լիմ, Կտուց, Արտեր, Աղթամար
- 3) Արտեր, Աղթամար, Բերկրի, Նագիկ
- 4) Բերկրի, Նագիկ, Աղթամար, Կտուց

**7. Ինչ տարածքներ էր զբաղեցնում հնդեվրոպական նախահայրենիքը.**

- 1) Հայկական լեռնաշխարհը, Իրանական սարահարթի հարավարևելյան, Փոքր Ասիայի արևմտյան, Միջագետքի հյուսիսային շրջանները
- 2) Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները
- 3) Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի արևելյան, Փոքր Ասիայի հյուսիսային, Իրանական սարահարթի հարավային շրջանները
- 4) Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հարավարևելյան շրջանները

**8. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկվեց միայն Նոյ նահապետն՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 2) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երեք շերտ՝ հնագույն, նախաքրիստոնեական և հետքրիստոնեական:
- 3) Ըստ Աստվածաշնչի՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Սեմից, Քամից:
- 4) Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս-արևմուտքում ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 50 000 քառ. կմ տարածք:
- 5) Հայկական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անունները:
- 6) Հայկական ավանդության համաձայն՝ Արամայակի անունով է կոչվել Արագած լեռը:

**9. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկվեց միայն Նոյ նահապետն՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 2) Եփրատ գետն ունի 500 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից և, միախառնվելով Տիգրիսին, թափվում Պարսից ծոց:
- 3) Հնդեվրոպական նախահայրենիքը տարածվում էր Հայկական լեռնաշխարհում, Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում, Հյուսիսային Միջագետքում և Փոքր Ասիայի արևելյան շրջաններում:

- 4) Ճորոխ գետը սկիզբ է առնում Սրմանց լեռներից և թափվում է Սև ծով:
- 5) Սարղուրի II-ի օրոք Վանի թագավորության սահմանները հասնում էին մինչև Սև, Կասպից և Միջերկրական ծովեր և Պարսից ծոց:
- 6) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է երեք լեզուներով՝ էլամերեն, բաբելերեն, պարսկերեն:

**10. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից հետո վերացավ ողջ մարդկությունը, փրկվեց միայն Նոյ նահապետը՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 2) Բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հայկից, Բելից, Թորգոմից:
- 3) Վրացական ավանդությունը գրի է առնվել V-VII դարերում վրաց հեղինակների կողմից:
- 4) Բնիկ հայկական պատմական ավանդագրույցը մեզ է հասել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհիվ, ավանդագրույցի առանձին դրվագներ ի մի են բերվել XVIII դարում Միքայել Չամչյանի «Հայոց պատմության» էջերում:
- 5) Վրացական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անունները:

**11. Ընտրել այն հնդեվրոպական լեզուները, որոնք ինքնուրույն և առանձին լեզվաճյուղեր են.**

- |               |              |            |            |
|---------------|--------------|------------|------------|
| ա) գերմաներեն | դ) հայերեն   |            |            |
| բ) հունարեն   | ե) ռուսերեն  |            |            |
| գ) իտալերեն   | զ) ալբաներեն |            |            |
| 1) ա, գ, դ    | 2) բ, գ, դ   | 3) բ, դ, զ | 4) դ, ե, զ |

**12. Ընտրել երկու ճիշտ պնդումները.**

- ա. Ք. ա. IX դ. 80-70-ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող պետական կազմավորումներից նշանավոր էին հարավում՝ Միտանին, իսկ հյուսիսում՝ Հայասան:
- բ. Ք. ա. 859-843 թթ. ասորեստանյան արշավանքներին դիմակայած Արամուն ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող առաջին ուրարտական արքան էր:
- գ. Արամ Ուրարտացին ոչ միայն ջախջախել է ասորեստանցի նվաճողներին, այլև գրավել Մարաստանն ու Փոքր Ասիայի զգալի մասը և հաղթական արշավանքներով հասել մինչև Պարսից ծոցի և Սև ծովի ափերը:
- դ. Հայկական լեռնաշխարհում առաջացած պետական կազմավորումներից Նաիրի թագավորությանը հաջողվել է Ք. ա. 880-ական թվականներից սկսած՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը միավորել իր իշխանության ներքո:



ե. Քանի որ «Ուրարտուն» դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ուստի ասորեստանյան աղբյուրները շարունակում են այդ անունով հիշատակել նաև Նաիրի թագավորությունը:

- 1) ա, բ                      2) բ, ե                      3) դ, ե                      4) գ, ե

**13. Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի տարածքում որո՞նք էին երեք խոշոր համադաշնությունները.**

- ա) Արատտա                      դ) Նաիրի  
բ) Հայասա                      ե) Դիաուխի  
գ) Էթիունի                      զ) Ծուփանի

- 1) ա, գ, զ                      2) բ, ե, զ                      3) գ, դ, ե                      4) գ, դ, զ

**14. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Արամ Ուրարտացին ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող առաջին ուրարտական արքան է:
- 2) Ըստ Ղ. Փարպեցու՝ Արամ Ուրարտացին հետ է շարտել ասորեստանյան նվաճողներին և հաղթական արշավանքներով հասել մինչև Սև ու Կասպից ծովերի ափերը:
- 3) Ք. ա. 830–ական թթ. Հայաստանի տարածքում ձևավորվել էին մի քանի համադաշնություններ, որոնցից ամենամեծը Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում և հարակից շրջաններն ընդգրկող Էթիունի երկրի համադաշնությունն էր:
- 4) Վանի թագավորության սահմանները Սարգուրի II–ի օրոք հյուսիսում հասնում էին Սև ծով, հյուսիս–արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Պարսից ծոց և հարավ–արևմուտքում՝ Միջերկրական ծով:
- 5) Սարգուրի I–ի օրոք Վանի թագավորությունը հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:
- 6) Ռուսա III–ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրություններ են հայտնաբերվել Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:

**15. Ինչ տարածք էր ընդգրկում Էթիունի համադաշնությունը.**

- 1) Վանա լճի ավազանը, Հայկական Տավրոսից հարավ՝ Տիգրիսի վերին հոսանքը
- 2) Արարատյան դաշտը, Սևանա լճի ավազանը, Սյունիքը
- 3) Սյունիքը, Արաքսի վերին հոսանքների շրջանը
- 4) Հայկական պարից հյուսիս՝ Աղստևի հովիտը

**16. Ո՞ր շարքում են ներկայացված Մենուայի նվաճումները.**

- 1) Հայկական պարի արևելյան հատված, Դիաուխի, Մելիդ, Մանայի թագավորություն
- 2) Արդինի–Մուասիր, Արաքսի վերին հոսանքի շրջաններ, Պարսուա երկիր
- 3) Դիաուխի, Էթիունի, Կարսի սարահարթ, Զաքախա
- 4) Մելիտես, Սևանա լճի ավազան, Արմե, Միջերկրական ծովի արևելյան ավազան

**17. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Վանի թագավորության բանակի գերագույն հրամանատարը առաջին սպարապետն էր:
- 2) Միայն Արգիշտի I և Սարգուրի II արքաների օրոք բերվել են 350 հազար ռազմագերիներ:
- 3) Վանի թագավորության բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից:
- 4) «Մենուայի ջրանցքն» ունեցել է 72 կմ երկարություն:
- 5) Իշպուիների և Մենուայի ռազմական բարեփոխումների շնորհիվ արհեստավարժ կանոնավոր բանակը փոխարինվեց դաշնային աշխարհազորով:

**18. Արձանագրություններում Վանի թագավորության իր գործակալություններն են հիշատակվել.**

- 1) սպարապետ, հազարապետ, դատավոր
- 2) ամիրսպասալար, աթաբեկ, գունդստաբլ
- 3) աշխարհակալ, գավառակալ, սահմանապահ կուսակալ
- 4) մաղխագ, թագադիր ասպետ, հայր մարդպետ

**19. Բացի Հայաստանից՝ իր երկրների վրա էր տարածվում Տիգրան I Երվանդյանի իշխանությունը.**

- 1) Վրաստանի, Աղվանքի և Մարաստանի
- 2) Բաբելոնի, Ասորեստանի ու Աղվանքի
- 3) Կապադովկիայի, Վրաստանի և Աղվանքի
- 4) Կապադովկիայի, Կոմմագենեի և Վիրքի

**20. Ք. ա. 331 թ. ովքեր վերականգնեցին Հայաստանի անկախությունը.**

- 1) Տիգրան Երվանդյանը՝ Մեծ Հայքում, Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում
- 2) Արտաշեսը՝ Մեծ Հայքում, Զարեհը՝ Ծովքում
- 3) Օրոնտես-Երվանդ III-ը՝ Մեծ Հայքում, Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում
- 4) Երվանդ IV-ը՝ Մեծ Հայքում, Շամը՝ Կոմմագենետում

**21. Երբ և որտեղ է վերականգնվել Հայկազունների գերիշխանությունը.**

- 1) Ք. ա. VI դարի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում
- 2) Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում
- 3) Ք. ա. V դարի սկզբներին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում
- 4) Ք. ա. VII դարի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում

**22. Տրված փաստարկներից իր երկուսն են սխալ.**

- ա. Ք. ա. 650–ական թթ. առաջին կեսին տեղի ունեցան ռազմական բախումներ Ասորեստանի և Վանի թագավորության միջև:
- բ. Ք. ա. VII դարի սկզբին Վանի արքայատոհմից անցում կատարվեց հաջորդ արքայատոհմին առանց պատերազմական գործողությունների, պալատական հեղաշրջման միջոցով:

գ. Հայկական լեռնաշխարհում համադաշնությունների համակարգը գոյություն ուներ՝ սկսած Բ. ա. III հազարամյակից:

դ. Հայկական լեռնաշխարհում համադաշնություններից անցումը կենտրոնացված պետության տեղի է ունեցել Բ. ա. X–IX դարերում:

1) Բ, գ

2) ա, դ

3) ա, Բ

4) Բ, դ

### 23. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.

1) Արաքսը (հնում՝ Երասխ) սկիզբ է առնում Բյուրակնյան (Սրմանց) լեռներից և խառնվելով Կուր գետին՝ թափվում է Կասպից ծով:

2) Ճորոխն ունի 500 կմ երկարություն և սկիզբ է առնում Ծովք լճից:

3) Հնդեվրոպական նախահայրենիքը տարածվում էր Հայկական լեռնաշխարհում, Իրանական սարահարթի հարավարևելյան, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հարավային շրջաններում:

4) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից հետո վերացավ ողջ մարդկությունը, փրկվեց միայն Նոյ նահապետը՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:

5) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է էլամերեն, հունարեն, պարսկերեն:

### 24. Երվանդ Սակավակյացի օրոք հայոց թագավորության սահմանները հասնում էին՝

1) հյուսիս–արևելքում՝ Կուր գետին, հյուսիս–արևմուտքում՝ Եփրատ գետի ավազանին, արևելքում՝ Կասպից ծովին, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետքին

2) հյուսիս–արևելքում՝ Կուր գետին, հյուսիս–արևմուտքում՝ Սև ծովին, արևելքում՝ Կասպից ծովին, իսկ հարավում՝ Հարավային Միջագետքին

3) հյուսիս–արևելքում՝ Կուր գետին, հյուսիս–արևմուտքում՝ Սև ծովին, արևելքում՝ Մարաստանին, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետքին

4) հյուսիս–արևելքում՝ Կուր գետին, հյուսիս–արևմուտքում՝ Ճորոխ գետի ավազանին, արևելքում՝ Մարաստանին, իսկ հարավում՝ Հարավային Միջագետքին

### 25. Բեհիսթունյան արձանագրությունը ո՞ր լեզուներով է գրված.

1) էլամերեն, արամեերեն, պարսկերեն

2) հայերեն, բաբելոներեն, արամեերեն

3) հայերեն, էլամերեն, պարսկերեն

4) էլամերեն, բաբելոներեն, պարսկերեն

### 26. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.

1) Կյուրոս Մեծի ստեղծած Աքեմենյան աշխարհակալության սահմանները ձգվում էին Միջերկրական ծովից և Եգիպտոսից մինչև Հնդկաստան:

2) Մինչ Արտաշես I–ի միավորիչ գործունեությունը հայկական մի շարք երկրամասեր նվաճվել էին Վիրքի, Աղվանքի, Պոնտոսի, Սելևկյան պետության և Պարթևստանի կողմից:

- 3) Արևմուտքում Արտաշես I-ը Մեծ Հայքին միացրեց Կարնո երկիրը, Եկեղիք ու Տնորիք գավառները:
- 4) Հյուսիսում Արտաշես I-ը Մեծ Հայքին է միավորել Կասպեից երկիրն ու Գուգարքը:
- 5) Արտաշատ մայրաքաղաքը կառուցվել է Ք. ա. 185 թ. Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում:

**27. Արտաշես I-ը արևմուտքում Մեծ Հայքին է վերադարձրել.**

- 1) Ծոփքը, Աղձնիքը և Բարձր Հայքը
- 2) Կարնո երկիրը, Եկեղիքը և Դերջանը
- 3) Տայքը, Գուգարքը և Ուտիքը
- 4) Դարանաղին, Եկեղիքը և Մանանաղին

**28. Մինչ Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը հայկական մի շարք երկրամասեր ռո՛ր հարևան երկրների կողմից էին նվաճվել.**

- 1) Պոնտոսի, Մարաստանի, Վիրքի, Աղվանքի
- 2) Մարաստանի, Վիրքի, Պոնտոսի, Սելևկյան պետության
- 3) Պարթևստանի, Վիրքի, Աղվանքի, Հռոմի
- 4) Ատրպատականի, Վիրքի, Հռոմի, Սելևկյան պետության

**29. Արտաշես I-ի մասին Մովսես Խորենացին ինչ վիպերգեր է գրի առել.**

- 1) «Արտաշես և Տիգրան», «Արտաշես և Արտավազը»
- 2) «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազը»
- 3) «Տիգրան և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ»
- 4) «Արտաշես և Երվանդ», «Տիգրան և Արտաշես»

**30. Ո՞ր շարքի բոլոր երկրներն են Տիգրան Մեծի տերության հպատակ թագավորություններ.**

- 1) Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե, Ասորիք, Աղվանք, Հրեաստան, Փյունիկիա, Կիլիկիա, Կոմմագենե, Մարաստան
- 2) Ասորիք, Աղվանք, Պարթևստան, Փյունիկիա, Կիլիկիա, Կոմմագենե, Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե
- 3) Փյունիկիա, Կիլիկիա, Ասորիք, Աղվանք, Պարթևստան, Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե
- 4) Փյունիկիա, Կիլիկիա, Ասորիք, Աղվանք, Մարաստան, Վիրք, Պալմիրա, Օսրոյենե, Ադիաբենե

**31. Երբ և ո՞ւմ ընտանիքում է ծնվել Արտաշես I-ը.**

- 1) Ք. ա. մոտ 260 թ., մեծատոհմիկ Երվանդի
- 2) Ք. ա. մոտ 230 թ., մեծատոհմիկ Զարեհի
- 3) Ք. ա. մոտ 220 թ., մեծատոհմիկ Տիգրանի
- 4) Ք. ա. մոտ 215 թ., մեծատոհմիկ Սմբատի

**32. Ո՞ր շարքի բոլոր երկրներն ու ժողովուրդներն են Տիգրան Մեծի օրոք եղել Հայաստանի քաղաքական ազդեցության ոլորտում.**

- 1) Նաբաթեա, Հրեաստան, Մարաստան, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի վերին ավազանի սկյութական ցեղեր
- 2) Նաբաթեա, Եգիպտոս, Ասորիք, Պարսից ծոցի և Արաբական ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի ստորին ավազանի քուշանական ցեղեր
- 3) Նաբաթեա, Հրեաստան, Պարթևստան, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի ստորին ավազանի արիական ցեղեր
- 4) Նաբաթեա, Հրեաստան, Պարթևստան, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի ստորին ավազանի սկյութական ցեղեր

**33. Մինչև ո՞ր էր տարածվում Տիգրան Մեծի ստեղծած Հայկական տերությունը.**

- 1) Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Հնդկաստան
- 2) Սև ծովից մինչև Կասպից ծով, Բաբելոնով դեպի Միջերկրական ծով
- 3) Եգիպտոսից ու Կարմիր ծովից մինչև Կովկասյան Մեծ լեռներ, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով
- 4) Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Միջագետք, Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան

**34. Ե՞րբ և որտե՞ղ է կառուցվել մայրաքաղաք Տիգրանակերտը.**

- 1) Ք. ա. 90–80–ական թթ. Արարատյան դաշտում
- 2) Ք. ա. 80–70–ական թթ. Աղձնիք նահանգում
- 3) Ք. ա. 70–60–ական թթ. Արցախում
- 4) Ք. ա. 60–50–ական թթ. Բարձր Հայքում

**35. Որտե՞ղ և է՞րբ տեղի ունեցավ Արտավազդի ու Կրասոսի հանդիպումը.**

- 1) Արտաշատում, Ք. ա. 56 թ. գարնանը
- 2) Ասորիքում, Ք. ա. 54 թ. գարնանը
- 3) Տիգրանակերտում, Ք. ա. 53 թ. մայիսին
- 4) Ծովքում, Ք. ա. 55 թ. աշնանը

**36. Թագաժառանգ Բակուրի գլխավորությամբ ո՞ր տարածքներից դուրս մղվեցին հռոմեացիները.**

- 1) Ասորիք, Հրեաստան, Փյունիկիա, Ատրպատական, Օսրոյենե
- 2) Ասորիք, Փյունիկիա, Պաղեստին, Հրեաստան, Կիլիկիա
- 3) Պաղեստին, Կիլիկիա, Ադիաբենե, Միգդոնիա, Ասորիք
- 4) Եգիպտոս, Կիլիկիա, Հրեաստան, Օսրոյենե, Աղվանք

**37. Տրված պատմական իրադարձություններից որո՞նք են տեղի ունեցել Տիգրան II-ի օրոք.**

- 1) Պարթևստանի կողմից «70 հովիտների» վերադարձնելը Հայաստանին
- 2) Խառանի ճակատամարտը

- 3) Հռանդեայի պայմանագրի կնքումը
- 4) Ոսխայի ճակատամարտը
- 5) Արաճանիի ճակատամարտը

**38. Գտնել սխալ փաստարկները.**

- 1) Արտավազդը Կրասուհին խոստացավ տրամադրել 24–հազարանոց այրուձի և 16–հազարանոց հետևակ՝ ընդամենը 40 հազար զինվոր:
- 2) Հռոմում ստեղծված Առաջին եռապետության մեջ էին Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը և Մարկոս Կրասոսը:
- 3) Անտոնիոսը Արտավազդին հրավիրում էր Ասորիք՝ Արտավազդի քրոջ և իր ու Կլեոպատրայի որդի Ալեքսանդրի ամուսնության հարցը քննարկելու:
- 4) Կրասոսը Ք. ա. 53 թ. գարնանն անցավ Եփրատը և սկսեց իր արշավանքը դեպի Պարթևստան:
- 5) Անտոնիոսը միայն Փրասպայի պարիսպների տակ ունեցավ 20 հազար սպանված զինվորի կորուստ:

**39. Ընտրել ճիշտ փաստարկները.**

- 1) 61 թ. անցնելով Արաճանի գետը՝ հռոմեական զորքը բանակ է դնում Հռանդեա (Եռանդ) վայրում:
- 2) Հայ–պարթևական զորքը, ջախջախելով Հայկական պարի լեռնանցքներում տեղակայված հռոմեական կայազորները, Հռանդեա վայրում շրջապատում է Կորբուլոնի բանակը:
- 3) 64 թ. Հայաստան է գալիս Կորբուլոնը և բանակցություններ վարում Վաղարշի ու Տրդատի հետ:
- 4) 65 թ. Տրդատը մեծ շքախմբով՝ իր ընտանիքով և 3000 հեծյալներով, ուղևորվում է Հռոմ:
- 5) Տրդատ I–ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց Կովկասից սարմատական ցեղերի ներխուժման հետևանքով:

**40. Հայաստանում էրբ է սկսվել հելլենիստական ժամանակաշրջանը և որքան է տևել.**

- 1) Ք. ա. IV դարից, տևել է 2 դար
- 2) Ք. ա. III դարից, տևել է 6 դար
- 3) Ք. ա. II հազարամյակում, տևել է 4 դար
- 4) Ք. ա. II դարից, տևել է 6 դար

**41. Դեռևս վաղնջական ժամանակներում ձևավորված իր կրոնական ըմբռնումներն էին շարունակում գոյատևել հելլենիստական ժամանակաշրջանում.**

- 1) բնապաշտություն, ոգեպաշտություն, հմայական մոգություն
- 2) բնապաշտություն, պատկերապաշտություն, հմայական մոգություն
- 3) բնապաշտություն, իրապաշտություն, սրբապաշտություն
- 4) իրապաշտություն, պատկերապաշտություն, հմայական մոգություն

#### **42. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ Արատտայի հովանավոր աստվածը Արան էր՝ իմաստության և տիեզերական ջրերի աստված Հայկի որդին:
- 2) Արարատ անվանումը Ուրարտու անվան ասորեստանյան տարբերակն է:
- 3) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1720 մ և ունի չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Արտեր, Կտուց:
- 4) Հայոց պետականության պատմության մեջ դարակազմիկ փոփոխությունը՝ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության, սկսվել է Սարգուրի I-ի օրոք:
- 5) Սարգուրի II-ի օրոք Վանի թագավորության սահմանները ձգվում էին չորս ծովերի միջև:

#### **43. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) «Հայկ և Բել» առասպելում արտացոլվել է Հայաստանի և Իրանի միջև դարավոր հակամարտությունը:
- 2) Գավգամելայի ճակատամարտի արդյունքում Դարեհ III-ը գերեվարվեց և Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց:
- 3) Աքեմենյանների գերիշխանությունը ճանաչելուց հետո Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդականները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն:
- 4) Համեմատական լեզվաբանության շնորհիվ պարզ դարձավ, որ հայերը, հույներն ու պարսիկները միակ ժողովուրդներն են, որոնց ծագումն ու կազմավորումը տեղի է ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում:
- 5) Տիգրան Երվանդյանը, հայոց արքա լինելուց բացի, դարձավ Կյուրուսի տերության արևմտյան կեսի փոխարքան:

#### **44. Գտնել իրադարձությունների այն շարքը, որոնք տեղի են ունեցել Ք. ա. 94 թ.**

- 1) Սուլլայի արշավանքը Կապադովկիա, Ծոփքի միացումը Մեծ Հայքին, հայ-պոնտական դաշինքի կնքումը
- 2) Վիրքի և Աղվանքի հպատակեցումը Տիգրան Մեծի օրոք, հայ-պոնտական դաշինքի կնքումը, Կորդուքի միացումը Մեծ Հայքին
- 3) Ծոփքի միացումը Մեծ Հայքին, Կորդուքի վերամիավորումը Տիգրան Մեծի կողմից, հայ-պոնտական դաշինքի կնքումը
- 4) Պտղոմայիսի գրավումը հայկական զորքերի կողմից, Ասորիքի գրավումը Տիգրան Մեծի կողմից, Ծոփքի միացումը Մեծ Հայքին

#### **45. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Ք. ա. 68 թ. զարնանը Լուկուլլոսի բանակը դուրս եկավ Կորդուքից և անցնելով Հայկական պարը՝ Տիգրիս գետի ափերով շարժվեց դեպի Արտաշատ:
- 2) Ք. ա. 67 թ. հայկական բանակները ազատագրեցին Ծոփքը, ներխուժեցին Կապադովկիա:

- 3) Պոմպետուր Արևելք ժամանեց Ք. ա. 66 թ. գարնանը:
- 4) Պոմպետուր պարթևներին խոստացել էր վերադարձնել Մարաստանը, Հյուսիսային Միջագետքը և Կորդուքը:
- 5) Թագաժառանգ Տիգրան Կրտսերը գնաց պարթևների թագավոր Օրոդես II-ի մոտ, որն ի դեմս նրա դաշնակից գտավ:
- 6) Պոմպետուր ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:

#### **46. Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.**

- 1) Ք. ա. 54 թ. գարնանը հռոմեական 50-հազարանոց բանակը Կրասսոսի գլխավորությամբ ժամանեց Ասորիք:
- 2) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարթև զորավար Օրոդեսը ջախջախեց հռոմեական բանակը:
- 3) Անտոնիոսը 60-հազարանոց բանակով Ք. ա. 34 թ. ամռանը արշավել է Հայաստան և շարժվել դեպի Արտաշատ:
- 4) Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունեցել Ք. ա. 31 թ. Ակցիումի մոտ:
- 5) Օկտավիանոսը, որը Ք. ա. 31 թ. պաշտոնապես իրեն հայտարարեց Օգոստոս (Աշխարհակալ), հիմք դրեց հռոմեական կայսերական վարչակարգին:
- 6) Ք. ա. 20 թ. Արտաշատում դավադրաբար սպանվել է Արտաշես II-ը:

#### **47. Որքան էր Անտոնիոսի զորքի և ռազմական տեխնիկայի թիվը պարթևական արշավանքի սկզբին.**

- 1) 80 հազար զորք և 150 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա
- 2) 90 հազար զորք և 200 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա
- 3) 100 հազար զորք և 300 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա
- 4) 150 հազար զորք և 350 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա

#### **48. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Ք. ա. 36 թ. աշնանը՝ նահանջի 17-րդ օրը, հռոմեացիները հասան Արաքսին, և նրանց ընդհանուր կորուստը կազմում էր 20 հազար զինվոր:
- 2) Անտոնիոսը, չնայած ցանկանում էր վրեժխնդիր լինել Արտավազդից, Ք. ա. 36 թ. անհաջողությունից հետո շտապեց բանակը դուրս բերել Հայաստանից ու մեկնել Եգիպտոս՝ իր կնոջ՝ թագուհի Կլեոպատրայի մոտ:
- 3) Հռոմում Անտոնիոսը կազմակերպեց հաղթահանդես, որի ընթացքում հայոց արքան ու նրա ընտանիքն անցնում էին քաղաքի փողոցներով:
- 4) Անտոնիոսի ու Օկտավիանոսի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունեցել Ք. ա. 34 թ. Ալեքսանդրիայի մոտ:
- 5) Արտավազդ II-ը իր կենդանության օրոք հռչակվել է «Աստվածային» պատվանունով:

#### **49. Ստորև բերված դր շարքն է ընդգրկում բացառապես Մեծ Հայքի Արշակունի թագավորների.**

- 1) Տիգրան Մեծ, Տրդատ I, Սանատրուկ, Վաղարշ I, Արշակ II
- 2) Տրդատ I, Սանատրուկ, Վաղարշ I, Խոսրով I, Արտավազդ II



- 3) Տրդատ I, Տիգրան I, Աշոտ I, Խոսրով I, Պաս
- 4) Տրդատ I, Սանատրուկ, Վաղարշ I, Վաղարշ II, Խոսրով I

**50. Ո՞ր հունարեն արձանագրություններն են մեզ հասել Տրդատ I-ից.**

- 1) Գառնիի և Ապարանի
- 2) Տիգրանակերտի և Արմավիրի
- 3) Արտաշատի և Գառնիի
- 4) Արմավիրի և Ապարանի

**51. Ընտրել ճիշտ պնդումները.**

- ա. Համեմատական լեզվաբանության շնորհիվ պարզ դարձավ, որ հայերը, հույներն ու պարսիկները միակ ժողովուրդներն են, որոնց ծագումն ու կազմավորումը տեղի են ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում, և հետագայում նրանք չեն հեռացել իրենց նախահայրենիքից:
- բ. Տիգրան Երվանդյանը, հայոց արքա լինելուց բացի, դարձավ Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքան:
- գ. Աքեմենյանների գերիշխանությունը ճանաչելուց հետո Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդականները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն:
- դ. Գավգամելայի ճակատամարտի արդյունքում Դարեհ III-ը գերեվարվեց և Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց:
- ե. «Հայկ և Բել» վիպասքում արտացոլվել է Հայաստանի և Իրանի միջև դարավոր հակամարտությունը:

- 1) ա, գ, 2) բ, գ 3) դ, ե 4) բ, դ

**52. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Հելլենիստական մշակույթը և հունարենը Հայաստանում տարածում գտան գերազանցապես արքունիքում և ավագանու շրջանում:
- 2) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ ուրարտական երևույթ է:
- 3) Զրադաշտականությունը դուալիստական կրոն էր, այսինքն՝ դրա հետևորդները հավատում էին, որ կան երկու գերագույն աստվածներ՝ չար և բարի:
- 4) Արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը եղել է Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Երազամունյն վայրում:
- 5) Հայոց դիցարանին բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ աստծո գլխավորությամբ:
- 6) Արամեական այբուբենը կազմված էր 22 տառից, գրվել է աջից ձախ:

**53. Թվարկվածներից որո՞նք այբուբեններն են կազմված 22 տառից.**

- ա) հունական
- բ) արամեական
- գ) պահլավական
- դ) ասորական
- ե) հայկական

- 1) ա, բ, գ 2) ա, գ, դ 3) բ, դ, ե 4) բ, գ, դ

**54. Ովքեր են կազմել Հռոմի Առաջին եռապետությունը.**

ա) Մարկոս Անտոնիոս

դ) Օկտավիանոս

բ) Գնեոս Պոմպեոս

ե) Լուկոլլոս

գ) Հուլիոս Կեսար

զ) Մարկոս Կրասոս

1) բ, գ, ե

2) ա, բ, դ

3) բ, գ, զ

4) ա, գ, զ

**8-II. Պնդումների փունջ**

**1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Հայոց մեծ թվականի սկիզբը:
- 2) Վան և Ուրմիա լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել է դեռևս Ք. ա. XXIII դարում:
- 3) Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 50 000 քառ. կմ տարածք:
- 4) Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) Աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:
- 5) Հայկական ավանդության համաձայն՝ Արամայիսի անունով են կոչվել Արմավիր քաղաքը և Արագած լեռը:
- 6) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական:

**2. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց պետականության պատմության մեջ դարակազմիկ փոփոխությունը՝ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության, ավարտվել է Ռուսա II-ի օրոք:
- 2) Հայաստանի տարածքում Ք. ա. 830-ական թթ. հայտնի էին երեք խոշոր համադաշնություններ՝ Դիաուխի, Վեդուրի և Նաիրի:
- 3) Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
- 4) Վանի թագավորությունը գերտերության է վերածել Մենուա արքան:
- 5) Սարդուրի II-ի օրոք համահայկական առաջին թագավորությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:
- 6) «Սարդուրյան տարեգրության» համաձայն՝ Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 հազար էր:

**3. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայկազունների տոհմի իշխանությունը վերականգնվել է Ք. ա. VII դ. առաջին կեսին՝ Սկայորդու գլխավորությամբ:
- 2) Հայկազունների վերականգնված իշխանությունը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում էր և համապատասխանում է սեպագիր աղբյուրներում հիշատակվող Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
- 3) Պարոյր Նահապետը Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ քաղաքը գրավելուց հետո թագադրվեց Մարաստանի արքայի կողմից և ճանաչվեց Հայաստանի թագավոր:
- 4) Երվանդ Սակավակյացի օրոք Հայոց թագավորության սահմանները հյուսիս-արևմուտքում հասնում էին Սև ծովին, հյուսիս-արևելքում՝ Կուր գետին, արևելքում՝ Մարաստանին, հարավում՝ Հյուսիսային Միջագետքին:
- 5) Տիգրան Երվանդյանը վճռական պայքարում սպանել է Մարաստանի արքա Աժդահակին:
- 6) Տիգրան Երվանդյանի դաշնակիցը մարերի դեմ պայքարում պարսից արքա Կյուրոս II Մեծն էր:

**4. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Աքեմենյան տերության դեմ Ալեքսանդր Մակեդոնացին իր արշավանքն սկսել է Ք. ա. 336 թվականին:
- 2) Մակեդոնացու ստեղծած տերության մայրաքաղաքը Պերսեպոլիսն էր:
- 3) Օգտվելով Ալեքսանդր Մակեդոնացուց Գավգամելայի ճակատամարտում Դարեհ III-ի կրած պարտությունից՝ հայերը վերականգնեցին իրենց անկախ պետականությունը:
- 4) Ծովքի թագավոր հռչակվեց Գավգամելայի ճակատամարտի մասնակից Միթրաուստեսը:
- 5) Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետությունը Ք. ա. 301 թ. բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակից Պոնտոսի պետությունն էր:
- 6) Երվանդ III-ն այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալ Անտիոքոս III-ի դեմ ապստամբած նրա եղբորը:

**5. Տիգրան Մեծի և Միհրդատ VI-ի միջև կնքված հայ-պոնտական դաշինքին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Պոնտոսը գործողությունների ազատություն ստացավ արևմուտքում և արևելքում:
- 2) Հռոմի դեմ Տիգրան Մեծի պատերազմելու ողջ ընթացքում Միհրդատ Եվպատորը պահպանելու էր չեզոքություն:
- 3) Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Ծովքի վրա, որի տարածքը պետք է ստանար Հայաստանը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Պոնտոսը:
- 4) Հայաստանը գործողությունների ազատություն ստացավ հյուսիսում, հարավում և արևելքում:

- 5) Հռոմի դեմ պատերազմում Տիգրան Մեծից զորք ստանալու դիմաց Պոնտոսը համաձայնեց Փոքր Հայքը զիջել Հայոց թագավորությանը:
- 6) Դաշինքն ամրապնդելու նպատակով Միհրդատն իր դուստր Կլեոպատրային կնության տվեց Տիգրան Մեծին:

**6. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հելլենիստական դարաշրջանում հայ մշակույթի երկրորդ՝ հելլենիստական շերտի կրողները գլխավորապես վերին խավերի և քաղաքային ազատ բնակչության ներկայացուցիչներն էին:
- 2) Հելլենիստական դարաշրջանի վերջերին Հայաստանում Սասանյանները փորձեցին տարածել զրադաշտականությունը, որը դուալիստական կրոն էր:
- 3) Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ հայ մշակույթը մշտապես ազդվել է տարաշխարհիկ մշակույթներից և կորցրել է իր ինքնատիպությունն ու բնորոշ գծերը:
- 4) Հայաստանը, պայմանավորված իր աշխարհագրական դիրքով, խաչմերուկ և կապող օղակ է եղել Արևելքի ու Արևմուտքի միջև:
- 5) Հայկական հելլենիզմի պատմությունն ընդունված է բաժանել երեք փուլի՝ հին, միջին և նոր:
- 6) Հայկական կամ Արևելյան Տավրոսի լեռնաշղթայում գտնվող Նեմրուփ լեռան սրբավայրը կառուցել է Անտիոքոս I Երվանդունին:

**7. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ըստ հույն պատմիչ Ստրաբոնի՝ Արտաշատի տեղանքն ընտրել էր կարթագենացի զորավար Հաննիբալը:
- 2) Հայաստանում ապաստան գտած Հաննիբալը գլխավորել է հայոց նոր մայրաքաղաքի շինարարական աշխատանքները:
- 3) Արտաշես I-ի կարևոր ձեռնարկումներից էր հողային բարեփոխումը, որի վերաբերյալ հրամանագիրը հրապարակվել է Ք. ա. 185 թվականին:
- 4) Արտաշես I-ի ռազմական բարեփոխման արդյունքում ստեղծվեցին չորս զորավարություններ:
- 5) Արտաշես I-ի վարչական բարեփոխմամբ երկիրը բաժանվեց 120 գավառների:
- 6) Արտաշես I-ը մեծարվել է բազմաթիվ տիտղոսներով, իսկ դեռ իր կենդանության ժամանակ նա աստվածացվել է:

**8. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ք. ա. 53 թ. Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում Կրասոսը սպանվեց իր որդու հետ միասին:
- 2) Հռոմի Երկրորդ եռապետության անդամներից էր նաև Օկտավիանոսը:
- 3) Օկտավիանոսը Ք. ա. 34 թ. Ալեքիոմի ծովամարտում լիակատար պարտության մատնեց Անտոնիոսին:
- 4) Արտավազդ II-ը ընտանիքով մեկնել էր Ալեքսանդրիա՝ իր դստեր և Անտոնիոսի որդու ամուսնության հարցը քննարկելու, սակայն նենգաբար ձերբակալվեց եռապետի կողմից:

- 5) Արտաշես II-ի դրամների վրա նույնպես դրոշմվել է «Արքայից արքա» մակագրությունը:
- 6) Տիգրան III-ի ինքնուրույն և պարթևամետ քաղաքականությունն վարելու ապացույցը պահպանված մակագրությամբ դրամների թողարկումն էր:

**9. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Պոմպեոսի կողմից Պոնտոսը ռազմակալելուց հետո Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Ք. ա. 63 թ. ինքնասպան եղավ:
- 2) Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկել էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը զերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:
- 3) Կրասոսի պարտությունից հետո Հռոմի դիրքերն Արևելքում սասանվեցին, որից օգտվելով՝ պարթևական զինված ուժերը՝ թագաժառանգ Բակուրի, և հայկական զորամասերը՝ Վասակ զորավարի գլխավորությամբ, հռոմեացիներին դուրս մղեցին Ասորիքից, Կիլիկիայից, Եգիպտոսից, Պաղեստինից և Հրեաստանից:
- 4) Պարթևների արքա Հրահատ IV-ը հիանալի գիտակցում էր, որ Հայաստանից հետո Պարթևստանն է լինելու Հռոմի հաջորդ թիրախը, ուստի փոխեց իր վերաբերմունքը և ռազմական զգալի օգնություն տրամադրեց Հայաստանին:
- 5) Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատեց Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգեց իր կամակատար Արիոբարզանեսին:
- 6) Տիգրան III-ի մահից հետո գահ է բարձրացել նրա որդի Տիգրան IV-ը, որը թագավորեց որպես անկախ ու ինքնիշխան միապետ:

**10. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռոմեական 100-հազարանոց բանակով Ասորիք ժամանած Կրասոսը ծրագրել էր ջախջախել Պարթևստանը և հասնել Հնդկաստան:
- 2) Կրասոսի ծրագիրը չիրագործվեց, որովհետև նա մահացավ ծանր հիվանդությունից:
- 3) Հռոմի Առաջին եռապետության անդամ Անտոնիոսին բաժին էր հասել Արևելքը:
- 4) Ք. ա. 36 թ. Անտոնիոսը 60-հազարանոց բանակով անձամբ ժամանեց Արևելք:
- 5) Անտոնիոսը Հայաստանի տարածքով մտավ Ատրպատական և շարժվեց դեպի նրա մայրաքաղաք Փրասպա:
- 6) Անտոնիոսի պարթևական արշավանքն ավարտվեց նրա ջախջախիչ պարտությամբ. զորքի ընդհանուր կորուստը կազմում էր 20 հազար զինվոր:

**11. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռանդեսայի ճակատամարտում պարտված հռոմեացիներին հայերն ու պարթևները ստիպել են ծնկաչոք անցնել նիզակներով պատրաստված «լծի» տակով:
- 2) Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը հաշտություն կնքեց հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Կարակալայի հետ:

- 3) Կարակալյան 215 թ. խաբեությանը իր մոտ՝ Ասորիք է հրավիրել Վաղարշ II-ի որդի Խոսրով I-ին ու ձերբակալել նրան:
- 4) Դրանից հետո Հայաստանում թագավոր է դարձել Տրդատ II-ը, որը երկրից վտարել է Կարակալյայի ուղարկած զորքը:
- 5) Տրդատ II-ը շուտով գլխավորեց պայքարը Սասանյանների դեմ, որի արդյունքում պարթև Արշակունիները վերականգնեցին Պարթևական թագավորությունը:
- 6) Տրդատ II-ին հաջորդած Խոսրով II-ից հետո հայոց գահն անցել է Տրդատ III-ին:

**12. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ Արատտայի հովանավոր աստվածը Հայկն էր՝ Արամազդ աստծո որդին:
- 2) Աստվածաշնչի համաձայն՝ բոլոր ազգերն առաջացել են Ադամի երեք որդիներից՝ Հաբեթից, Քամից և Սեմից:
- 3) Հայ(ա) աստծո պաշտամունքը կապվում էր Հայկական լեռնաշխարհի Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների հետ:
- 4) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական:
- 5) Թորգոմա տունը եղել է Եփրատի միջին ավազանում և հիշատակվել է դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում:
- 6) Ըստ վրացական ավանդության՝ Թարգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, Քարթլոսից՝ վրացիները, իսկ մյուս չորս որդիներից՝ կովկասյան մի շարք ժողովուրդներ:

**13. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Վանի թագավորության արքունի գործակալներից են զորավար–սպարապետները, բղեշխները, արքունի հացատարները, դպիրները և այլն:
- 2) Ք. ա. III դարում գոյություն են ունեցել հայկական չորս պետություններ:
- 3) Ալեքսանդր Մակեդոնացին և Դարեհ II-ը նույն թվականին են սկսել գահակալել իրենց երկրներում:
- 4) Երվանդ Վերջինի օրոք Մեծ Հայքի հոգևոր կենտրոնը Բագարանն էր:
- 5) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով Հռոմում սկզբնավորվել է հելլենիզմի՝ հունականության դարաշրջանը:
- 6) Գավգամելայի և Ալցիումի ճակատամարտերը հայերի համար ունեցել են նույն քաղաքական նշանակությունը. Մեծ Հայքը և Փոքր Հայքը հռչակվել են անկախ պետություններ:

**14. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ՝ նախաքրիստոնեական և հելլենիստական:
- 2) Հայոց մեծ թվականի սկիզբ է համարվում 552 թ. հուլիսի 11-ը:

- 3) Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս–արևելքում ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 150 000 քառ. կմ տարածք:
- 4) Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) Աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:
- 5) Հայկական ավանդության համաձայն՝ Արամայիսի անունով են կոչվել Արմավիր քաղաքը և Արագած լեռը:
- 6) Վան և Ուրմիա լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել է դեռևս Ք. ա. XXIII դարում:

#### **15. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Պարույր նահապետը Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն գրավելուց հետո թագադրվեց Մարաստանի արքայի կողմից և ճանաչվեց Հայաստանի թագավոր:
- 2) Երվանդ Սակավակյացի օրոք Հայոց թագավորության սահմանները հյուսիս–արևմուտքում հասնում էին Սև ծով, հյուսիս–արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Մեդիա, հարավում՝ Հյուսիսային Միջագետք:
- 3) Տիգրան Երվանդյանը վճռական պայքարում սպանել է Մարաստանի արքա Աժդահակին:
- 4) Տիգրան Երվանդյանի դաշնակիցը մարերի դեմ պայքարում պարսից արքա Կյուրոս II Մեծն էր:
- 5) Հայկազունների տոհմի իշխանությունը Սկայորդու գլխավորությամբ վերականգնվել է Ք. ա. VII դ. վերջին:
- 6) Հայկազունների վերականգնված իշխանությունը Հայկական լեռնաշխարհի հարավ–արևելքում էր և համապատասխանում է սեպագիր աղբյուրներում հիշատակվող Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:

#### **16. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Սասանյանները 226 թ. տապալեցին պարթև Արշակունիներին և տիրացան գահին:
- 2) Մինչև VIII դարի կեսերը Սասանյանները տարածաշրջանում վարում էին ծավալապաշտական քաղաքականություն:
- 3) III դարի սկզբներին Հայաստանում ստեղծված խառնաշփոթ վիճակը Մովսես Խորենացին անվանել է «ժամանակ անիշխանության»:
- 4) Խոսրով II–ի որդի Տրդատը 286 թ. հաղթել էր գոթերի իշխանին՝ նրա դեմ մենամարտելով հռոմեական կայսեր փոխարեն:
- 5) Առաջին անգամ հայոց գահին Տրդատ II–ը հաստատվել է 287 թվականին:
- 6) Սասանյան արքա Ներսեհը միայն Ոսխայի ճակատամարտում կրած պարտությունից հետո՝ նույն թվականին կնքված հաշտությամբ ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

#### **17. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանի տարածքում Ք. ա. 830–ական թթ. ձևավորվել էին մի քանի համադաշնություններ, որոնցից ամենամեծը Էթիունի երկրի համադաշնությունն էր:
- 2) Մենուան Վանի թագավորության հյուսիսարևելյան սահմաններն ամրապնդելու նպատակով արշավել է Դիաուխի երկրի վրա:



- 3) Ռազմական ոլորտի բարեփոխումների շնորհիվ Իշպուհինին Ք. ա. 820–ական թթ. ընդլայնեց թագավորության սահմանները Ուրմիա լճի ավազանի հարավում՝ ներառելով Արդինի–Մուսասիր երկիրը:
- 4) Իշպուհինիի գահակալության երկրորդ շրջանում իրականացված կրոնական բարեփոխման արդյունքում ստեղծվեց թագավորության համար միասնական դիցարան, որն արձանագրվել է «Խալդյան դարպասի» վրա:
- 5) «Խալդյան դարպասի», որը հետագայում մեր ժողովրդի կողմից կոչվել է «Մհերի դուռ», արձանագրությունը կատարվել է Իշպուհինիի և նրա որդու անունով:
- 6) Սարգուրի II–ը ասորեստանյան աղբյուրներում հիշատակվել է Ք. ա. 733 թ.՝ Սարգոն II–ի գորքերին դիմակայելու առնչությամբ:

### **18. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արտաշատում կնքված հայ–պարթևական պայմանագրի համաձայն՝ Տիգրան Մեծը սկսեց ծավալվել արևելյան ուղղությամբ:
- 2) Նվաճված Մարաստանի Գողերձ II թագավորը հպատակվեց հայոց թագավորին, հետ ստացավ իր թագը, ավելին՝ ամուսնացավ Տիգրան II–ի դստեր հետ:
- 3) Ք. ա. 84 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցություններն ավարտվեցին նույն տարում Հայաստանի դեմ ուղղված պայմանագրի կնքմամբ:
- 4) Արտաշատում կնքված հայ–հռոմեական հաշտության պայմանագրի համաձայն՝ Տիգրան Մեծը Հռոմին զիջեց Հյուսիսային Միջագետքը:
- 5) Թագաժառանգ Տիգրան Կրտսերը Պոմպեոսի օգնությամբ հասավ իր նպատակին՝ դարձավ Մեծ Հայքի թագավոր:
- 6) Պարթևների արքա Հրահատ III–ի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Տիգրան Մեծը գրավեց Հյուսիսային Միջագետքը:

### **19. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռանդեսայում խայտառակ ձևով պարտված Պետոսը լուր ուղարկեց Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:
- 2) Վաղարշ II–ից հետո Մեծ Հայքի թագավոր դարձավ նրա որդին, որով Հայաստանում հաստատվեց Արշակունիների ժառանգական դինաստիան:
- 3) Տրդատ II–ը, ի պաշտպանություն պարթև Արշակունիների, արշավանքներ ձեռնարկեց Սասանյանների դեմ և նույնիսկ հասավ մինչև Տիգրոն:
- 4) Տրդատ II–ի գլխավորած պայքարը Սասանյանների դեմ հաջողությամբ չավարտվեց:
- 5) Սասանյան Շապուհ I արքան հարձակվեց Հայաստանի վրա, և Տրդատ II–ը ստիպված հեռացավ Հռոմեական կայսրության սահմաններ:
- 6) Մծբինում կնքված հռոմեա–պարսկական 40–ամյա խաղաղության պայմանագրով Սասանյան Ներսեհ թագավորը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:



# ՄԱՍ Բ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

### 1. ՏԱՐԵԹՎԵՐ

---

1. Երբ է կառուցվել Վաղարշապատի Ս. Էջմիածին Մայր տաճարը.  
1) 305 թ.                      2) 303 թ.                      3) 313 թ.                      4) 301 թ.
2. Երբ է քրիստոնեությունը Հայաստանում հռչակվել պետական կրոն.  
1) 305 թ.                      2) 303 թ.                      3) 300 թ.                      4) 301 թ.
3. Մինչև որ թվականն է գահակալել Տրդատ III Մեծը.  
1) 298                          2) 320                          3) 338                          4) 330
4. Երբ է գահակալել Տիրան Արշակունին.  
1) 338–350 թթ.              2) 350–368 թթ.              3) 330–338 թթ.              4) 309–379 թթ.
5. Երբ է գումարվել առաջին տիեզերական ժողովը Նիկեայում.  
1) 313 թ.                      2) 335 թ.                      3) 354 թ.                      4) 325 թ.
6. Երբ է գումարվել Աշտիշատի եկեղեցական ժողովը.  
1) 350 թ.                      2) 355 թ.                      3) 345 թ.                      4) 354 թ.
7. Երբ է կնքվել հռոմեա–պարսկական պայմանագիրը («ամոթալի»)  
1) 336 թ.                      2) 363 թ.                      3) 360 թ.                      4) 365 թ.
8. Երբ է տեղի ունեցել Ձիրավի ճակատամարտը.  
1) 373 թ.                      2) 371 թ.                      3) 372 թ.                      4) 370 թ.
9. Արշակ II–ի կառավարման շրջանում երբ պատերազմ սկսվեց Հռոմի ու Պարսկաստանի միջև.  
1) 354 թ.                      2) 359 թ.                      3) 364 թ.                      4) 367 թ.
10. Երբ է Մուշեղ սպարապետը զորքով շարժվել Գանձակ.  
1) 368 թ.                      2) 372 թ.                      3) 379 թ.                      4) 378 թ.
11. Երբ է գահակալել Վարազդատ թագավորը.  
1) 370–374 թթ.                      3) 350–368 թթ.  
2) 374–378 թթ.                      4) 378–387 թթ.
12. Երբ է գահակալել Արշակ III–ը.  
1) 388–414 թթ.                      3) 370–374 թթ.  
2) 374–378 թթ.                      4) 378–387 թթ.

**13. Երբ է գահակալել Վռամշապուհը.**

**291. Ո՞ւմ օրոք է իր հզորության գագաթնակետին հասել Տաշիր-Ձորագետի թագավորությունը.**

- 1) Կյուրիկե I-ի
- 2) Գագիկ Կյուրիկյանի
- 3) Դավիթ Անհողինի
- 4) Կյուրիկե II-ի

**292. Ո՞րն էր Անիի Բագրատունիներին ենթակա թագավորություններից ամենաընդարձակը.**

- 1) Սյունիք
- 2) Տաշիր-Ձորագետ
- 3) Վանանդ
- 4) Վասպուրական

**293. Բագրատունի իր արքայի օրոք է առաջացել Վանանդի թագավորությունը.**

- 1) Աբաս
- 2) Գագիկ I
- 3) Սմբատ II
- 4) Աշոտ III

**294. Ո՞ր տարածքները բաժին հասան Գագիկ I-ի կրտսեր որդի Աշոտին.**

- 1) Անին ու Շիրակը
- 2) Գուգարքն ու Խաչենը
- 3) Անին ու Գուգարքը
- 4) Սևանի ավազանը, Գուգարքը և որոշ այլ գավառներ



**295. Բյուզանդական ճի կայսրը Սենեքերիմ Արծրունուն հարկադրեց Վասպուրականը հանձնել կայսրությանը.**

- 1) Վասիլ I-ը
- 2) Վասիլ II-ը
- 3) Հովհաննես Կոմնենոսը
- 4) Կոստանդին Մոնոմախը

**296. Սկզբում ճի էր Սյունիքի թագավորության կենտրոնը.**

- 1) Սյունի ավանը
- 2) Կապանը
- 3) Հալիծորը
- 4) Տաթևը

**297. Ո՞վ ճնշեց 1259 թ. հակամոնղոլական ապստամբությունը.**

- 1) Հուլավու խանը
- 2) Բաթու խանը
- 3) Չարմաղանը
- 4) Մանգու խանը

**298. 1220 թ. մոնղոլական և հայ-վրացական բանակների միջև վճռորոշ ճակատամարտը տեղի է ունեցել.**

- 1) Ծումբ գյուղի մոտ
- 2) Մառիի մոտ
- 3) Կոտմանի դաշտում
- 4) Բասենի մոտ

**299. Ո՞րն էր Վահրամյանների իշխանության կենտրոնը.**

- 1) Գագը
- 2) Դվինը
- 3) Թմուկ բերդը
- 4) Ամբերդը

**300. Թամար թագուհու օրոք ամիրսպասալարի պաշտոն է վարել.**

- 1) Զաքարե Զաքարյանը
- 2) Իվանե Զաքարյանը
- 3) Աբասը
- 4) Վահրամ Զաքարյանը

**301. Դիմանալով սելջուկյան արշավանքներին՝ ճի թագավորությունները շարունակեցին պահպանել իրենց գոյությունը.**

- 1) Սյունիքի և Վասպուրականի
- 2) Սյունիքի և Տաշիր-Ձորագետի
- 3) Տաշիր-Ձորագետի և Վասպուրականի
- 4) Վանանդի և Վասպուրականի

**302. Կիլիկիայի ճի մասն էր զբաղեցնում Քարուտ Կիլիկիան.**

- 1) արևմտյան
- 2) հարավային
- 3) հյուսիսային
- 4) արևելյան

**303. Կիլիկիայի ճի մասն էր զբաղեցնում Լեռնային Կիլիկիան.**

- 1) հարավարևելյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հյուսիսարևմտյան
- 4) հարավարևմտյան

**304. Ո՞ր ամրոցում էր հաստատվել Հերոմյան իշխանական տունը.**

- 1) Լամբրոն
- 2) Կոռոմոզոլ
- 3) Վահկա
- 4) Կոռիկոս

**305. Օշին իշխանը ճիմ հետ էր ամուսնացած.**

- 1) Ապլղարիպ Արծրունու քրոջ
- 2) Ապլղարիպ Արծրունու դստեր
- 3) Փիլարտոս Վարաժնունու դստեր
- 4) Գող Վասիլի դստեր

**306. Որքան էր Կիլիկյան Հայաստանի բանակը Թորոս II-ի օրոք.**

- 1) 40000
- 2) 80000
- 3) 30000
- 4) 60000

**307. Հայոց իր կաթողիկոսն է թագավոր օծել Լևոն II Ռուբինյանին.**

- |                             |                      |
|-----------------------------|----------------------|
| 1) Գրիգոր Զ Ապիրատ          | 3) Հովհաննես Զ Սսեցի |
| 2) Կոստանդին Ա Բարձրաբերդցի | 4) Ներսես Դ Կլայեցի  |

**308. Ռայմոնդ–Ռուբենի գործունեությունից դժգոհ լինելով՝ Լևոնը փոխեց իր որոշումը և Կիլիկիայի թագաժառանգ նշանակեց՝**

- |             |                 |
|-------------|-----------------|
| 1) Ռուբենին | 3) Ատան իշխանին |
| 2) Զաբելին  | 4) Ֆիլիպին      |

**309. Ո՞ր կայսրը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում.**

- |              |                        |
|--------------|------------------------|
| 1) Վասիլ I–ը | 3) Ֆրիդրիխ Շիկամորուսը |
| 2) Կոմնենոսը | 4) Հերակլը             |

**310. Ո՞ւմ որդին էր Թորոս I–ը.**

- |               |          |             |             |
|---------------|----------|-------------|-------------|
| 1) Կոստանդինի | 2) Սլեիի | 3) Լևոն I–ի | 4) Ստեփանեի |
|---------------|----------|-------------|-------------|

**311. Ո՞վ է հաջորդել Օշին թագավորին.**

- |              |                      |
|--------------|----------------------|
| 1) Լևոն IV–ը | 3) Հեթում II–ը       |
| 2) Լևոն V–ը  | 4) Գվիդոն Լուսինյանը |

**312. Թվարկված կաթողիկոսներից ո՞վ է եղել Զաբելի երեք խնամակալներից մեկը.**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Մեսրոպ Արտազեցին | 3) Կիրակոս Վիրապեցին |
| 2) Գրիգոր Զ Ապիրատը | 4) Հովհաննես Սսեցին  |

**313. Հիվանդախնամների միաբանությունը որքան հեծյալ զինվոր էր պարտավորվել ամեն տարի տրամադրել կիլիկյան հայոց բանակին.**

- |         |        |         |         |
|---------|--------|---------|---------|
| 1) 1400 | 2) 400 | 3) 4000 | 4) 1000 |
|---------|--------|---------|---------|

**314. Կիլիկյան արքունիքում ո՞վ էր ղեկավարում օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցությունները.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) պայլ    | 3) սենեսկալ   |
| 2) կանցլեր | 4) գունդստարլ |

**315. Կիլիկյան արքունիքում ո՞վ էր հետևում կարգ ու կանոնի պահպանմանը.**

- |              |             |
|--------------|-------------|
| 1) սենեսկալը | 3) թագադիրը |
| 2) պայլը     | 4) կանցլերը |

**316. Ո՞րն էր Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոնը.**

- |                    |                   |
|--------------------|-------------------|
| 1) Գանձասարի վանքը | 3) Ամարասի վանքը  |
| 2) Տաթևի վանքը     | 4) Սանահինի վանքը |

**317. Կիլիկիայի իր քաղաքում էր կաթողիկոսական աթոռը XV դարի սկզբին.**

- |           |             |
|-----------|-------------|
| 1) Սիս    | 3) Ադանա    |
| 2) Տարսոն | 4) Մամեստիա |

**318. Ո՞ր քաղաքի մոտ է հիմնվել Նոր Ջուղա բնակավայրը.**

- 1) Թավրիզ                      2) Արդեբիլ                      3) Թեհրան                      4) Սպահան

**319. Ո՞ր պայմանագրով են ավարտվել XVII դ. թուրք-պարսկական պատերազմները.**

- 1) Կասրե-Շիրինի                      3) Ամասիայի  
2) Էրզրումի                      4) Թավրիզի

**320. Ո՞ւմ միջև է կնքվել Ամասիայի հաշտության պայմանագիրը.**

- 1) Օսմանյան կայսրության և Սասանյան Պարսկաստանի  
2) Օսմանյան և Սեֆյան տերությունների  
3) Թուրքիայի և Ատրպատականի  
4) Ռուսաստանի և Պարսկաստանի

**321. Որտե՞ղ է Սմբատ Արծրունին օժվել հայոց թագավոր.**

- 1) Գանձասարում                      3) Աղթամարում  
2) Վանում                      4) Ս. Էջմիածնում

**322. Ո՞վ է գումարել 1562 թ. Սեբաստիայի եկեղեցական գաղտնի ժողովը.**

- 1) Ստեփանոս Աղթամարցին                      3) Մխիթար Սեբաստացին  
2) Ստեփանոս Սալմաստեցին                      4) Միքայել Սեբաստացին

**323. Ո՞վ էր գլխավորում 1547 թ. գաղտնի խորհրդակցության որոշմամբ Եվրոպա մեկնած պատվիրակությունը.**

- 1) Ստեփանոս Սալմաստեցին                      3) Միքայել Սեբաստացին  
2) Աբգար Թոխաթեցին                      4) Ստեփանոս Աղթամարցին

**324. Որտե՞ղ է հրավիրվել 1547 թ. գաղտնի խորհրդակցությունը՝ Եվրոպա պատվիրակություն ուղարկելու նպատակով.**

- 1) Անգեղակոթում    2) Էջմիածնում                      3) Երևանում                      4) Սեբաստիայում

**325. Ո՞ր քաղաքում է Մեսրոպ Մաշտոցը ստեղծել հայոց գրերը.**

- 1) Ուռհա                      2) Սամոսատ                      3) Ամիդ                      4) Վաղարշապատ

**326. Ո՞վ էր Մեսրոպ Մաշտոցի վարքագիրը.**

- 1) Սահակ Պարթև                      3) Վահան Ամատունի  
2) Վարդան Մամիկոնյան                      4) Կորյուն

**327. Թվով քանի՞ն էին Մեսրոպ Մաշտոցի ստեղծած նշանագրերը.**

- 1) 26                      2) 36                      3) 39                      4) 22

**328. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում IV դ. սկզբից մինչև 387 թ. ընկած ժամանակաշրջանի հայոց պատմությունը.**

- 1) Ագաթանգեղոս                      3) Ղազար Փարպեցի  
2) Եղիշե                      4) Փավստոս Բուզանդ

**329. Ո՞ր պատմիչն է նկարագրել Վահանանց ապստամբությունը.**

- |                     |             |
|---------------------|-------------|
| 1) Մովսես Խորենացին | 3) Կորյունը |
| 2) Ղազար Փարպեցին   | 4) Եղիշեն   |

**330. Ո՞վ է «Անշարժ տոմար» կազմելու փորձ արել.**

- |                        |                     |
|------------------------|---------------------|
| 1) Հովհաննես Սարկավազը | 3) Հովհան Գ Օձնեցին |
| 2) Անանիա Շիրակացին    | 4) Գրիգոր Զ Ապիրատը |

**331. Ո՞ւմ ուսուցչապետության օրոք է զարգացման բարձրակետին հասել Նարեկի վարդապետարանը.**

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Անանիա Նարեկացու | 3) Գրիգոր Նարեկացու     |
| 2) Ներսես Մշեցու    | 4) Հովհաննես Իմաստասերի |

**332. Ո՞վ է Աղբերց վանքի դպրոցի հիմնադիրը.**

- |                  |                       |
|------------------|-----------------------|
| 1) Մխիթար Գոշը   | 3) Եսայի Նչեցին       |
| 2) Ներսես Մշեցին | 4) Ներսես Լամբրոնացին |

**333. Ո՞ր տիպի դպրոցների հիման վրա են ձևավորվել վարդապետարանները.**

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1) ծխական և տաճարային | 3) տաճարային և վանական |
| 2) վանական և ծխական   | 4) աշխարհիկ և ծխական   |

**334. Ո՞վ է հիմնադրել Սկևռայի դպրոցը.**

- |                       |                  |
|-----------------------|------------------|
| 1) Կիրակոս Գանձակեցին | 3) Սարգիս Պիճակը |
| 2) Ներսես Լամբրոնացին | 4) Ներսես Մշեցին |

**335. Անիի վարդապետարանում ո՞վ մշակեց վարդապետական կրթության նոր ծրագիր.**

- |                   |                         |
|-------------------|-------------------------|
| 1) Մխիթար Գոշը    | 3) Ներսես Մշեցին        |
| 2) Սամուել Անեցին | 4) Հովհաննես Իմաստասերը |

**336. Ո՞ր պատմիչն է կրթություն ստացել Նոր Գետիկի վարդապետարանում.**

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) Կիրակոս Գանձակեցին | 3) Առաքել Դավրիժեցին  |
| 2) Թովմա Արծրունին    | 4) Զաքարիա Քանաքեռցին |

**337. Ո՞ւմ նախագծով է կառուցվել Անիի Մայր տաճարը.**

- |           |            |
|-----------|------------|
| 1) Պողոսի | 3) Մոմիկի  |
| 2) Տրդատի | 4) Մանվելի |

**338. Ո՞վ է հիմնադրել Նոր Ջուղայի հայկական տպարանը.**

- |                         |                     |
|-------------------------|---------------------|
| 1) Խաչատուր Կեսարացին   | 3) Աբգար Թոխաթեցին  |
| 2) Հովհաննես Թութունջին | 4) Հակոբ Ջուղայեցին |

**339. Որտե՞ղ է գտնվել Ծամնդավ բերդաքաղաքը.**

- |              |                       |
|--------------|-----------------------|
| 1) Տավուշում | 3) Կիլիկյան Տավրոսում |
| 2) Զավախքում | 4) Հայկական Տավրոսում |

**340. Ինչ որոշում կայացրեց Սսի 1361 թ. եկեղեցական ժողովը.**

- 1) Հայոց եկեղեցին միացնել կաթոլիկ եկեղեցուն
- 2) ընդունել Քաղկեդոնի երկաթնակության դավանանքը
- 3) Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ
- 4) չեղյալ հայտարարել Սսի և Աղանայի նախորդ եկեղեցական ժողովների որոշումները

**341. Հայոց իր թագավորի ժամանակ էր գործում սպարապետ Վաչե Մամիկոնյանը.**

- 1) Խոսրով Կոտակ
- 2) Արշակ II
- 3) Տիրան
- 4) Պապ

**342. Ո՞ր գավառում էին ապրում Արշակունի թագավորը, թագուհին և թագաժառանգը.**

- 1) Բարձր Հայքի Դարանաղյաջ
- 2) Ծովքի Անգեղտուն
- 3) Այրարատի Ոստան Հայոց
- 4) Բարձր Հայքի Դերջան

**343 Ինչպե՞ս է կոչվել Տուրուբերանը Հայաստանի 591 թ. բաժանումից հետո.**

- 1) Ներքսագոյն Հայք
- 2) Մեծ Հայք
- 3) Խորագոյն Հայք
- 4) Մեծ մասն Մեծ Հայոց

**344. Հայ հոգևորականության մի մասը իր կաթողիկոսից պահանջեց կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխել Էջմիածին.**

- 1) Ներսես
- 2) Զաքարիա
- 3) Գրիգոր
- 4) Ստեփանոս

**345. Աղթամարի իր կաթողիկոսներն էին ձգտում տիրանալու Ամենայն հայոց կաթողիկոսի գահին.**

- 1) Զաքարիա և Ստեփանոս
- 2) Զաքարիա և Կիրակոս
- 3) Անանիա և Մովսես
- 4) Ներսես և Ստեփանոս

**346. Ո՞ր տարածքի հայ բնակչության հոգևոր և աշխարհիկ կյանքի կարգավորման գործում էր մեծ դեր խաղում Երուսաղեմի հայոց պատրիարքությունը.**

- 1) Հնդկաստանի
- 2) Մերձավոր Արևելքի
- 3) Այսրկովկասի արևելյան հատվածի, Արցախի և Ուտիքի
- 4) Բալկանյան երկրների և Հունգարիայի

**347. Ո՞ր գյուղի բնակչությունը ընդդիմացավ շահ Աբասի բռնագաղթին.**

- 1) Անգեղակոթ
- 2) Գառնի
- 3) Շինուհայր
- 4) Խնձորեսկ

**348. Կարա-կոյունլու իր տիրակալն էր ապավինում հայ բնակչության օժանդակությանը և նպաստեց հայոց կաթողիկոսության վերահաստատմանը Էջմիածնում.**

- 1) Կարա-Յուսուֆ
- 2) Զհանշահ
- 3) Իսքանդար
- 4) Օսման

**349. Ո՞ր քաղաքում է 1562 թ. եկեղեցական գաղտնի ժողով գումարել Միքայել կաթողիկոսը.**

- |             |           |
|-------------|-----------|
| 1) Էջմիածին | 3) Ամասիա |
| 2) Սեբաստիա | 4) Թոխատ  |

**350. Ո՞ր իշխանությունն էր պահպանվել Սասունում XI դ. վերջերին.**

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) Վարաժնունիների | 3) Արծրունիների   |
| 2) Թոռնիկյանների  | 4) Մամիկոնյանների |

**351. Ո՞վ էր Ծումբի ճակատամարտում աչքի ընկած հայ զորահրամանատարը.**

- |                       |                      |
|-----------------------|----------------------|
| 1) Գրիգոր Պահլավունին | 3) Սմբատ Աշոտյանը    |
| 2) Վահրամ Պահլավունին | 4) Լիպարիտ սպարապետը |

**352. Սաջյան ամիրայությունը ստեղծվել էր.**

- |                 |                  |
|-----------------|------------------|
| 1) Աղձնիքում    | 3) Նախճավանում   |
| 2) Ապահունիքում | 4) Ատրպատականում |

**353. Ո՞վ էր հափշտակել Անիի թագավորության արքունի գանձերը.**

- |                      |                   |
|----------------------|-------------------|
| 1) Պետրոս կաթողիկոսը | 3) Գագիկ Աբասյանը |
| 2) Դավիթ Անհողինը    | 4) Վեստ Սարգիսը   |

**354. Ո՞վ հաստատվեց հայոց իշխան և սպարապետ Բուղայի հետ կանչվելուց հետո.**

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Սմբատ Բագրատունին | 3) Աշոտ Բագրատունին  |
| 2) Աշոտ Արծրունին    | 4) Գուրգեն Արծրունին |

**355. Միջին Ասիայում ո՞ւմ դեմ պատերազմում է սպանվել Պերոզ արքան.**

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) քուշանների | 3) գարգարացիների |
| 2) հեփթաղների | 4) սատաղացիների  |

**356. Քանի խաչքար էին կանգնեցրել հայ խոջաները Հին Ջուղայի գերեզմանատանը.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) ավելի քան 1000  | 3) ավելի քան 20000 |
| 2) ավելի քան 10000 | 4) ավելի քան 15000 |

**357. XIV դ. վերջերից ո՞ր վանքը դարձավ Աղվանից կոչվող եկեղեցու կաթողիկոսանիստը.**

- |          |              |            |            |
|----------|--------------|------------|------------|
| 1) Տաթևի | 2) Գանձասարի | 3) Ամարասի | 4) Աղուենի |
|----------|--------------|------------|------------|

**358. Աշոտ Բագրատունու իշխանության օրոք որտեղ գումարված եկեղեցական ժողովը մերժեց Հայոց եկեղեցին բյուզանդականի հետ միավորելու առաջարկը.**

- |               |            |                 |           |
|---------------|------------|-----------------|-----------|
| 1) Բագարանում | 2) Կարսում | 3) Շիրակավանում | 4) Անիում |
|---------------|------------|-----------------|-----------|

**359. Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից Աղթամարից ո՞ր տեղափոխվեց կաթողիկոսական աթոռը.**

- |         |           |            |        |
|---------|-----------|------------|--------|
| 1) Կարս | 2) Արգինա | 3) Բագարան | 4) Անի |
|---------|-----------|------------|--------|

**360. Ո՞ր իշխանության տարածքը Գագիկ I-ը միացրեց իր թագավորությանը.**

- 1) Վայոց ձորի      2) Վանանդի      3) Բագրևանդի      4) Սյունիքի

**361. Հայոց ո՞ր կաթողիկոսին հաջողվեց հնազանդեցնել Սյունյաց և Աղվանից թեմերը.**

- 1) Գրիգոր Ապիրատին      3) Անանիա Մոկացուն  
2) Զաքարիա Զագեցուն      4) Գևորգ Գառնեցուն

**362. Ո՞ր բերդում էր ամրացել և վեց ամիս բյուզանդացիներին դիմադրել Լևոն I իշխանը.**

- 1) Վահկա      2) Կոռոմոզով      3) Լամբրոն      4) Բարձրբերդ

**363. Ո՞ր բերդն էր Վահրամյանների իշխանության կենտրոնը.**

- 1) Գագը      2) Բջնին      3) Ամբերդը      4) Լոռեն (Լոռի)

**364. Ո՞ր բերդն էր Ջավախքի Զաքարյան իշխանության կենտրոնը.**

- 1) Գագ      2) Բջնի      3) Ամբերդ      4) Թմուկ

**365. Սմբատ I-ի կալանավորվելուց հետո ո՞ր բերդն էր շարունակում խիզախաբար դիմադրել արաբներին.**

- 1) Երնջակը      2) Բջնին      3) Գառնին      4) Կապույտը

**366. Ո՞ւմ էր Կարսի կառավարիչ նշանակել Աշոտ III-ը.**

- 1) Աշոտ Բագրատունուն      3) Աբաս Բագրատունուն  
2) Մուշեղ Բագրատունուն      4) Գուրգեն Բագրատունուն

**367. Ո՞ր թագավորի օրոք վերելք ապրեց Սյունիքի թագավորությունը.**

- 1) Վասակ      2) Սմբատ      3) Դավիթ      4) Աբաս

**368. Անիի պարիսպներից դուրս ո՞վ ջարդ տվեց բյուզանդական զորքերին.**

- 1) Գագիկ I Բագրատունին      3) Գրիգոր Պահլավունին  
2) Սմբատ II Բագրատունին      4) Վահրամ Պահլավունին

**369. Բագրատունյաց Հայաստանի բանակում առավել մեծ թիվ էր կազմում՝**

- 1) հեծելազորը      2) հետևակը      3) վարձկան զորքը      4) գումակը

**370. Բագրատունիների բանակում շատ սահմանափակ թվով վարձկաններ կային՝**

- 1) լեզգիներից      3) ալաններից  
2) չերքեզներից      4) արբազներից

**371. Ծումբի ճակատամարտը տեղի է ունեցել՝**

- 1) Բասենում      3) Սասունում  
2) Մանանադիում      4) Ապահունիքում

**372. Հայ-մոնղոլական դաշինը կնքվել է՝**

- |                  |              |
|------------------|--------------|
| 1) Թավրիզում     | 3) Դելիում   |
| 2) Կարակորումում | 4) Սպահանում |

**373. Ո՞ր ճակատամարտից հետո Բյուզանդիան մեկընդմիջտ հրաժարվեց Կիլիկիայից.**

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) Երուսաղեմի | 3) Միրիոկեֆալոնի |
| 2) Բերդուսի   | 4) Մառիի         |

**374. Մամլուքները 1360 թ. Կիլիկյան Հայաստանի ո՞ր քաղաքները վերջնականապես գրավեցին.**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Այսսը և Կոռիկոսը | 3) Սիսը և Անավարզան |
| 2) Ադանան և Տարսոնը | 4) Այսսը և Մսիսը    |

**375. Գևորգ իշխանը Բեշիրի զորքերին նոր ջարդ տվեց՝**

- |                |             |
|----------------|-------------|
| 1) Դվինում     | 3) Գառնիում |
| 2) Նախճավանում | 4) Դողսում  |

**376. Հայոց ո՞ր կաթողիկոսը 1361 թ. եկեղեցական ժողով հրավիրեց.**

- |                          |                     |
|--------------------------|---------------------|
| 1) Կոստանդին Կեսարացին   | 3) Մեսրոպ Արտազեցին |
| 2) Ստեփանոս Հռոմկլայեցին | 4) Պողոս Սսեցին     |

**377. Ո՞ր քաղաքում տեղի ունեցած ժողովը որոշեց Ջաբելին ամուսնացնել Հեթումի հետ.**

- |           |             |        |          |
|-----------|-------------|--------|----------|
| 1) Տարսոն | 2) Անավարզա | 3) Սիս | 4) Ադանա |
|-----------|-------------|--------|----------|

**378. Ո՞ր լեռների մոտ է տեղի ունեցել Մառիի ճակատամարտը.**

- |            |                |       |                     |
|------------|----------------|-------|---------------------|
| 1) Տավրոսի | 2) Անտիտավրոսի | 3) Սև | 4) Քարուտ Կիլիկիայի |
|------------|----------------|-------|---------------------|

**379. Հաշտություն կնքելու համար ո՞ր մեկնեց հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացին.**

- |          |           |             |           |
|----------|-----------|-------------|-----------|
| 1) Հալեպ | 2) Կահիրե | 3) Դամասկոս | 4) Անտիոք |
|----------|-----------|-------------|-----------|

**380. Հայոց արքունական խորհուրդը ո՞ւմ հետ որոշեց ամուսնացնել Ջաբելին.**

- |                                  |                                  |
|----------------------------------|----------------------------------|
| 1) Բոհեմունդ III-ի որդի Ռայմոնդի | 3) Ատան պայլի                    |
| 2) Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի    | 4) Բոհեմունդ III-ի որդի Ռեյնալդի |

**381. Ո՞ր գետի հովտում են գտնվում Սանահինի և Հաղպատի վանքերը.**

- |             |           |              |           |
|-------------|-----------|--------------|-----------|
| 1) Ձորագետի | 2) Աղստևի | 3) Ախուրյանի | 4) Դեբեդի |
|-------------|-----------|--------------|-----------|

**382. Զվարթնոցի նմանությամբ Անիում կառուցված տաճարը կոչվում էր՝**

- |            |              |             |             |
|------------|--------------|-------------|-------------|
| 1) Աշտաշեն | 2) Սմբատաշեն | 3) Գագկաշեն | 4) Աբասաշեն |
|------------|--------------|-------------|-------------|



**383. Անին Բագրատունիներին էր անցել՝**

- |                    |                   |
|--------------------|-------------------|
| 1) Գնթունիներից    | 3) Սահառունիներից |
| 2) Կամսարականներից | 4) Գնունիներից    |

**384. Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության պայմաններում Հարավային Հայաստանում իր անկախությունը պահպանել էր՝**

- |               |             |
|---------------|-------------|
| 1) Տարոնը     | 3) Սասունը  |
| 2) Ապահունիքը | 4) Կորդուքը |

**385. Գող Վասիլի իշխանության կենտրոնն էր՝**

- |            |             |
|------------|-------------|
| 1) Մարաշը  | 3) Ծամնդավը |
| 2) Քեսունը | 4) Սիսը     |

**386. Կարսի պաշտպանության ժամանակ Տուղրիլ բեկի մերձավորներից մեկին ծանր վիրավորել էր հայ զորականներից՝**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Լիպարիտը | 3) Թաթուլը |
| 2) Սմբատը   | 4) Խաչիկը  |

**387. Փիլարտոս Վարաժնունու իշխանության կենտրոնն էր՝**

- |           |            |             |           |
|-----------|------------|-------------|-----------|
| 1) Մարաշը | 2) Քեսունը | 3) Ծամնդավը | 4) Պիզուն |
|-----------|------------|-------------|-----------|

**388. Ովքեր են զոհվել Ճարմանայի ճակատամարտում.**

- 1) Վահան Մամիկոնյանը, Վարդ Պատրիկը
- 2) Սահակ Բագրատունին, Վասակ Մամիկոնյանը
- 3) Ներսես Կամսարականը, Վասակ Մամիկոնյանը
- 4) Սահակ Բագրատունին, Վահան Մամիկոնյանը

**389. Ո՞ր գավառում էր Բագավանի տաճարը.**

- |             |            |          |             |
|-------------|------------|----------|-------------|
| 1) Դարանաղի | 2) Եկեղյաց | 3) Արտագ | 4) Բագրևանդ |
|-------------|------------|----------|-------------|

**390. Ո՞ր գետում է Լուսավորիչը մկրտել հայոց արքունիքին, զորքին ու ժողովրդի հոծ բազմությանը.**

- |             |             |          |            |
|-------------|-------------|----------|------------|
| 1) Մեղրագետ | 2) Ախուրյան | 3) Արաքս | 4) Արածանի |
|-------------|-------------|----------|------------|

**391. Որտեղ է գտնվում Քարքե լեռը.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Կոզովիտում | 3) Աշտիշատում |
| 2) Տարոնում   | 4) Արտագում   |

**392. Որքան էր Արշակունյաց Հայաստանի կանոնավոր բանակի թվակազմը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 60–70 հազար   | 3) 130–150 հազար |
| 2) 100–120 հազար | 4) 160–180 հազար |

**393. Մեծ Հայքի ավատատիրական աստիճանակարգում ինչ սկզբունք էր գործում.**

- 1) Իմ վասալի վասալը իմ թշնամին է:
- 2) Իմ վասալի վասալը իմ վասալը չէ:
- 3) Իմ վասալի վասալը իմ վասալն է:
- 4) Իմ վասալի թշնամին իմ բարեկամն է:

**394. Որտեղ էր ճգնավորի կյանքով ապրել Սուրբ Գրիգորը.**

- 1) Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավանում
- 2) Սեպուի լեռան Մանյա Այրք քարայրում
- 3) Քարքե լեռան մոտակայքում
- 4) Հայոց Արևելից կողմերում

**395. Աշտիշատի առաջին ժողովը որ եկեղեցում է հրավիրվել.**

- 1) Ս. Գայանե
- 2) Մայր
- 3) Ս. Կարապետ
- 4) Ս. Երրորդություն

**396. Որտեղ են հուղարկավորել Սահակ Պարթևին.**

- 1) Օշականում
- 2) Աշտիշատում
- 3) Արտաշատում
- 4) Վաղարշապատում

**397. Հայոց իշխանի պաշտոնում ով է հաջորդել Ներսեհ Կամսարականին.**

- 1) Աշոտ Բագրատունին
- 2) Սմբատ Բագրատունին
- 3) Մանվել Մամիկոնյանը
- 4) Գրիգոր Մամիկոնյանը

**398. Որտեղ է Աշոտ I Բագրատունին օծվել հայոց թագավոր.**

- 1) Դվինում
- 2) Բագավանում
- 3) Տարսնում
- 4) Բագարանում

**399. Ո՞ր քաղաքի պատճառով սրվեցին հակասությունները Բագրատունիների և Արծրունիների միջև.**

- 1) Բագարան
- 2) Նախճավան
- 3) Արճեշ
- 4) Դվին

**400. Որքան էր Անիի Բագրատունյաց թագավորության բանակի թիվը պատերազմների ժամանակ.**

- 1) 60–70 հազար
- 2) 90–100 հազար
- 3) 120–130 հազար
- 4) 70–80 հազար

**401 Բագրատունի որ արքայի օրոք է առաջացել Տաշիր–Ձորագետի թագավորությունը.**

- 1) Սմբատ I
- 2) Աշոտ III
- 3) Սմբատ II
- 4) Գագիկ I

**402 Ո՞րն էր Շահ–Արմենների ամիրայության կենտրոնը.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Գանձակը | 3) Դվինը      |
| 2) Խլաթը   | 4) Մանազկերտը |

**403. Ո՞ր բերդաքաղաքն է նստավայր դարձրել իշխան Կոստանդինը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Կոռոմոզղ | 3) Վահկա    |
| 2) Լամբրոն  | 4) Անավարգա |

**404. Ո՞ւմ իշխանության տարիներին Վահկան դարձավ Ռուբինյան իշխանության կենտրոն.**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Ռուբենի | 3) Կոստանդինի |
| 2) Մլեհի   | 4) Թորոսի     |

**405. Կիլիկյան իր գահակալն է լուծել Գագիկ II Բագրատունու սպանության վրեժը.**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Մլեհ     | 3) Լևոն I  |
| 2) Թորոս II | 4) Թորոս I |

**406. Մոտավորապես որքան էր գրաբարում ավանդված բառապաշարը.**

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) 7–8 հազարից ավելի | 3) 60 հազարից ավելի  |
| 2) 100 հազարից ավելի | 4) 160 հազարից ավելի |

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

---

**1. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«...երթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Ամմիանոս | 3) Բուզանդ  |
| 2) Խորենացի | 4) Ապպիանոս |

**2. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ փերերիդ վրա փեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը... »:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Ապպիանոս | 3) Խորենացի |
| 2) Բուզանդ  | 4) Ամմիանոս |

**3. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը**

«Այժմ, երբ ինձ փեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:

- |             |            |
|-------------|------------|
| 1) Բուզանդ  | 3) Սեբեոս  |
| 2) Խորենացի | 4) Փարպեցի |

**4. Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.**

«Այժմ, երբ ինձ փեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:

- |               |                      |
|---------------|----------------------|
| 1) Արշակ II   | 3) Մուշեղ Մամիկոնյան |
| 2) Խոսրով III | 4) Վասակ Մամիկոնյան  |

**5. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«... [վերականգնում է] հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսին էր մեծ գեպ Կուրը»:

- |            |             |
|------------|-------------|
| 1) Սեբեոս  | 3) Բուզանդ  |
| 2) Փարպեցի | 4) Խորենացի |

**6. Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.**

«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:

- |                      |                        |
|----------------------|------------------------|
| 1) Աշոտ Բագրատունին  | 3) Բագարատ Բագրատունին |
| 2) Սահակ Բագրատունին | 4) Սմբատ Բագրատունին   |

**7. Հայոց դր արքան է ներկայացրել հետևյալ տարածքային պահանջները.**

«... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, նր փուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խոտվություն ծագի մեր մեջ, նր փուր»:

- 1) Արշակ II                      2) Տիրան                      3) Խոսրով III                      4) Պապ

**8. Հայոց արքան հմ է ներկայացրել հետևյալ տարածքային պահանջները.**

«... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, նր փուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խոտվություն ծագի մեր մեջ, նր փուր»:

- 1) Շապուհ II                      2) Շապուհ III                      3) Թեոդոսիոս I                      4) Վաղես

**9. Լրացնել բաց թողնված անձնանունը.**

«...Բայց մինչև ես . . . էի՝ հսկա էի, մի ոքս հենում էի մի լեռան վրա, իսկ մյուսն էլ՝ մյուս լեռան ... Այդ երկու լեռներից մեկը դու էիր, իսկ մյուսն էլ՝ հունաց թագավորը»:

- 1) Մուշեղ                      2) Վասակ                      3) Վաչե                      4) Վարդան

**10. Հայոց դր սպարապետն է ասել հետևյալ խոսքերը.**

«Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու... հատուցումն այս եղավ: Բայց այս մահը երանի՜ թե ձիու վրա ինձ հասներ»:

- 1) Վասակ Մամիկոնյան                      3) Մանվել Մամիկոնյան  
2) Մուշեղ Մամիկոնյան                      4) Վահան Մամիկոնյան

**11. Հայոց դր թագավորի գահընկեցությանը դեմ լինելու առիթով է կաթողիկոսն ասել հետևյալ խոսքերը.**

«Քավ լիցի՜ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:

- 1) Խոսրով IV                      3) Պապ  
2) Վարազդատ                      4) Արտաշես Արշակունի

**12. Ո՞ր իրադարձությունից հետո ստեղծված իրադրությունն է բնութագրել պատմիչը.**

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուծին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

- 1) Պապ թագավորի դավադիր սպանությունը  
2) Մուշեղ Մամիկոնյանի դավադիր սպանությունը  
3) Հայաստանի առաջին բաժանումը  
4) Արտաշես Արշակունու գահազրկումը և արգելափակումը

**13. Ո՞վ է թևավոր դարձած այս խոսքերի հեղինակը.**

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

- 1) Կորյուն                      2) Փարպեցի                      3) Եղիշե                      4) Խորենացի

**14. Ո՞ր թվականին է կայացվել այս վճիռը.**

*«Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու ու քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:*

- |           |           |
|-----------|-----------|
| 1) 354 թ. | 3) 449 թ. |
| 2) 444 թ. | 4) 481 թ. |

**15. Ո՞ր ապստամբության մասնակիցներն են ընդունել հետևյալ վճիռը.**

*«Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:*

- |                |                |                |           |
|----------------|----------------|----------------|-----------|
| 1) 774–775 թթ. | 2) 481–484 թթ. | 3) 450–451 թթ. | 4) 572 թ. |
|----------------|----------------|----------------|-----------|

**16. Պարսից դժարքան է ասել հետևյալ խոսքերը Վահան Մամիկոնյանին.**

*«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը, քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:*

- |                    |                   |
|--------------------|-------------------|
| 1) Հազկերտ II      | 3) Վռամ IV        |
| 2) Վաղարշ Սասանյան | 4) Պերոզ Սասանյան |

**17. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*«... եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:*

- |                        |                    |
|------------------------|--------------------|
| 1) Կորյուն             | 3) Մովսես Խորենացի |
| 2) Մովսես Կաղանկատվացի | 4) Եղիշե           |

**18. Բյուզանդական դժարքան կայսեր նամակից է մեջբերված հատվածը.**

*«Անհնազանդ մի ազգ են... մեր միջև...: Բայց եկ... ես իմս (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայ զորականներին) ժողովեմ և Թրակիա ուղարկեմ, և դու քոնը (այսինքն՝ Արևելյան Հայաստանի հայ զորականներին) ժողովիր և հրամայիր Արևելք տանել: Քանզի, եթե մեռնեն, մեր թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, մեր թշնամիները կսպանվեն, և մենք կապրենք խաղաղությամբ: Քանզի, եթե նրանք իրենց երկրում մնան, մեզ հանգիստ չի լինի»:*

- |                 |                   |
|-----------------|-------------------|
| 1) Կոստանդին II | 3) Հուստինիանոս I |
| 2) Թեոդոսիոս I  | 4) Մորիկ          |

**19. Ըստ պատմիչի՝ դժարատամարտի մասնակիցներն են միմյանց քաջալերել հետևյալ խոսքերով..**

*«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:*

- |                 |              |
|-----------------|--------------|
| 1) Արճեշի       | 3) Արյան լճի |
| 2) Վարդանակերտի | 4) Արձնիի    |

20. Ո՞ւմ է պատկանում ստորև բերված վկայությունը. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար»:

- |             |                        |
|-------------|------------------------|
| 1) Սեբեոսին | 3) Կիրակոս Գանձակեցուն |
| 2) Ղևոնդին  | 4) Մատթեոս Ուռհայեցուն |

21. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

*«Եվ փրհապետաց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառհսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառներ Հայաստանին»:*

- |                             |                   |
|-----------------------------|-------------------|
| 1) Թովմա Արծրունի           | 3) Ասողիկ         |
| 2) Հովհաննես Դրասխանակերտցի | 4) Վարդան Արևելցի |

22. Հայոց ո՞ր արքան էր մեջբերման մեջ հիշատակված արքայի եղբայրը.

*«Եվ փրհապետաց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառհսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառներ Հայաստանին»:*

- |               |             |             |                  |
|---------------|-------------|-------------|------------------|
| 1) Կյուրիկե I | 2) Սմբատ II | 3) Աշոտ III | 4) Դավիթ Անհողին |
|---------------|-------------|-------------|------------------|

23. Հայոց գահակալն ո՞ւմ է ասել ստորև բերված խոսքերը.

*«Հայոց փան րերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:*

- |                          |                       |
|--------------------------|-----------------------|
| 1) Վասիլ II              | 3) Հովհաննես Կոմնենոս |
| 2) Ալեքսիոս III Անգելլոս | 4) Կոստանդին Մոնոմախ  |

24. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

*« ...գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:*

- |                    |                   |
|--------------------|-------------------|
| 1) Կորյուն         | 3) Ղազար Փարպեցի  |
| 2) Մովսես Խորենացի | 4) Վարդան Արևելցի |

25. Ո՞ր պատմիչն է մեջբերված վկայության հեղինակը.

*« ...հնուց հայերեն գիր է եղել», ինչը «վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գրավ Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով... Հայկազուն թագավորների՝ անուններով»:*

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Ասողիկ            | 3) Սմբատ Գունդստաբլ |
| 2) Կիրակոս Գանձակեցի | 4) Վարդան Արևելցի   |

26. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.

*«Ո՛ր հասան է գիտություն, ուր ոչ հասան է բնություն»:*

- |                   |                 |
|-------------------|-----------------|
| 1) Պարոյր Հայկազն | 3) Դավիթ Անհաղթ |
| 2) Եզնիկ Կողբացի  | 4) Եղիշե        |

**27. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

*«Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես...»:*

- 1) Խորենացի                                      2) Եղիշե                                      3) Ագաթանգեղոս                                      4) Բուզանդ

**28. Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.**

*«Այժմ, երբ տեսնում ես ինձ կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես...»:*

- 1) Վաչե Մամիկոնյանին                                      3) Մանվել Մամիկոնյանին  
2) Մուշեղ Մամիկոնյանին                                      4) Վասակ Մամիկոնյանին

**29. Ո՞ւմ են ուղղվել հայոց թագավորի այս խոսքերը.**

*«Հայոց փան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ փալիս հայոց երկիրը»:*

- 1) Բյուզանդիայի կայսրին                                      3) Եգիպտոսի սուլթանին  
2) Բաղդադի խալիֆին                                      4) Պարսից շահին

**30. Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.**

*« ... եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:*

- 1) Շապուհ II–ին                                      3) Արշակ II–ին  
2) Հուլիանոսին                                      4) Հովհաննոսին

**31. Ըստ պատմիչի՝ ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.**

*«Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը... »:*

- 1) Մուշեղ Մամիկոնյանը                                      3) Պապը  
2) Վասակ Մամիկոնյանը                                      4) Արշակ II–ը

**32. Հայոց ո՞ր սպարապետն է վերականգնել հայ–վրացական նախկին սահմանը.**

*[վերականգնում է] «... հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսին էր մեծ գեպ Կուրը»:*

- 1) Վաչե Մամիկոնյանը                                      3) Վասակ Մամիկոնյանը  
2) Մուշեղ Մամիկոնյանը                                      4) Վարդան Մամիկոնյանը

**33. Ո՞ր ճակատամարտից հետո է տեղի ունեցել պատմիչի նկարագրած դեպքը.**

*«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:*

- 1) Ակոռիի                                      3) Խաղխաղի  
2) Ձիրավի                                      4) Արծնիի



**34. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

« ... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, նր փուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խոտվություն ծագի մեր մեջ, նր փուր»:

- |                  |                    |
|------------------|--------------------|
| 1) Սեբեոս        | 3) Փավստոս Բուզանդ |
| 2) Ղազար Փարպեցի | 4) Մովսես Խորենացի |

**35. Հայոց ո՞ր կաթողիկոսն է ասել հետևյալ խոսքերը.**

«Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մաքրենմ գայլերին»:

- |                    |                         |
|--------------------|-------------------------|
| 1) Ներսես Ա Պարթևը | 3) Սահակ Ա Պարթևը       |
| 2) Սուրմակը        | 4) Հովսեփ Ա Վայոցձորցին |

**36. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետ հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուծին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) Սեբեոս          | 3) Եղիշե           |
| 2) Փավստոս Բուզանդ | 4) Մովսես Խորենացի |

**37. Ո՞ր դեպքի կապակցությամբ են պատմիչի հետևյալ խոսքերը.**

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետ հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուծին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

- 1) ավատատիրության հաստատման
- 2) Արշակունյաց թագավորության անկման
- 3) Հայաստանում մարզպանության հաստատման
- 4) Արտաշեսյան թագավորության անկման

**38. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

«Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավագակարար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպես է շեն մնում այդ աշխարհը»:

- |                  |          |
|------------------|----------|
| 1) Սեբեոս        | 3) Եղիշե |
| 2) Ղազար Փարպեցի | 4) Ղևոնդ |

**39. Ո՞ւմ սխրանքն է բնութագրել պատմիչը վերոհիշյալ խոսքերով.**

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

- |                    |                        |
|--------------------|------------------------|
| 1) Վահանանց        | 3) Հռիփսիմյան կույսերի |
| 2) Սուրբ Շուշանիկի | 4) Վարդանանց           |

**40. Պարսից արքան ղում է ասել հետևյալ խոսքերը.**

*«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը, քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:*

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) Վարդան Մամիկոնյանին | 3) Վահան Մամիկոնյանին  |
| 2) Մուշեղ Մամիկոնյանին | 4) Մանվել Մամիկոնյանին |

**41. Ո՞ւմ է հետևյալ կերպ գնահատել պատմիչը.**

*« ... եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:*

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1) Մեսրոպ Մաշտոցին | 3) Վռամշապուհին       |
| 2) Սահակ Պարթևին   | 4) Վաչագան Բարեպաշտին |

**42. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.**

*«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:*

- |                             |                   |
|-----------------------------|-------------------|
| 1) Հովհաննես Դրասխանակերտցի | 3) Ղևոնդ          |
| 2) Սեբեոս                   | 4) Թովմա Արծրունի |

**43. Հայոց ղր արքայի մասին են մեջբերված խոսքերը.**

*«Եվ փրկապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառխոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:*

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Աշոտ III | 3) Սմբատ II |
| 2) Գագիկ I  | 4) Աշոտ II  |

**44. Հայոց ղր գահակալն է ասել հետևյալ խոսքերը.**

*«Հայոց փան փերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ փալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:*

- |                         |                        |
|-------------------------|------------------------|
| 1) Հովհաննես–Սմբատը     | 3) Գագիկ I Բագրատունին |
| 2) Գագիկ II Բագրատունին | 4) Աշոտ II Երկաթը      |

**45. Ըստ պատմիչի վկայության՝ ղվ է հետևյալ մտքերն արտահայտել.**

*« ...գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով եկեղեցիներում շահել փղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:*

- |                   |                |
|-------------------|----------------|
| 1) Սահակ Պարթևը   | 3) Վռամշապուհը |
| 2) Մեսրոպ Մաշտոցը | 4) Կորյունը    |

**46. Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը.**

*«Եվ այսպես նա բազում նեղություններ կրեց՝ իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստուծուց իսկապես պարզակեց նրան այդ բախարը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերենի նշանագրեր»:*

- 1) Կորյունը
- 2) Վարդան Արևելցին
- 3) Մովսես Խորենացին
- 4) Ղազար Փարպեցին

**47. Պարսից զոր թագավորին են պատկանում հետևյալ խոսքերը.**

*«Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:*

- 1) Խոսրով I
- 2) Խոսրով II
- 3) Շապուհ II
- 4) Հազկերտ III

**48. Ո՞ր քաղաքի բնակչությունն է հանդես եկել հետևյալ կոչով.**

*«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:*

- 1) Սիս
- 2) Դվին
- 3) Անի
- 4) Կարս

**49. Ո՞ւմ է դիմել Անի քաղաքի բնակչությունը հետևյալ կոչով.**

*«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:*

- 1) Սմբատ սպարապետին
- 2) Սարգիս Զաքարյանին
- 3) Վահրամ Պահլավունուն
- 4) Լիպարիտ սպարապետին

**50. Ովքեր են այս մեջբերման մեջ հիշատակված թշնամիները.**

*«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:*

- 1) բյուզանդացիները
- 2) արաբները
- 3) պարսիկները
- 4) մամլուքները

**51. Կարդալ Վահրամ Պահլավունուն ուղղված անեցիների դիմումից մեջբերված հատվածը և նշել ճիշտ շարունակությունը.**

*«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին, որոնք»՝*

- 1) «ապօրինաբար եկել են մեր դեմ և կամենում են գրավել մեր երկիրը»
- 2) «ավազակաբար հարձակվել են մեզ վրա և երազում են մեր երկիրը կողոպտելու մասին»
- 3) «տարապարտ կերպով են գրոհում մեր դեմ և կամենում են կողոպտել մեր երկիրը»
- 4) «տարապարտ կերպով եկել են մեր դեմ և կամենում են հափշտակել մեր երկիրը»

**52. Ընտրել հայոց թագավորի խոսքի ճիշտ շարունակությունը.**

*«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը».*

- 1) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես կալանավորել»
- 2) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես դուրս բերել Հայոց տանից»
- 3) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես հեռացրել Հայոց տանից»
- 4) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»

**53. Ո՞ր քաղաքում են ասվել այս խոսքերը.**

*«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը»:*

- 1) Հռոմ
- 2) Բաղդադ
- 3) Կոստանդնուպոլիս
- 4) Տիգրան

**54. Ո՞ր իրադարձության մասին է մեջբերումը.**

*«Անում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավագակարար հափշտակելով»:*

- 1) Դենշապուհի անցկացրած աշխարհագրի
- 2) Հերթ ոստիկանի աշխարհագրի
- 3) մոնղոլական հարկահավաքության
- 4) շահ Աբասի իրականացրած հարկահավաքության

**55. Հայոց դժբախտի մասին են ասվել այս խոսքերը.**

*«Ճերմակաձին գինի արբցէ»:*

- 1) Արտավազդ Մամիկոնյանի
- 2) Վաչե Մամիկոնյանի
- 3) Մուշեղ Մամիկոնյանի
- 4) Մանվել Մամիկոնյանի

## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

### 1. Ինչ հարկատեսակ էր տասանորդը.

- 1) պետությանը կամ թագավորին վճարվող բերքի մեկ տասներորդ մասը
- 2) նախարարներին վճարվող բերքի մեկ տասներորդ մասը
- 3) հողատիրոջը վճարվող բերքի մեկ տասներորդ մասը
- 4) եկեղեցուն վճարվող բերքի մեկ տասներորդ մասը

### 2. Ինչ էր կոչվում Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին ազնվական խավը.

- 1) սեպուհներ
- 2) անագատներ
- 3) ոստանիկներ
- 4) ազատներ

### 3. Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին խավը կոչվում էր՝

- 1) բդեշխներ
- 2) ասպետներ
- 3) թագադիրներ
- 4) ոստանիկներ

### 4. Ինչ էր «Մաղխազական այրուծին».

- 1) նախարարական տան հեծելազոր
- 2) արքունիքին կից հատուկ հեծելազոր, որն իրականացնում էր թագավորական ոստանի պաշտպանությունը
- 3) ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող, թագավորի անձի պաշտպանությունն ապահովող ընտիր հեծելազոր
- 4) մաղխազի անվտանգությունն ապահովող հեծելազոր

### 5. Ինչպե՞ս էին կոչվում ազնվականության՝ մասնատիրական տնտեսությունները.

- 1) բերդեր ու ամրոցներ
- 2) տաճարներ ու ամրոցներ
- 3) ազարակներ ու դաստակերտներ
- 4) տաճարներ ու շեներ

### 6. Ինչպե՞ս էին կոչվում 387 թ. բաժանումից հետո Հռոմին անցած Մեծ Հայքի արևմտյան մասի կուսակալները.

- 1) սատրապ
- 2) ստրատեգոս
- 3) կոմես
- 4) հյուպարքոս

### 7. Ինչ էր կոչվում Սասանյան Պարսկաստանի վարչաքաղաքական խոշոր միավորը.

- 1) սատրապություն
- 2) մարզպետություն
- 3) բդեշխություն
- 4) մարզպանություն

### 8. Ինչպե՞ս էր կոչվում Վարդանանց երդումը.

- 1) «Հավատո հանգանակ»
- 2) «Հավատո ուխտ»
- 3) «Վասն հայրենիքի»
- 4) «Վարդանանց ուխտ»

9. Վաղ միջնադարյան Հայաստանում ինչ էր կոչվում իշխանական տան կրտսեր ներկայացուցիչը.

- 1) սեպուհ
- 2) դրանիկ
- 3) ոստանիկ
- 4) ասպետ

10. Ինչ կոչվեցին հետագայում Քրիստոսի՝ «մի անձ, երկու բնություն» բանաձևի հետևորդները.

- 1) հակաքաղկեդոնական կամ միաբնակ
- 2) քաղկեդոնական կամ երկաբնակ
- 3) քաղկեդոնական կամ միաբնակ
- 4) հակաքաղկեդոնական կամ երկաբնակ

11. Ինչ տիտղոս ուներ Գագիկ I-ը.

- 1) տիեզերակալ
- 2) շահնշահ հայոց
- 3) աշխարհակալ
- 4) արքայից արքա

12. Ո՞րն էր մարզպանական գունդը.

- 1) հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռամիկներից հավաքագրված զորամիավորումը
- 2) հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը
- 3) հայկական բանակում Բագրատունիների օրոք արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից կազմված զորամիավորումը
- 4) հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը

13. Ինչ էր կոչվում քաղաքի կառավարիչը Բագրատունյաց Հայաստանում.

- 1) ստրատեգոս
- 2) քալանթար
- 3) շահապ
- 4) մուխթասիբ

14. Ինչ էր կոչվում միջնադարյան Հայաստանի քաղաքների՝ արտաքին պարսպով շրջապատված հիմնական մասը՝ բուն քաղաքը.

- 1) ոստան
- 2) արվարձան
- 3) մայրաքաղաք
- 4) շահաստան

15. Ինչ էր կոչվում քաղաքներում առանձին պարսպով շրջապատված կենտրոնական կամ բարձրադիր մասը, որտեղ գտնվում էր արքունիքը կամ իշխանի դղյակը.

- 1) արքայանիստ
- 2) քաղաքամեջ
- 3) միջնաբերդ
- 4) իշխանանիստ

16. Ինչ էր կոչվում որոշ խոշոր քաղաքների կառավարող մարմինը միջնադարյան Հայաստանում.

- 1) քաղաքապետարան
- 2) ավագների խորհուրդ
- 3) քաղաքային ժողով
- 4) քաղաքային դումա

**17. Կիլիկիայում սպասալարին վերապահված գործառույթն էր՝**

- 1) արքունական հեծելազորի հրամանատարությունը
- 2) արքունի եկամուտների և ծախսերի տնօրինումը
- 3) բանակին սպառազինությամբ և պարենով ապահովելը
- 4) բանակի ընդհանուր հրամանատարությունը

**18. Օսմանյան կայսրության հայերի հոգևոր կյանքը տնօրինող նվիրապետական աթոռը կոչվում էր՝**

- 1) Աղթամարի կաթողիկոսություն
- 2) Երուսաղեմի հայոց պատրիարքություն
- 3) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
- 4) Աղվանից կաթողիկոսություն

**19. Միջնադարում ինչ անունով էր հայտնի փիլիսոփայությունը.**

- 1) բնագիտություն
- 2) աստվածաբանություն
- 3) ճարտասանություն
- 4) իմաստասիրություն

**20. Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները հայտնի էին նաև հետևյալ անունով.**

- 1) Հայոց Արևելից կողմանք
- 2) Արևելյան Այրկովկաս
- 3) բուն Աղվանք
- 4) Խամսայի մելիքություն

**21. Միջնադարում պարզևականք էին կոչվում՝**

- 1) տարբեր ծառայությունների համար թագավորի կողմից ցմահ տրվող հողերը
- 2) հորից որդուն ժառանգաբար անցնող հողերը
- 3) հավատարմությամբ ծառայած նախարարներին տրված հողերը
- 4) տարբեր ծառայությունների համար ավագ նախարարների կողմից զինվորականներին ժառանգաբար տրվող հողերը

**22. Միջնադարում գանձագին էին կոչվում՝**

- 1) թագավորի կողմից վաճառքի հանված հողերը
- 2) առուվաճառքի ենթակա մասնավոր հողերը
- 3) հավատարմությամբ ծառայած նախարարներին թագավորի շնորհած հողերը
- 4) առուվաճառքի ենթակա պետական հողերը

**23. Մուխթասիբի գործառույթներից էր՝**

- 1) հարկահանությանը, շուկաներին, առևտրին ու արհեստներին հետևելը
- 2) քաղաքի մաքրությանը հետևելը
- 3) պարիսպների, պալատների, տաճարների, ճանապարհների կառուցման աշխատանքներին հետևելը
- 4) իջևանատների կառուցմանը հետևելը

- 24. Վրացական արքունիքում ի՞նչ էր կոչվում զորքերի գլխավոր հրամանատարը.**  
 1) գունդստաբլ 2) աթաբեկ 3) սպարապետ 4) ամիրսպասալար
- 25. Ի՞նչ էր կոչվում մոնղոլական ցեղերի ժողովը.**  
 1) մեջլիս 2) ծերակույտ 3) մեծ խուրալ 4) ուադա
- 26. Խաչակիր մատենագիրներն ինչպե՞ս են անվանել Կիլիկիայի հայկական պետությունը.**  
 1) «Հայաստան», «Փոքր Հայք» 3) «Միջերկրականի Հայք»  
 2) «Հայաստան», «Ներքին Հայք» 4) «Փոքր Ասիայի Հայք»
- 27. Ի՞նչ էր կոչվում գնված ստրուկը, որը ծառայում էր եգիպտական սուլթանի անձնական գվարդիայում.**  
 1) ենիչերի 2) նոյն 3) ղզլբաշ 4) մամլուք
- 28. Ի՞նչ անուն ստացան Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորման կողմնակիցները Կիլիկիայում.**  
 1) ունիթորներ կամ միարարներ  
 2) բողոքականներ կամ հակամիարարներ  
 3) հակաունիթորներ կամ միարարներ  
 4) հակաունիթորներ կամ հակամիարարներ
- 29. Ի՞նչ էր կոչվում Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարը.**  
 1) սպասալար 2) ամիրսպասալար 3) մարաջախտ 4) գունդստաբլ
- 30. Ի՞նչ էր կոչվում կիլիկյան բանակի սպարապետի անմիջական տեղակալը, որը գլխավորում էր բանակի սպառազինության և պարենի մատակարարման գործը.**  
 1) սպասալար 3) մարաջախտ  
 2) երկրորդ սպարապետ 4) գունդստաբլ
- 31. Ի՞նչ էր կոչվում թագավորի առաջին խորհրդականը և թագավորին փոխարինողը Կիլիկիայում.**  
 1) պայլ 2) սենեսկալ 3) կանցլեր 4) մարաջախտ
- 32. Թվարկված գործառույթներից առանձնացնել երկուսը, որոնք Կիլիկյան Հայաստանում չէր տնօրինում պայլը.**  
 1) արքունի պալատի կառավարիչը  
 2) թագավորի բացակայության դեպքում փոխարինում էր նրան  
 3) թագավորի խորհրդականն էր և ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ  
 4) թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր ամբողջ երկրի և գահակալի խնամակալությունը  
 5) թագավորի առաջին խորհրդականն էր



- 33. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարություն գործակալության գլխավոր պաշտոնյան կոչվում էր՝**
- 1) պայլ                      2) կանցլեր                      3) մարաջախտ                      4) գունդաստաբլ
- 34. Ուշ միջնադարում ինչ էին կոչվում հայ կալվածատերերը, որոնք իրենց սեփական տիրույթները հանձնել էին եկեղեցուն և, հոգևոր կոչումներ ընդունելով, շարունակում էին տիրել իրենց կալվածքներին.**
- 1) մելիք                      2) բեկ                      3) պարոնտեր                      4) յուզբաշի
- 35. Միջնադարյան Հայաստանում ինչ էր կոչվում բարձրագույն դպրոցը.**
- 1) ակադեմիա                      3) վարդապետարան  
2) ուսումնարան                      4) մատենադարան
- 36. Ինչ է կոչվում պատվանդանի վրա կանգնեցված սալածև կոթող–հուշարձանը.**
- 1) մենհիր                      3) վիշապաքար  
2) խաչքար                      4) սահմանաքար
- 37. Թվարկվածներից ո՞րը Կիլիկիայի հայկական պետության կառավարման գլխավոր մարմնի՝ արքունիքի կառուցվածքային բաղադրատարրերից չէր.**
- 1) գործակալություններ  
2) պետական խորհուրդ  
3) արքունի խորհուրդ  
4) բարձրագույն դատական ատյան
- 38. Կիլիկյան Հայաստանում ինչպե՞ս էր կոչվում խնամակալության գործակալը.**
- 1) սենեսկալ                      3) մարաջախտ  
2) թագադիր ասպետ                      4) պայլ
- 39. Ինչ էր նշանակում «ոստանիկ այրուձի» Արշակունյաց Հայաստանում.**
- 1) արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված հեծելազոր  
2) թագավորական ոստանում տեղակայված աշխարհազոր  
3) նախարարներին ենթակա հեծելազոր  
4) թագադիր ասպետին ենթակա հեծելազոր
- 40. Ինչ էր նշանակում «աշխարհաժողով» վաղ ավատատիրական Հայաստանում.**
- 1) համաժողովրդական հավաք, որտեղ քննարկվում էին երկրի համար առավել կարևոր հարցերը  
2) արքունիքում գումարվող հավաք, որին մասնակցում էին աշխարհատեր նախարարները՝ նահանգների կառավարիչները  
3) համաժողովրդային հավաք, որին մասնակցում էին միայն աշխարհիկ մարդիկ  
4) համաժողով, որին մասնակցում էին միայն աշխարհիկ ավատատերերը

**41. Միջնադարում հայրենիք էին կոչվում՝**

- 1) հայրենիքի համար ծառայության դիմաց թագավորի շնորհած հողերը
- 2) թշնամիներից ազատագրված հայրենական հողերը
- 3) ծառայության համար հոր կողմից որդուն տրված հողերը
- 4) հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողերը

**42. Վաղ միջնադարում գանձարանի միջոցներից կատարվող դրամական և բնամթերք նպաստը կոչվում էր.**

- 1) վարկ
- 2) ռոճիկ
- 3) հարկ
- 4) տասանորդ

**43. Բզնունյաց, Խորխոռունի, Գուգարաց, Բագրատունի, Աղձնյաց նախարարները համարվել են՝**

- 1) բյուրավորներ
- 2) հարյուրավորներ
- 3) հազարավորներ
- 4) հիսնավորներ

**44. Կաղմես, Սյունի նախարարները համարվել են՝**

- 1) բյուրավորներ
- 2) հարյուրավորներ
- 3) հազարավորներ
- 4) հիսնավորներ

**45. Գահնամակով սահմանվում էր.**

- 1) բոլոր ավատատերերի տեղն արքունիքում
- 2) գահաժառանգության կարգը
- 3) յուրաքանչյուր նախարարի տեղն արքունիքում
- 4) անմիջապես թագավորի կողքին յուրաքանչյուր ազդեցիկ նախարարի հատուկ բարձի տեղը
- 5) ազատների և տանուտերերի կարգը՝ ըստ զբաղեցրած պաշտոնական դիրքի և զորաքանակի

**46. Ընտրել այն տերմիններն ու հասկացությունները, որոնք բնորոշ չեն քրիստոնեությանը.**

- 1) առաքյալ
- 2) դիցարան
- 3) նվիրապետություն
- 4) քահանայապետություն
- 5) մեհենագրություն
- 6) առաջնորդական աթոռ

**47. Հին հայոց հավատքի և քրիստոնեական սկզբնական շրջանի առումով «հեթանոս» նշանակել է՝**

- 1) այլակրոն
- 2) ցեղ
- 3) ազգ
- 4) ոչ քրիստոնյա
- 5) մահմեդական

**48. Միջնադարում ինչ են հասկացել՝ «հեթանոս» ասելով.**

- 1) այլակրոն
- 2) ցեղ
- 3) ազգ
- 4) ոչ քրիստոնյա
- 5) ժողովուրդ

**49. Ծառայող ազնվականության մասնատիրական տնտեսությունները կոչվում էին՝**

- |                            |                         |
|----------------------------|-------------------------|
| 1) պետական տնտեսություններ | 4) դաստակերտներ         |
| 2) ագարակներ               | 5) արքունական կավաձքներ |
| 3) համայնական հողեր        |                         |

**50. Ընտրել «ավատ» տերմինի ճիշտ բացատրությունները.**

- 1) ի հավատ
- 2) ավետել՝ բարի լուր հաղորդել
- 3) հավատարմությամբ ծառայել
- 4) ավանդ ունենալ
- 5) ավանդաբար ծառայել

**51. Ինչ գործառույթներ էին վերապահված թագադիր և թագակապ ասպետին.**

- 1) օտար երկրների դեսպանների ընդունելությունների կազմակերպումը
- 2) թագավորական պահակազորի հրամանատարությունը
- 3) պալատական արարողությունների կազմակերպումը
- 4) օտար երկրների թագավորների թագադրումը
- 5) թագավորական կավաձքների հսկողությունը

**52. Հայ եկեղեցուն տնտեսապես ապահովելու նպատակով Տրդատ Մեծի քայլերին բնորոշ էր՝**

- 1) գյուղերում համայնական հողերի բաժանումը չորսական, իսկ ավաններում՝ յոթական ծխերի
- 2) արքունիքին վճարվող տասանորդ տուրքի փոխանցումը եկեղեցուն
- 3) բերքի մեկ տասներորդ մասը կազմող տուրքի՝ տասանորդի վճարումը եկեղեցուն
- 4) բոլոր մասնավոր հողերի մեկ տասներորդական մասերի շնորհումը եկեղեցուն
- 5) գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ագարակ տեղերում «հող երդոյ» հողաբաժինների տրամադրումը

**53. Ընտրել առաջին տիեզերական ժողովի հետ կապված հասկացությունները.**

- |                                 |                      |
|---------------------------------|----------------------|
| 1) Միլանի հրովարտակ             | 4) Նիկեական կանոններ |
| 2) Հավատո հանգանակ              | 5) Հավատո ուխտ       |
| 3) Աշտիշատի եկեղեցական կանոններ |                      |

**54. Ինչ անուններ էր կրում 867 թ. Բյուզանդիայում գահ բարձրացած արքայատոհմը.**

- |                |                 |
|----------------|-----------------|
| 1) Արշակունյաց | 4) Բագրատունյաց |
| 2) Հայկական    | 5) Հայկյան      |
| 3) Մակեդոնական |                 |

**55. Կիլիկյան Հայաստանում պայլի գործառույթներից չէին՝**

- 1) արքայի բացակայության դեպքում նրան փոխարինելը
- 2) արքունի եկամուտների և ծախսերի տնօրինումը

- 3) հանդիսությունների ժամանակ թագավորի գլխին թագ դնելը, արքունի կարգ ու կանոնի պահպանումը
- 4) արքայի անչափահասության դեպքում ամբողջ երկրի խնամակալության իրականացումը
- 5) անչափահաս թագավորի խնամակալությունը

**56. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Արդեն XI դարում վանական և աշխարհիկ դպրոցների հիման վրա ձևավորված նոր տիպի դպրոցները կոչվեցին վարդապետարաններ:
- 2) Եկեղեցիների պատերի վրայի մանր որմնանկարները կոչվում են խճանկարներ:
- 3) Շարականներ էին կոչվում միջնադարյան աշուղների երգած երգերը:
- 4) Վաղ քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով:
- 5) Պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող-խաչարձանը կոչվում է խաչքար:

**57. Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում խաչակիր մատենագիրներն այս երկիրն անվանել են՝**

- |                      |                 |
|----------------------|-----------------|
| 1) Մեծ Հայք          | 4) Հայոց աշխարհ |
| 2) Փոքր Հայք         | 5) Հայաստան     |
| 3) Կիլիկյան Հայաստան |                 |

**58. Ընտրել բացառապես ազատների դասին պատկանողների շարքը.**

- 1) գավառակալ իշխաններ, հետևակը համալրող ռամիկներ, հոգևորականներ
- 2) աշխարհատեր նախարարներ, հոգևորականներ, գավառատեր իշխաններ
- 3) գավառատեր իշխաններ, առևտրականներ, հեծելազորում ծառայող աշխարհիկ իշխաններ
- 4) հոգևորականներ, գավառակալ շինականներ, քաղաքային արհեստավորներ

**59. Ընտրել բացառապես անազատների դասին պատկանողների շարքը.**

- 1) հետևակը համալրող ռամիկներ, առևտրականներ, գավառատեր իշխաններ
- 2) աշխարհատեր նախարարներ, հոգևորականներ, գավառատեր իշխաններ
- 3) շինականներ, հոգևորականներ, հեծելազորում ծառայող աշխարհիկ իշխաններ
- 4) առևտրականներ, արհեստավորներ, շինականներ, ռամիկներ

**60. Ինչ էր կոչվում հարկատու մեկ միավոր կազմող գյուղացիական ընտանիքը կամ գերդաստանը վաղ միջնադարյան Հայաստանում.**

- |          |          |         |        |
|----------|----------|---------|--------|
| 1) շունչ | 2) գլուխ | 3) տուն | 4) երդ |
|----------|----------|---------|--------|

**61. Երկրի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով հրավիրվող (մինչև IV դ. երկրորդ կեսը) համաժողովրդական ժողովը կոչվում էր՝**

- |                 |                 |
|-----------------|-----------------|
| 1) խորհրդաժողով | 3) եկեղեցաժողով |
| 2) համաժողով    | 4) աշխարհաժողով |

**62. Հողատիրության ինչպիսի՞ ձև էր պարզևականքը.**

- 1) ժառանգական մասնավոր հողատիրություն
- 2) պայմանական հողատիրություն
- 3) առուվաճառքի ենթակա մասնավոր հողատիրություն
- 4) եկեղեցապատկան–վանքապատկան հողատիրություն

**63. Ինչպե՞ս էին կոչվում առուվաճառքի ենթակա մասնավոր հողերը.**

- 1) գանձագին
- 2) արքունական
- 3) պարզևականք
- 4) հայրենական

**64. Ինչ էին կոչվում հայ նախարարներից բռնագրավված տիրույթներից արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորները.**

- 1) փոխարքայություն
- 2) ոստիկանություն
- 3) նախարարություն
- 4) ամիրայություն

**65. Ո՞րն է «շահնշահ» հասկացության ճիշտ բացատրությունը.**

- 1) տիեզերքի թագավոր
- 2) հզոր թագավոր
- 3) աշխարհակալ թագավոր
- 4) թագավորների թագավոր

**66. Ինչ է արքունական գունդը.**

- 1) հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորում
- 2) հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորում
- 3) հայկական բանակում Բագրատունիների օրոք Հայաստանում արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից կազմված զորամիավորում
- 4) հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված զորամիավորում

**67. Ինչ էր կոչվում միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյան.**

- 1) քալանթար
- 2) մուխթասիբ
- 3) շահապ
- 4) ամիրա

**68. Ինչ էր կոչվում միջնադարյան Հայաստանում արտաքին պարսպով շրջապատված՝ բուն քաղաքից դուրս գտնվող և ընչազուրկներով բնակեցված քաղաքամասը.**

- 1) արվարձան
- 2) քաղաքատեղի
- 3) աղքատանոց
- 4) շահաստան

**69. Վրացական արքունիքում ինչ էր կոչվում թագաժառանգի խնամակալը.**

- 1) թաբբեկ
- 2) ամիրսպասալար
- 3) մարդպետ
- 4) պայլ

**70. Ինչ էր կոչվում մոնղոլական բանակի զորաջոկատի հրամանատարը.**

- 1) մամլուք
- 2) նոյոն
- 3) խան
- 4) ամիրա

**71. Ինչ էր կոչվում արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում.**

- |             |               |
|-------------|---------------|
| 1) սպասալար | 3) գունդստաբլ |
| 2) աթաբեկ   | 4) մարաջախտ   |

**72. Ընտրել ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռամիկներից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 2) Հայկական բանակում Բագրատունիների օրոք Հայաստանում կազմավորված արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից, լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 3) Հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 4) Հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը կոչվում էր արքունական գունդ:
- 5) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռազմիկներից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր արքունական գունդ:

**73. Արշակունիների օրոք ո՞ր պաշտոնյան էր իրականացնում արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը, Արշակունյաց սեպուհների դաստիարակությունը.**

- |              |                  |
|--------------|------------------|
| 1) հազարապետ | 3) թագադիր ասպետ |
| 2) մաղխազ    | 4) հայր մարդպետ  |

**74. Ինչ գործառույթ ուներ «մաղխազ» պաշտոնյան Արշակունյաց Հայաստանում.**

- 1) ղեկավարում էր հանրօգուտ աշխատանքների կատարումը
- 2) արքունի արարողապետն էր
- 3) արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարն էր
- 4) վերահսկում էր օրենքների անխափան կատարումը թագավորության ողջ տարածքում

**75. Ինչ էր նշանակում «բղեշխ» Արշակունյաց Հայաստանում.**

- 1) արքունի դիվանի (արխիվի) ղեկավար
- 2) սահմանակալ նահանգի տեր
- 3) գլխավոր հարկահավաք
- 4) արքունի այրուձիի հրամանատար

**76. Ինչ էր նշանակում «պտղի և տասանորդի կարգ» վաղ ավատատիրական Հայաստանում.**

- 1) բերքից արքունիքին վճարվող տուրք
- 2) բերքից եկեղեցուն վճարվող տուրք
- 3) բերքից գավառակալ իշխանին վճարվող տուրք
- 4) բերքից գլխավոր հարկահավաքին վճարվող տուրք

**77. Ինչպե՞ս էր կոչվում ըստ գերդաստանների հավաքվող հարկը, որը ոչ մահմեդականներից գանձում էին արաբները.**

- 1) ծխահարկ            2) աշար                      3) տասանորդ            4) գլխահարկ

**78. Ի՞նչ է նշանակում մամլուք.**

- 1) սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկ  
2) խալիֆի թիկնազորի պետ  
3) սուլթանի անձնական կալվածքների կառավարիչ  
4) մոնղոլական զինվոր

**79. Ինչպե՞ս էր կոչվում արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում.**

- 1) պայլ                      2) ասպետ                      3) մարաջախտ            4) սենեկակալ

**80. Ի՞նչ է նշանակում աթաբեկ.**

- 1) թագաժառանգի խնամակալ                      3) հեծելազորի հրամանատար  
2) սենեկապետ                      4) արքունիքի կառավարիչ

**81. Ի՞նչ է նշանակում ամիրսպասալար.**

- 1) հեծելազորի հրամանատար                      3) արքունի կալվածքների կառավարիչ  
2) սպարապետ                      4) թագաժառանգի խնամակալ

**82. Ի՞նչ է նշանակում շահապ.**

- 1) շահական թիկնազորի հրամանատար Սասանյան Իրանում  
2) սելջուկյան զորահրամանատար  
3) քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում  
4) փոխարքայության կառավարիչ Արաբական խալիֆայությունում

**83. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում կոչվում էր պայլ:  
2) Բագրատունիների ժամանակաշրջանում բուն քաղաքը կոչվում էր շահաստան:  
3) Արշակունյաց Հայաստանում արքունիքը կոչվում էր երիցանի:  
4) Հայր մարդպետ կոչվում էր արքունի թիկնազորի հրամանատարը:  
5) Բագրատունյաց Հայաստանում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր մուխթասիբ:

**84. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Բագրատունյաց Հայաստանում մարզպանական գնդերն իշխաններին ենթակա զորամասերն էին:  
2) Խնամակալության (պայլության) գործակալությունը Կիլիկյան Հայաստանում ստեղծվեց թագավորության հոչակումից հետո:  
3) Կիլիկյան Հայաստանում արքունի ծախսերն ու եկամուտները տնօրինում էր կանցլերը:

- 4) Կիլիկյան Հայաստանում ևս սահմանվել էր ասպետի (ծիավորի) աստիճան:
- 5) Պարոնտերը Բագրատունյաց Հայաստանում փոխարինում էր Արշակունիների շրջանի հայր մարդպետին:

**85. Բագրատունյաց Հայաստանում իշխանաց իշխանի գործառույթներից էր.**

- 1) ոստանիկ այրուձիի հրամանատարությունը
- 2) ենթակա իշխանների գործունեության համար թագավորին հաշվետու լինելը
- 3) նրան էին ենթարկվում արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները
- 4) արքունիքի պահպանությունը, արքունի պահակազորի հրամանատարությունը
- 5) թագաժառանգի դաստիարակությունը և խնամակալությունը

**86. Կիլիկյան Հայաստանում պայլի գործառույթներից էր.**

- 1) արքայի բացակայության դեպքում նրան փոխարինելը
- 2) արքունի կարգ ու կանոնի պահպանումը
- 3) պետական գանձարանի վերահսկումը
- 4) թագավորի անչափահասության դեպքում ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալության իրականացումը
- 5) արքունի պալատի կառավարումը



## 5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

---

### 1. Խոսքով Կոտակը Դվին բնակավայրը կառուցապատեց և այն դարձրեց մայրաքաղաք, որովհետև՝

- 1) Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվել էր, և Վաղարշապատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:
- 2) Երասխի վտակ Ախուրյանի հունը փոխվել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:
- 3) Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:
- 4) Երասխի վտակ Ախուրյանի հունը փոխվել էր, և Վաղարշապատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:

### 2. Ինչո՞ւ Խոսքով Կոտակը Դվինում կառուցեց արքունի ապարանք և այն դարձրեց նստավայր.

- 1) որովհետև Արտաշատը ավերվել էր երկրաշարժից:
- 2) քանի որ Երասխի վտակ Ախուրյանը հունը փոխել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:
- 3) քանի որ «Արքունական պողոտան» պետք է անցներ Դվինով:
- 4) քանի որ Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:

### 3. Բագրատունիների օրոք Դվինն ինչո՞ւ մայրաքաղաք չդարձավ.

- ա) Այն գտնվում էր Շիրակում և, ընկած լինելով թագավորության ծայրամասային գավառում, համահայկական մայրաքաղաքի գործառույթներ չէր իրականացնում:
- բ) Դվինը շարունակում էր մնալ արաբների ձեռքին:
- գ) Դվինը Բագրատունիների հիմնական տիրույթներից՝ Շիրակից, դուրս էր գտնվում:
- դ) Դվինը չորս կողմից ողողում էին Արաքսի ջրերը, և նպատակահարմար չէր մայրաքաղաք դարձնել:
- ե) Դվինը երկրաշարժից ավերվել էր և անմարդաբնակ դարձել:

- 1) ա, դ                      2) բ, գ                      3) բ, ե                      4) ա, գ

### 4. Ո՞րն էր Արշակավանի կործանման պատճառը.

- 1) Քաղաքում բնակություն էին հաստատել օրինազանցները, արքայական կալվածքներից փախած դժգոհ շինականներն ու ծառաները:
- 2) Քաղաքում բնակություն էին հաստատել նախարարների կալվածքներից փախած ավանդառուներն ու պարտապանները և նրանցից դժգոհ ծառաներն ու շինականները:

- 3) Քաղաքը կառուցվել էր ոչ թե արքայական տիրույթներում, այլ նախարարներից խլված հողատարածքներում, ինչն էլ հարուցել էր նախարարների դժգոհությունը:
- 4) Քաղաքում բնակություն հաստատած օրինազանցներն ու հարստահարված անազատները խռովություն էին բարձրացրել և սպառնում էին պետության անվտանգությանը:

**5. Ինչո՞ւ է Արշակ արքան Գնելին մահապատժի ենթարկում.**

- 1) քանի որ Գնեյլը հանցավոր համաձայնության էր եկել կենտրոնախույս նախարարների հետ
- 2) քանի որ Գնեյն այք էր դրել թագուհի Փառանծեմի վրա
- 3) քանի որ Տիրիթը հավաստիացրել էր նրան, թե Գնեյլը ցանկանում է դավադրորեն հայոց արքա դառնալ
- 4) քանի որ Գնեյլը գաղտնի կապեր էր հաստատել Շապուհ III-ի հետ

**6. Ինչո՞վ ավարտվեց Ձիրավի ճակատամարտը.**

- 1) հայ-հռոմեական զորքերի պարտությամբ
- 2) պարսկական ուժերի հաղթանակով
- 3) հայ-հռոմեական զորքերի հաղթանակով
- 4) հայկական բանակի պարտությամբ

**7. Պապի բարեփոխումների արդյունքում որքան էր դարձել հայոց բանակի թիվը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) մոտ 80 հազար  | 3) մոտ 120 հազար |
| 2) մոտ 100 հազար | 4) մոտ 180 հազար |

**8. Թվարկվածներից որո՞նք պատճառ հանդիսացան պարսից արքայի կողմից Հայոց Խոսրով IV-ի գերեվարման համար.**

- 1) Համազասպ Մամիկոնյանին հայոց սպարապետ նշանակելը
- 2) Սահակ Պարթևին հայոց կաթողիկոս նշանակելը
- 3) Մեծ Հայքի երկու մասերի միավորումը
- 4) թագավորի ինքնուրույն հարաբերությունները հռոմեական կայսեր հետ
- 5) Խոսրով IV-ի ամուսնությունը Մանվել Մամիկոնյանի դստեր հետ

**9. Ինչո՞ւ պարսից թագավոր Վռամը համաձայնեց ազատ արձակել և հայրենիք վերադարձնել Սահակ Պարթևին.**

- 1) Բյուզանդիայի կայսեր պահանջով
- 2) հայ նախարարների խնդրանքով
- 3) հայերի ընդվզումից վախենալով
- 4) հայ նախարարների պահանջով

**10. Ինչպիսի՞ տնտեսական և մշակութային հետևանքներ ունեցավ Արշակունիների գահակալության շրջանը Մեծ Հայքում.**

- 1) Հայաստանում սկսվեց ավատատիրության ժամանակաշրջանը:
- 2) Հայոց մայրաքաղաքներ հռչակվեցին Բագարանը, Վաղարշապատը, Դվինը:

- 3) Կառուցվեց Արուճի Ս. Գրիգոր եկեղեցին:
- 4) Լայն տարածում գտան վանական համալիրները:
- 5) Ստեղծվեցին Մաշտոցյան գրերը:

**11. Հազկերտ II-ի հանձնարարականով Արևելյան Հայաստանում անցկացված աշխարհագրի նպատակներից էր.**

- 1) հարկերի ծանրացումը և նախարարական համակարգի զորեղացումը
- 2) հարկերի թեթևացումը և նախարարական համակարգի զորեղացումը
- 3) հարկերի ծանրացումը և եկեղեցու ազատության սահմանափակումը
- 4) հարկերի թեթևացումը և եկեղեցու ազատության ընդլայնումը

**12. Հայաստանի ռազմական ուժը թուլացնելու նպատակով ինչ կատարեց Հազկերտ II-ը.**

- 1) Հայոց գնդերն ուղարկեց հյուսիս՝ բյուզանդացիների դեմ պատերազմելու
- 2) Հայոց գնդերն ուղարկեց արևելք՝ քոչվոր հոների դեմ պատերազմելու
- 3) Հայոց գնդերն ուղարկեց հարավ՝ քոչվոր արաբների դեմ պատերազմելու
- 4) Հայոց գնդերն ուղարկեց արևմուտք՝ քոչվոր քուշանների դեմ պատերազմելու

**13. Հազկերտ II-ի հանձնարարականով Արևելյան Հայաստանում անցկացված աշխարհագրի նպատակներից էին.**

- 1) նախարարական համակարգի զորեղացումը
- 2) հարկերի ծանրացումը
- 3) եկեղեցու ազատության սահմանափակումը
- 4) վանքապատկան հողերի կրճատումը
- 5) մազդեզականության տարածումը
- 6) Հայաստանը մարզպանության վերածելը

**14. Ինչո՞ւ էր Վարդան Մամիկոնյանը Աղվանքից շուտափույթ վերադարձել Հայաստան.**

- 1) Որովհետև լուր էր ստացել, որ պարսից մեծաքանակ զորքը մոտեցել էր Հայաստանի սահմաններին:
- 2) Հայտնի էր դարձել, որ Վասակ Սյունին փոխել էր իր վերաբերմունքը և ժողովրդին հորդորում էր հետ կանգնել ապստամբությունից:
- 3) Հայտնի էր դարձել, որ բյուզանդական կայսրը ոչ միայն հրաժարվել էր ապստամբներին օգնելուց, այլև դաշինք էր կնքել Հազկերտ II-ի հետ:
- 4) Որովհետև լուր էր ստացել, որ բյուզանդական զորքերը ներխուժել էին Հայաստանի սահմաններ:

**15. Ո՞րն էր 449 թ. Արտաշատում ժողովի հրավիրման պատճառը.**

- 1) աշխարհագրի անցկացումը
- 2) քրիստոնեությունից հրաժարվելու և մազդեզականությունն ընդունելու պարսից արքայի հրամանը
- 3) հայոց այրուձին երկրից հեռացնելու հրամանը
- 4) հայ նախարարներին ժառանգական հողատիրության իրավունքից զրկելը

## **16. Ավարայրի ճակատամարտի շնորհիվ՝**

- 1) Հայաստանը վերականգնեց անկախ թագավորությունը և չհրաժարվեց քրիստոնեական հավատքից
- 2) Հայաստանը միավորվեց, իսկ հայ ժողովուրդը պահպանեց քրիստոնեական հավատքը
- 3) Հայաստանը կորցրեց իր ներքին ինքնուրույնությունը, սակայն պահպանեց քրիստոնեական հավատքը
- 4) Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը, իսկ հայ ժողովուրդը՝ քրիստոնեական հավատքը

## **17. Ինչո՞վ է ավարտվել Խաղխաղի ճակատամարտը.**

- 1) հոների պարտությամբ
- 2) հայկական ուժերի հաղթանակով
- 3) պարսիկների հաղթանակով
- 4) հայկական ուժերի պարտությամբ

## **18. Հայաստանում խոշոր հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ինչ ձեռնարկեց Սասանյան Պերոզ թագավորը.**

- 1) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց նաև իշխանական տների իգական սեռի ներկայացուցիչներին:
- 2) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների կրտսեր ներկայացուցիչներին:
- 3) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:
- 4) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հռչակեց Պարսից տերությանը:

## **19. Ինչո՞ւ պարսից զորքը 484 թ. Հայաստանից արագորեն վերադարձավ Պարսկաստան.**

- 1) Որովհետև պարսից զորքերը Ներսեհապատի ճակատամարտում պարտություն էին կրել և մեծ քանակությամբ զոհեր տվել:
- 2) Որովհետև պարսից զորքերը Ճարմանայի ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո շարժվելու էին դեպի Բյուզանդիա:
- 3) Որովհետև պարսից զորքերը Ճորա պահակի մոտ պարտություն էին կրել հեփթաղներից, իսկ Պերոզ արքան գերի էր ընկել:
- 4) Որովհետև պարսից զորքերը Միջին Ասիայում պարտություն էին կրել հեփթաղներից, իսկ Պերոզ արքան սպանվել էր:

## **20. Որո՞նք էին V դարի հայ ապստամբական շարժման հետևանքները.**

- 1) Արցախ և Ուտիք նահանգներում և հարակից տարածքներում հայոց թագավորության հիմնումը
- 2) Փոքր Հայքի անկախ պետականության վերականգնումը

- 3) Մեծ Հայքի անկախության վերականգնումը
- 4) հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելը
- 5) հայոց պետականության փաստական վերականգնումը

**21. Արևմտյան Հայաստանում նախարարական հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ինչ ձեռնարկեց Հուստինիանոս I-ը.**

- 1) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների ավագ ներկայացուցիչներին:
- 2) Տոհմական կալվածքներ ժառանգելու իրավունք շնորհեց նաև կանանց ու աղջիկներին:
- 3) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:
- 4) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հռչակեց Բյուզանդական կայսրությանը:

**22. Հուստինիանոս I-ը պաշտոնանկ էր արել և պալատում արգելափակել Արտավան Արշակունուն, որովհետև՝**

- 1) նա գաղտնի բանակցել էր պարսիկների հետ:
- 2) նա գլխավորել էր Սիստաս զորավարի դեմ կազմակերպված մահափորձը:
- 3) նա Հյուսիսային Աֆրիկայում պարտություններ էր կրել, և նրա զորքը զգալի մարդկային կորուստներ էր ունեցել:
- 4) նա մասնակցել էր Արշակ Արշակունու՝ Հուստինիանոսի դեմ կազմակերպած դավադրությանը:

**23. Ինչ կարևոր հետևանք ունեցավ Դվինի II ժողովի գումարումը.**

- 1) Հայ առաքելական եկեղեցին վերջնականապես ազատվեց կաթոլիկ եկեղեցու հոգևոր ենթակայությունից:
- 2) Վերջնականապես հաստատվեց Հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:
- 3) Հայ առաքելական եկեղեցին դարձավ ուղղափառ եկեղեցու առաջնորդը:
- 4) Հայ առաքելական եկեղեցին համաձայնեց ընդունել Քաղկեդոնի

**24. Թվարկվածներից որը 571–572 թթ. հակապարսկական ապստամբության պատճառներից չէ.**

- 1) հարկերի ու տուրքերի ծանրացումը
- 2) պարսից արքայի կողմից սեպուհներին հողեր ժառանգելու իրավունքի շնորհումը
- 3) վարչական ու կրոնական ճնշումների ուժեղացումը
- 4) հայ բնակչության հարստահարության շարունակումը

**25. Ինչով էր պայմանավորված VII դարում հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառավարման խաղաղ ընթացքը.**

- 1) Մուավիան դարձել էր Արաբական պետության խալիֆ:
- 2) Գրիգոր Մամիկոնյանը պարտության էր մատնել Կարինը պաշարած բյուզանդացիներին:

- 3) Ուժի մեջ էր մտել Թեոդոսիոս II-ի հետ կնքած հայ-բյուզանդական պայմանագիրը:
- 4) Ուժի մեջ էր մտել Թեոդորոս Ռշտունու հետ կնքած հայ-արաբական պայմանագիրը:
- 5) Գրիգոր Մամիկոնյանը պարտության էր մատնել արաբական զորքերին:

**26. Ո՞րն էր 703 թ. հակաարաբական ապստամբության պատճառը.**

- 1) Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում հայ նախարարների ողջակիզումը
- 2) Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությունը և կրոնական հալածանքները
- 3) Հերթ ոստիկանի «աշխարհագիրը»
- 4) հայ հոգևորականությանը հարկատու դարձնելը

**27. Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսացել են Բագրատունիների պետության անկման պատճառներ.**

- ա) հայ-բյուզանդական առևտրական ու բարեկամական պայմանագրի կնքումը
- բ) Հայաստանի քաղաքական մասնատվածությունը
- գ) հայոց պետության նկատմամբ Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը
- դ) թյուրք-սելջուկների արշավանքները
- ե) Հայաստանի ներքին գործերին Սաջյան ամիրայության միջամտությունները
- զ) Անիի Բագրատունիների թագավորության ներսում սկսված գահակալական պայքարը

- 1) բ, ե, դ                      2) բ, գ, զ                      3) ա, գ, դ                      4) դ, ե, զ

**28. Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու նպատակով՝**

- 1) խնամիական կապեր հաստատեց Սյունիքի և Վասպուրականի գահերեց իշխանների հետ
- 2) հայ ազդեցիկ նախարարների տիրույթները կրճատեց
- 3) խնամիական կապեր հաստատեց Վիրքի ու Աղվանքի ազդեցիկ գործիչների հետ
- 4) առևտրական և բարեկամական դաշինք կնքեց Բյուզանդիայի հետ

**29. Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական արդյունքներ չեն.**

- ա) Տիրանի հետ ունեցած բարդ հարաբերությունների արդյունքում հայոց զորքերի հրամանատարներ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները հեռացան իրենց տոհմական աշխարհը՝ Տայք:
- բ) Սելևկյանների դեմ համառ ու երկարատև կռիվների արդյունքում Արտաշեսը Մեծ Հայքին միացրեց Տմորիք երկրամասը:
- գ) 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանման արդյունքում Հայաստանի մեծ մասն անցավ Պարսկաստանին:

դ) 748–750 թթ. ապստամբության արդյունքում Արաբական խալիֆայությունը ստիպված էր Հովնանին նշանակել «Լեռան» կառավարիչ:

ե) Հայերի 850–855 թթ. ապստամբության արդյունքում խալիֆայությունը ստիպված էր Սասուն գավառը դուրս բերել «Ջազիրա» նահանգից և միացնել Արմինիային:

1) բ, գ

2) բ, դ

3) գ, ե

4) ա, դ

**30. Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու կողմից հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելը և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելը հետևանք էր այն բանի, որ նա՝**

1) հայ իշխաններին ստիպեց մշտապես բնակվել արքունիքում:

2) հայ ազդեցիկ գահերեց իշխանների ավագ որդիներին պատանդ պահեց արքունիքում:

3) խնամիական կապեր հաստատեց Վիրքի և Արցախի գահերեց իշխանների հետ:

4) խնամիական կապեր հաստատեց Սյունիքի և Վասպուրականի գահերեց իշխանների հետ:

**31. Թվարկվածներից որոնք Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանի անկախության վերականգնման համար արտաքին նախադրյալ չեն հանդիսացել.**

1) Խալիֆայության ներքաղաքական իրավիճակը կայուն չէր, մեծ ծավալ էին ստացել ժողովրդական ազատագրական ընդվզումները և գահակալական կռիվները:

2) Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում բավականին ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվելու խալիֆայությունից:

3) Խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա դարավոր հակառակորդ Պարսկաստանը, որն ամեն կերպ աջակցում էր խալիֆայությունից առանձնանալ ձգտող կենտրոնախույս ուժերին:

4) Գերազանցապես վարձկաններից կազմված արաբական բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին և երբեմն անհնազանդություն էր ցուցաբերում:

5) Արևելքում խալիֆայությունը կործանիչ պարտություն էր կրել Ատրպատականից, և կազմալուծվող խալիֆայությունը հարկադրված էր դիմելու զիջումների քաղաքականության:

**32. Բերված փաստարկներից առանձնացնել հայկական անկախ պետականության վերականգնման ներքին նախադրյալները.**

ա) Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվելու խալիֆայությունից:

բ) Հայն ծավալ ստացած ժողովրդական ազատագրական ընդվզումները, մասնավորապես Ատրպատականում Բաբեկի գլխավորած ապստամբությունը և գահակալական կռիվները խարխուլել էին խալիֆայության կենտրոնական իշխանության դիրքերը:

գ) Հայոց եկեղեցին ջանում էր ազատվել կրոնական հալածանքներից, իսկ աշխատավորական զանգվածները՝ օտարերկրյա ծանր լծից:

դ) Առաջադիմում ու խորանում էին ավատատիրական հարաբերությունները, աստիճանաբար ամրապնդվում էր հայ իշխանների ժառանգական հողատիրությունը, ընդարձակվում էին նրանց կալվածքները:

ե) Բյուզանդիան ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին:

1) գ, ե

2) ա, դ

3) բ, ե

4) գ, դ

**33. Ինչն առիթ հանդիսացավ Սաջյան ամիրայի՝ Հայաստան ներխուժելու համար.**

1) 893 թ. Բյուզանդիայի հետ Բագրատունյաց Հայաստանի կնքած պայմանագիրը

2) Աշոտ I-ի՝ խալիֆի հետ կնքած դաշինքը

3) Օրբելյանների և Արծրունիների միջև Նախճավան քաղաքի պատճառով ծագած վեճը

4) Գագիկ Արծրունու՝ Վասպուրականի թագավոր թագադրվելը

**34. Ստորև թվարկվածներից որոնք միջնադարում քաղաքային կյանքի վերելքի պայմաններ չեն.**

1) արհեստների զարգացումը

2) առևտրի զարգացումը

3) աշխատանքի հասարակական բաժանումը

4) պատերազմները

5) տնտեսական-շուկայական թույլ կապերը երկրի տարբեր մասերի միջև

**35. Սյունիքի թագավորության կենտրոնը Սյունի ավանից տեղափոխվեց Կապան, որովհետև՝**

1) Սյունի ավանը առևտրական և ռազմական առումով անհարմար վայրում էր գտնվում

2) Սյունին երկրաշարժի հետևանքով լքվել էր

3) թագավորության զոյատևման համար վտանգ էր առաջացել

4) Սյունին պարսկական զորքերի հարձակումների հետևանքով ավերվել էր

**36. Թվարկվածներից որն է թյուրք-սելջուկների կողմից Անի քաղաքի գրավման գլխավոր պատճառը.**

1) Անիի հույն վարձկանները բացեցին քաղաքի դարպասները:

2) Անին անպարիսպ քաղաք էր:

3) Թյուրք-սելջուկները տեր կանգնեցին Անիի թագավորությունն իրենց կտակած Հովհաննես-Սմբատի կտակին:

4) Անիի բյուզանդական կայսրը քաշվեց քաղաքի միջնաբերդ և անպաշտպան թողեց բնակչությանը:

**37. Թվարկվածներից որոնք Մանազկերտի ճակատամարտի հետևանքներ չեն.**

1) Բյուզանդացիները հսկայական կորուստներ կրեցին, իսկ Դիոգենես կայսրը գերի ընկավ:

2) Բյուզանդացիները ստիպված ընդունեցին իրենց պարտությունը և հաշտություն կնքեցին թյուրք-սելջուկների հետ:



- 3) Հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում:
- 4) Հայաստանի միայն հարավային շրջաններն ու Արարատյան դաշտն ընկան թյուրք-սելջուկների տիրապետության տակ:
- 5) Տաշիր-Ձորագետի, Կարսի (Վանանդի), Վասպուրականի և Սյունիքի թագավորները շտապեցին հպատակություն հայտնել սելջուկներին:

**38. Ինչո՞ւ Արևմտյան Եվրոպայից խաչակիրները շարժվեցին դեպի Արևելք.**

- 1) Պաղեստինը և Ասորիքը մահմեդականներից ազատագրելու համար
- 2) Միջերկրական ծովի հյուսիսային առափնյա շրջաններին տիրելու համար
- 3) Բյուզանդիային սելջուկներից պաշտպանելու համար
- 4) Երուսաղեմի թագավորությանը տիրելու համար

**39. Թվարկվածներից որո՞նք են Կիլիկիայի հայերի և մոնղոլների միջև ձեռնտու դաշինքի կնքման պատճառ հանդիսացել.**

- ա) Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին, որպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:
- բ) Հայերը ցանկանում էին հայ-մոնղոլական դաշինքը հակադրել խաչակրաց-մամլուքյան դաշինքին:
- գ) Հեթանոս մոնղոլները ձգտում էին շահելու քրիստոնյա հայերի համակրանքը, որովհետև թշնամաբար էին տրամադրված մահմեդականների նկատմամբ:
- դ) Մոնղոլները խոստանում էին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- ե) Հայերը խոստանում էին մոնղոլներին հանձնել Այաս նավահանգստից ստացվող եկամուտների կեսը:
- զ) Մոնղոլները խոստացան հայերին վերադարձնել մահմեդականների խլած տարածքները և օգնություն ցույց տալ Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:

- 1) ա, դ, ե                      2) բ, գ, զ                      3) դ, ե, զ                      4) ա, դ, զ

**40. Ինչո՞ւ էր կարևորվում կաթողիկոսական աթոռի՝ Կիլիկիայից Հայաստան տեղափոխելը.**

- ա. Հայաստանում նախադրյալներ էին ստեղծվել պետականության վերականգնման համար, և կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը կնպաստեր կենտրոնական պետական իշխանության ամրապնդմանը:
- բ. Կիլիկիայում հայկական թագավորության կործանումից հետո այնտեղ գտնվող ամենայն հայոց կաթողիկոսության աթոռը մնացել էր անպաշտպան:
- գ. Կիլիկիայում կաթողիկոսական աթոռը կտրվել էր բուն Հայաստանից և այլևս չէր կարող համահայկական դեր կատարել:
- դ. Դրանով Ամենայն հայոց Գրիգոր կաթողիկոսը ձգտում էր ապահովելու իր անձնական անվտանգությունը:
- ե. Դրան էր ձգտում ամբողջ հայ հոգևորականությունը:

- 1) ա, բ                              2) ա, գ                              3) բ, գ                              4) դ, ե

**41. Թվարկվածներից որո՞նք մոնղոլական տիրապետության հաստատման անմիջական հետևանքներից չեն.**

- 1) մոնղոլների կողմից քաղաքների ամայացումը
- 2) բոլոր հպատակ ժողովուրդներին սկզբից և եթե մահմեդականությունը պարտադրելը
- 3) բնակչության արտագաղթը
- 4) նվաճված երկրների բնակչությանը ծանր հարկման ենթարկելը
- 5) ողջ միջերկրածովյան առևտրի հանդեպ մոնղոլական վերահսկողություն սահմանելը

**42. Թվարկվածներից որո՞նք են 1259 թ. հայ-վրացական հակամոնղոլական ապստամբության պատճառ.**

- ա) հարկերի բարձրացումը
  - բ) հայ-վրացական ջոկատները Եգիպտոս՝ մամլուքների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշումը
  - գ) հայ-վրացական ջոկատները Բյուզանդիա՝ խաչակիրների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշումը
  - դ) ամրիսպասալար Ջաքարեի թոռան՝ Ջաքարե Ջաքարյանին մահապատժի ենթարկելը
  - ե) Հուլավու խանի կողմից Խաչենի տիրակալ Հասան-Ջալալի սպանությունը
- 1) բ, գ                      2) ա, բ                      3) ա, դ                      4) գ, ե

**43. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հուլավու խանի կողմից 1259 թ. հակամոնղոլական ապստամբության ճնշումը.**

- 1) Հայ ղեկավարներից մահապատժի ենթարկվեց Խաչենի տիրակալ Հասան-Ջալալը:
- 2) Մահապատժի ենթարկվեց ամիրսպասալար Ջաքարեի թոռը՝ Ջաքարե Ջաքարյանը:
- 3) Հայ ղեկավարներից մահապատժի ենթարկվեց Դիզակի մելիք Հասան-Ջալալը:
- 4) Մահապատժի ենթարկվեց ամիրսպասալար Իվանեի թոռը՝ Ջաքարե Ջաքարյանը:
- 5) Մահապատժի ենթարկվեց ամիրսպասալար Սարգիս Ջաքարյանի թոռը՝ Ջաքարե Ջաքարյանը:

**44. Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական արդյունքներ:**

- ա) Հալեպի ամիրայի հետ Մլեհի համագործակցության արդյունքում խաչակիրներից հետ խլվեցին Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը:
- բ) Տիրանի վարած անկախ քաղաքականության արդյունքում հաստատվեց հայոց կաթողիկոսական աթոռի ինքնուրույնությունը:
- գ) Պապի բարեփոխումների արդյունքում բանակի թիվը հասավ մոտ հարյուր հազարի:

- դ) Սահակ Պարթև կաթողիկոսի ջանքերի արդյունքում Շապուհ III-ը Կամսարականներին ու Ամատունիներին վերադարձրեց իրենց տոհմական տիրույթները:
- ե) Մի խումբ հայ նախարարների և փառամուլ երեց Բրքիշոյի չարախոսության ու ամբաստանության արդյունքում Հազկերտ արքան զրկում է Արտաշեսին գահից և արգելափակում Տիգրանում:

- 1) ա, դ                                    2) բ, ե                                    3) բ, դ                                    4) ա, գ

**45. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը.**

- ա. Երվանդ Սակավակյացը Մարաստանի արքա Աժդահակի դեմ պատերազմի արդյունքում պահպանել էր իր թագավորությունը, սակայն ստիպված ճանաչել էր մարական գերիշխանությունը:
- բ. XVI դ. թուրք-պարսկական պատերազմների հետևանքով մեծ թվով թուրքական ու քրդական ցեղեր ներթափանցեցին Հայաստան:
- գ. Թյուրք-սելջուկների ավերիչ արշավանքների և Բյուզանդիայի վարած քաղաքականության հետևանքով հայ բնակչության մի մասը, արտագաղթելով Հայաստանից, հաստատվեց Կիլիկիայում:
- դ. Առաջին խաչակրաց արշավանքի արդյունքում ստեղծվեց Եդեսիայի թագավորությունը:
- ե. Վարազտիրոց Բագրատունու հեռատես քաղաքականության արդյունքում Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունն ու վերականգնեց անկախությունը:

- 1) ա, դ                                    2) ա, գ                                    3) բ, գ                                    4) դ, ե

**46. Ո՞րն էր Բագրատունյաց Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման ջանքերի ձախողման գլխավոր պատճառը.**

- 1) երկրի՝ տնտեսական առումով հետամնաց լինելը
- 2) արտաքին գործոնները
- 3) հայ իշխանների անհնազանդությունը
- 4) Հայոց եկեղեցու ղեկավարության դիրքորոշումը

**47. Ո՞րն էր Անին բյուզանդացիներին հանձնելու պատճառը.**

- 1) Արքունիքում մեծացել էր բյուզանդասերների թիվը, թուլացել էր բնակչության դիմադրական կորովը:
- 2) Բնակչությունը չհամախմբվեց սպարապետի շուրջը և չցանկացավ կռվել ոսոխի դեմ:
- 3) Հայ իշխանները միացան բյուզանդական բանակին և սատարեցին թշնամիներին:
- 4) Պետրոս Գետադարձ կաթողիկոսը համաձայնեց բյուզանդացիների քաղկեդոնականություն ընդունելու առաջարկի հետ և միացավ թշնամուն:

**48. Գտնել սխալ պատասխանը.**

*Ի՞նչ հետևանք ունեցան խաչակրաց արշավանքները Կիլիկյան Հայաստանի համար:*

- 1) Դրանք սկզբնապես շեղեցին Կիլիկյան Հայաստանից նրա թշնամիների ուշադրությունը:
- 2) Խաչակիրները բռնազավթեցին հայ իշխանների տիրույթները Հյուսիսային Ասորիքում և Եփրատի ափերին:
- 3) Արևելքում խաչակիրների ստեղծած պետությունները Դաշտային Կիլիկիայի համար ռազմական բախումների մեջ մտան հայկական իշխանությունների հետ:
- 4) Ստեղծվեց մոնղոլա-հայ-խաչակրաց ռազմաքաղաքական դաշինք ընդդեմ մամլուքների:

**49. Ի՞նչ հետևանք ունեցավ Չաբելի և Հեթումի ամուսնությունը.**

- 1) Թագավորությունը ենթարկվեց Անտիոքի իշխանությանը:
- 2) Ներքաղաքական պայքարում հաղթանակ տարան կենտրոնախույս ուժերը:
- 3) Թագավորական իշխանությունը թուլացավ և կորցրեց հզորությունը:
- 4) Վերջապես լուծվեց գահակալության խնդիրը:

**50. Ի՞նչ հետևանք ունեցավ Կիլիկյան Հայաստանում ունիթորների և հակաունիթորների պայքարը.**

- 1) Ամրապնդեց թագավորական իշխանությունը:
- 2) Խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:
- 3) Նախադրյալներ ստեղծեց առաջադիմական ուժերի հաղթանակի համար:
- 4) Ամրապնդեց երկրում հոգևորականության դիրքերը:

**51. Կիլիկյան Հայաստանի գահը որոշվեց հանձնել ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյաններին, որովհետև՝**

- 1) Լուսինյանները գահի միակ օրինական ժառանգորդներն էին:
- 2) փորձ էր արվում Կիլիկիայի համար ապահովելու Արևմուտքի և Կիպրոսի ռազմաքաղաքական օժանդակությունը:
- 3) անհրաժեշտ էր այդ ճանապարհով երկիրը դուրս բերել քաղաքական մեկուսացումից:
- 4) Կիպրոսում կառավարող Լուսինյանները կարող էին իրական օգնություն ցույց տալ Բյուզանդիայի դեմ պայքարում:

**52. Գտնել Կիլիկյան Հայաստանում ռազմական նավատորմի ստեղծման պատճառները.**

- ա. Անհրաժեշտ էր պաշտպանել պետության ծովային սահմանները:
- բ. Առանց ռազմական նավատորմի մասնակցության հնարավոր չէր պաշտպանել մայրաքաղաք Սիսը:
- գ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր ծովահենների գլխավոր հենակետը, իսկ հայոց պետությունը նրանց հետ մշտական բախումների մեջ էր գտնվում:

դ. Անհրաժեշտ էր ապահովել ծովային առևտրի անվտանգությունը:

ե. Անհրաժեշտ էր խորտակել թուրքական նավերը, մինչև որ նրանք կհասցնեին ներխուժել Կիլիկյան Հայաստան:

1) ա, գ

2) գ, դ

3) ա, դ

4) բ, ե

**53. Ո՞րն էր մոնղոլների՝ Կիլիկիայի հետ դաշինք կնքելու շարժառիթը.**

1) ծրագրել էին գրավել Ասորիքն ու Պաղեստինը, որն իրականացնելու գործում ձգտում էին հայերի աջակցությունն ունենալ

2) փորձում էին պայմաններ ստեղծել հայերի արտագաղթի համար

3) շահագրգռված էին Այաս նավահանգստի եկամուտներով

4) ծրագրել էին Միջերկրական ծովի առևտրի մենաշնորհը վերցնել իրենց ձեռքը

**54. Ի՞նչ հետևանք ունեցավ Ջհանշահի կառավարումը Արևելյան Հայաստանում.**

1) Գեղամա երկրի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ:

2) Կալվածքները եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ստացած ֆեոդալները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ:

3) Արագացավ հայկական պետականության վերականգնման գործընթացը:

4) Զեյթունի, Շատախի, Սասունի, Մոկսի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ:

**55. Ո՞րն էր Աբգար դպիր Թոխաթեցու գլխավորած պատվիրակության նպատակը.**

1) համոզել եվրոպական պետություններին, որ օգնեն հայերին՝ ազատագրվելու արաբական տիրապետությունից

2) համոզել եվրոպական պետություններին, որ օգնեն հայերին՝ ազատագրվելու օսմանյան տիրապետությունից

3) համոզել եվրոպական պետություններին, որ օգնեն հայերին՝ կազմակերպելու հակապարսկական ապստամբություն

4) համոզել եվրոպական պետություններին՝ ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հայկական մարզերում բարենորոգումներ կատարելու համար:

**56. Ի՞նչ նպատակով էր Վենետիկ մեկնել Աբգար Թոխաթեցու գլխավորած պատվիրակությունը.**

1) Եվրոպական երկրներին համոզելու ռազմական օգնություն ցույց տալ հայերին պարսկական լծի դեմ պայքարելու համար:

2) Եվրոպական երկրներին համոզելու ստանձնել Հայաստանի մանդատը:

3) Եվրոպական երկրների հետ ազատ առևտրի իրավունք ձեռք բերելու համար:

4) Եվրոպական երկրներին համոզելու, որ օգնեն հայերին ազատագրվելու օսմանյան տիրապետությունից:

**57. Ս. Էջմիածնում Հայոց կաթողիկոսության վերահաստատման հետևանքն այն եղավ, որ՝**

- 1) թեև ավելի բարձրացավ Այրարատյան աշխարհի ազգային-քաղաքական դերը, սակայն բուն հայրենիքում հայ ժողովրդի հետագա համախմբում տեղի չունեցավ:
- 2) ավելի բարձրացավ Այրարատյան աշխարհի ազգային-քաղաքական դերը, և բուն հայրենիքում իրականացավ հայ ժողովրդի հետագա համախմբումը:
- 3) թեև Այրարատյան աշխարհը չդարձավ համահայկական կենտրոն, սակայն ուշ միջնադարում հայոց պետականությունը պահպանվեց, և կիսանկախ նոր իշխանություններ առաջացան:
- 4) ավելի պառակտվեց Հայ առաքելական եկեղեցին, նվիրապետական նոր աթոռներ առաջացան, և Մայր Աթոռը չկարողացավ պահպանել նախորդ դարերում իր ունեցած միավորիչ և պետականապահպան գործառույթը:

**58. Տրված պնդումներից առանձնացնել երկուսը, որոնք Սսից Էջմիածին կաթողիկոսական աթոռի փոխադրման հետևանքներից են.**

- ա) Ավելի բարձրացավ Այրարատյան աշխարհի ազգային քաղաքական դերը:
- բ) Կաթողիկոսությունը պաշտպանվեց խաչակիրների հալածանքներից:
- գ) Կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա համախմբման համար:
- դ) Այն միջնորդի դեր ստանձնեց մահմեդական ամիրայությունների միջև:

- 1) ա, բ                      2) բ, գ                      3) բ, դ                      4) ա, գ

**59. Բերված պատճառներից գտնել երկուսը, որոնք անհրաժեշտ էին դարձնում կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սիսից Էջմիածին.**

- ա. Անհրաժեշտ էր հայոց կաթողիկոսի գլխավորությամբ ազատագրական պայքար ծավալել Արևելյան Հայաստանում:
- բ. Կիլիկիայում թագավորական իշխանության վերացումից հետո այնտեղ գտնվող կաթողիկոսական աթոռը մնացել էր անպաշտպան:
- գ. Ամենայն հայոց կաթողիկոսությունը Էջմիածին տեղափոխելը պայմանավորված էր պարսկական իշխանությունների գործադրած հարկադրանքով:
- դ. Կտրված լինելով բուն Հայաստանից՝ Կիլիկիայում գտնվող կաթողիկոսական աթոռը չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը:
- ե. Կարա-կոյունլուները ձգտում էին տիրանալու Էջմիածնին ու դարձնելու իրենց մայրաքաղաքը, ուստի պետք էր կանխել նրանց մտադրության իրականացումը:

- 1) ա, ե                      2) գ, դ                      3) բ, դ                      4) բ, ե

**60. Գտնել սխալ պատասխանը.**

*Ինչ նպատակով շահ Աբասը թուրքական բանակի շարժման ճանապարհին ընկած հայկական բնակավայրերի բնակչությանը գաղթեցրեց Պարսկաստանի խորքերը:*

- 1) Դրանով թուրքական բանակը կզրկվեր պարենից ու օթևանի հնարավորությունից և ի վիճակի չէր լինի շարունակելու արշավանքը:

- 2) Հայ որակյալ երկրագործներին ու արհեստավորներին բնակեցնելով երկրի ներքին գավառներում՝ շահը հույս ունենալով զարգացնելու Պարսկաստանի տնտեսությունը:
- 3) Տեղափոխելով Պարսկաստանի արևելյան սահմանամերձ շրջանները՝ կկասեցնեն թուրքական զորքերի առաջխաղացումը:
- 4) Հայ առևտրականներին փոխադրելով երկրի հարավ՝ նա ձգտում էր հյուսիսում զարգացած մետաքսի առևտուրը տեղափոխելու Պարսից ծոցի շրջան, ինչը տնտեսական մեծ վնաս կհասցներ Օսմանյան պետությանը:

**61. Ինչո՞ւ էր շահ Աբասը թուրքական բանակի շարժման ճանապարհին ընկած հայկական բնակավայրերի բնակչությանը գաղթեցրել Պարսկաստանի խորքերը.**

- ա. Դրանով թուրքական բանակը կզրկվեր պարենից ու օթևանի հնարավորությունից և ի վիճակի չէր լինի շարունակելու արշավանքը:
- բ. Հայ որակյալ երկրագործներին ու արհեստավորներին բնակեցնելով երկրի ներքին գավառներում՝ շահը հույս ունենալով զարգացնելու Պարսկաստանի տնտեսությունը:
- գ. Պարսկաստանի սահմանամերձ շրջաններ տեղափոխված հայերը կզինվորագրվեին պարսկական բանակին և կկասեցնեին թուրքական զորքերի առաջխաղացումը:
- դ. Թուրքիայի համար այլևս իմաստ չէր ունենա ավերված շրջանների գրավումը, և թուրքական բանակը չէր շարունակի արշավանքը:
- ե. Հայ առևտրականներին փոխադրելով երկրի հարավ՝ նա ձգտում էր հյուսիսում զարգացած մետաքսի առևտուրը տեղափոխելու Պարսից ծոց, ինչը տնտեսական մեծ վնաս կհասցներ Օսմանյան պետությանը:

- 1) ա, բ, ե                      2) գ, դ, ե                      3) բ, գ                              4) ա, դ

**62. Կասրե-Շիրինում կնքված պայմանագրի հետևանքով՝**

- 1) Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև:
- 2) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ:
- 3) Հայաստանը կրկին վերաբաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև:
- 4) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ:

## 6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 6-1. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ) պատասխանով առաջադրանքներ

#### 1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Լուսավորչի եպիսկոպոսական ձեռնադրությունը Կեսարիայում
- բ. Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը
- գ. Բագավանում Գրիգոր Լուսավորչին դիմավորելը
- դ. Խոր Վիրապում Լուսավորչին բանտարկելը
- ե. Հռիփսիմյան կույսերի նահատակությունը

- 1) ե, դ, ա, գ, բ
- 2) դ, ա, ե, գ, բ
- 3) դ, ե, ա, գ, բ
- 4) դ, ե, գ, բ, ա

#### 2. Ստորև տրած իրադարձություններից ո՞րն է խախտում Հայոց Մեծ դարձի ժամանակ տեղի ունեցած դեպքերի ժամանակագրությունը.

- 1) Սուրբ Գրիգորի բանտարկությունը Խոր Վիրապում
- 2) Վաղարշապատում Գրիգոր Լուսավորչին եպիսկոպոսապետ կարգելը
- 3) Մաժակում Սուրբ Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրվելը
- 4) Հայոց արքայի և բազմության մկրտությունը
- 5) Սուրբ կույսերի վկայարանների կառուցումը

#### 3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. դավաճաններ Դատաբեն Բզնունու և Բակուր բղեշխի մահապատիժը
- բ. Հուսիկ կաթողիկոսի ձեռնադրությունը
- գ. քրիստոնեական եկեղեցու «Հավատո հանգանակի» ընդունումը
- դ. Տիրան թագավորի բնակություն հաստատելը Կուաշում
- ե. Վաչե Մամիկոնյան սպարապետի և իր զինակիցների նահատակությունը
- զ. մազքութների կողմից Վաղարշապատի գրավումը

- 1) գ, գ, ա, ե, բ, դ
- 2) գ, գ, ե, ա, դ, բ
- 3) ա, գ, գ, ե, դ, բ
- 4) գ, գ, ա, բ, ե, դ

#### 4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հուսիկի ձեռնադրվելը հայոց կաթողիկոս
- բ. Յլու գլուխ լեռան ճակատամարտը
- գ. «Ամոթալի» պայմանագրի կնքումը
- դ. Սասանյան զորքերի ներխուժումը Հայաստան և Դատաբեն Բզնունու դավաճանությունը



ե. Աշտիշատի եկեղեցական ժողովի հրավիրումը

զ. Ձիրավի ճակատամարտը

1) դ, բ, գ, գ, ե, ա

3) բ, ա, դ, գ, գ, ե

2) բ, դ, ա, ե, գ, գ

4) դ, բ, ա, գ, ե, գ

**5. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Միլանի կայսերական հրովարտակի ընդունումը

2) Մծբինի 40–ամյա պայմանագրի խախտումը Շապուհ II–ի կողմից

3) Առաջին տիեզերական ժողովի գումարումը

4) մագքութների թագավոր Սանեսանի զորքի ներխուժումը Հայաստան

5) Վաչե Մամիկոնյանի և նրա զինակիցների նահատակվելը

**6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Շապուհ II–ի զորքերի ջախջախումը Գանձակի մոտ և Հայաստանում խաղաղության վերականգնումը

բ. Պապի վերադարձը Հայաստան Տերենտիոսի գլխավորած զորաջոկատով

գ. Պապ թագավորի խուսափելը ծուղակից և վերադառնալը Տարսունից Հայաստան

դ. Ատրպատականում Շապուհ II–ի գանձարանին և կանանոցին տիրանալը հայերի կողմից

ե. Մերուժան Արծրունու ձերբակալությունը և մահապատիժը

1) բ, դ, ե, ա, գ

3) բ, գ, ե, ա, դ

2) բ, ե, գ, ա, դ

4) ե, բ, գ, դ, ա

**7. Լուսավորչի տոհմին պատկանող կաթողիկոսներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ներսես Մեծ

գ. Վրթանես

բ. Հուսիկ

դ. Արիստակես

1) գ, դ, ա, բ

3) դ, գ, ա, բ

2) գ, դ, բ, ա

4) դ, գ, բ, ա

**8. Արշակունյաց Հայաստանի թագավորների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Պապ

դ. Արշակ II

բ. Արտաշես

ե. Արշակ III

գ. Շապուհ

զ. Վարազդատ

1) դ, ա, ե, գ, բ, գ

3) գ, դ, ա, բ, ե, գ

2) դ, ա, գ, ե, գ, բ

4) ա, դ, ե, գ, բ, գ

**9. Արշակունյաց Հայաստանի սպարապետների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| ա. Վասակ Մամիկոնյան    | դ. Արտավազդ Մամիկոնյան |
| բ. Մանվել Մամիկոնյան   | ե. Մուշեղ Մամիկոնյան   |
| գ. Արտավազդ Մանդակունի | զ. Վաչե Մամիկոնյան     |
| 1) գ, գ, դ, ա, ե, բ    | 3) գ, գ, դ, ա, ե, բ    |
| 2) գ, գ, ա, դ, ե, բ    | 4) գ, գ, դ, ե, բ, ա    |

**10. Մեջբերումները դասավորել ըստ դրանց համապատասխան իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության.**

- ա. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը»:  
բ. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:  
գ. «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:  
դ. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
- |               |               |               |               |
|---------------|---------------|---------------|---------------|
| 1) դ, բ, գ, ա | 2) դ, ա, բ, գ | 3) գ, դ, ա, բ | 4) բ, դ, ա, գ |
|---------------|---------------|---------------|---------------|

**11. Վարդանանց պատերազմի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. գերի վերցված պարսից մոգերի մահապատիժը Ջարեհավանում  
բ. հայ նախարարների՝ քրիստոնեության առերես ուրացումը Տիգրանում  
գ. Անգղի եկեղեցին քանդելու փորձը պարսից զորքի և մոգերի կողմից  
դ. հայ նախարարների ժամանումը Տիգրան՝ Հազկերտ II–ի արքունիք  
ե. Աշուշա բղեշխին և Վասակ Սյունու զավակներին պատանդ թողնելը Տիգրանում
- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) դ, բ, ե, գ, ա | 3) դ, բ, ե, ա, գ |
| 2) բ, դ, գ, ե, ա | 4) բ, դ, ե, գ, ա |

**12. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Վախթանգ Գորգասալի գահակալության սկիզբը  
բ. Գյուտ կաթողիկոսի մեկնումը Տիգրան  
գ. մարզպան Ատրվշնասափ փախուստը Ատրպատական  
դ. Գյուտ կաթողիկոսի հաստատվելը Վանանդում  
ե. Ուրացյալ Վազգեն բղեշխի սպանությունը
- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) ա, բ, դ, ե, գ | 3) բ, ա, դ, գ, ե |
| 2) դ, բ, ա, գ, ե | 4) ա, բ, ե, գ, դ |

**13. Ո՞ր իրադարձությունն է խախտել տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) վրաց եկեղեցու անջատվելը Հայ առաքելական եկեղեցուց  
2) Կոմիտաս Մամիկոնյանի օծվելը հայոց կաթողիկոս

- 3) Երուսաղեմի գրավումը պարսիկների կողմից և Քրիստոսի Խաչափայտի գերեվարումը
- 4) Խոսրով II-ի կողմից Տիգրանի ժողովի գումարումը
- 5) գերեվարված Խաչափայտի վերադարձվելը Երուսաղեմ

**14. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Ակոռիի ճակատամարտը
- բ) Վարազտիրոցի նշանակվելը հայոց իշխան
- գ) Գյուտ կաթողիկոսի մեկնումը Տիգրան
- դ) Տիգրանակերտի գրավումն ու ավերումը հռոմեացիների կողմից
- ե) Ճարմանայի ճակատամարտը
- զ) Խաղխաղի ճակատամարտը

- 1) դ, ե, ա, բ, գ, զ
- 2) դ, գ, գ, ա, ե, դ
- 3) գ, գ, բ, դ, ե, ա
- 4) դ, ե, գ, գ, բ, ա

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Զվարթնոցի տաճարի կառուցումը
- բ. Թալինի եկեղեցու կառուցումը
- գ. Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը
- դ. Արուճի Ս. Գրիգոր եկեղեցու կառուցումը

- 1) ա, դ, գ, բ
- 2) գ, ա, բ, դ
- 3) ա, գ, բ, դ
- 4) գ, ա, դ, բ

**16. Պատմական գործիչների անունները դասավորել ըստ գործունեության հաջորդականության.**

- ա) Թեոդորոս Ռշտունի
- բ) Վարազտիրոց Բագրատունի
- գ) Կոմիտաս կաթողիկոս
- դ) Հովհաննես Բ Գաբրելենացի
- ե) Աշոտ Մսակեր
- զ) Վաչագան Բարեպաշտ

- 1) դ, գ, գ, ե, ա, բ
- 2) բ, գ, գ, ա, ե, դ
- 3) գ, գ, դ, ա, ե, բ
- 4) գ, դ, գ, բ, ա, ե

**17. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Քթիշ ամրոցի հերոսական դիմադրությունն արաբներին
- բ. Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու գլխավորությամբ արաբների վտարումը Տարոնից
- գ. Հովնան Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունիների գերեվարությունը
- դ. պարտված Բուղայի հեռանալը Հայաստանից
- ե. Բուղայի գլխավորած արաբական զորաբանակի ներխուժումը Հայաստան
- զ. Բուղայի պարտությունը Գուրգեն Արծրունուց և փախուստը Վասպուրականից

- 1) բ, ե, գ, գ, ա, դ
- 2) բ, ե, գ, դ, ա, գ
- 3) ե, բ, գ, գ, դ, ա
- 4) ե, բ, գ, դ, ա, գ

- 18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- ա. հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու եղբայր Աբասի նշանակվելը սպարապետ
- բ. բյուզանդական պատրիարքի՝ նամակով դիմելը հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն
- գ. Շիրակավանի եկեղեցական ժողովի գումարումը
- դ. Աշոտ Բագրատունու հաստատվելը հայոց իշխան և սպարապետ
- ե. Աշոտ Բագրատունու ճանաչվելը հայոց իշխանաց իշխան
- 1) դ, ե, ա, գ, բ  
2) ե, դ, ա, բ, գ
- 3) դ, ե, ա, բ, գ  
4) դ, ե, բ, գ, ա
- 19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
- ա. Սմբատ I-ի դիմադրությունը Կապույտ բերդում
- բ. Խալիֆի կողմից Գագիկ Արծրունու ճանաչվելը Հայաստանի թագավոր
- գ. Բագրատունյաց թագավորության հիմնադրումը
1) Վարդան Մամիկոնյան, Թաթուլ Վանանդեցի, Խորեն Խորխոռունի, Ներշապուհ Արծրունի

2) Վարդան Մամիկոնյան, Գաղիշո Խորխոռունի, Ներշապուհ Արծրունի, Արշավիր Արշարունի

3) Վարդան Մամիկոնյան, Մերուժան Արծրունի, Թաթուլ Վանանդեցի, Խորեն Խորխոռունի

4) Վարդան Մամիկոնյան, Խորեն Խորխոռունի, Մերուժան Արծրունի, Համազասպ Մամիկոնյան

**15. Մեծ Հայքի ո՞ր նահանգներն էր ընդգրկում Վաչագան Բարեպաշտի թագավորությունը.**

1) Այրարատ

4) Բարձր Հայք

2) Ծովք

5) Ուտիք

3) Արցախ

**16. Գտնել ճիշտ պատասխանը.**

*Պարսից արքա Խոսրով II-ի գումարած Տիգրանի ժողովը՝*

1) ընդունել է տիեզերական առաջին երեք ժողովների և Քաղկեդոնի ժողովի որոշումները

2) մերժել է տիեզերական առաջին երեք ժողովների և Քաղկեդոնի ժողովի որոշումները

3) մերժել է տիեզերական առաջին երեք ժողովների վճիռները և ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները

4) ընդունել է տիեզերական առաջին երեք ժողովների վճիռները և մերժել Քաղկեդոնի ժողովի որոշումները

**17. Ընտրել ճիշտ փաստարկները.**

1) Սասանյանների զորքերը 364 թ. Հայաստան ներխուժեցին երեք ուղղություններով:

2) Շապուհ II-ի մեծաքանակ զորքերը գրավեցին Գառնի ամուր բերդը, որտեղ Արշակունի արքաների գերեզմաններն ու գանձերն էին:

3) Վասակ սպարապետի գլխավորությամբ հայոց 30-հազարանոց զորքը ջախջախեց թշնամուն, ազատեց թագավորների ոսկորները և վերաթաղեց Դարանաղյաց գավառի Անի բերդում:

- 4) Մերուժան Արծրունու դավաճանական օրինակին հետևեց նաև Մուշեղ Մամիկոնյանը:
- 5) Արշակ թագավորը Վասակ սպարապետի ուղեկցությամբ 368 թ. մեկնեց Պարսկաստան:
- 6) Փառանձեմ թագուհին 15 հազար ընտիր զորականներով ամրացել էր Անգեղ բերդում և հերոսական դիմադրություն էր ցույց տալիս պարսիկներին:

**18. Ովքեր էին մտնում 450 թ. ապստամբների կազմած կառավարության մեջ.**

- 1) Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին, Ներշապուհ Արծրունին, Ղևոնդ Երեցը
- 2) Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին, Թաթուլ Վանանդեցին, Հովսեփ կաթողիկոսը
- 3) Վասակ Սյունին, Վարդան Մամիկոնյանը, Հովսեփ Վայոցձորցին, Խորեն Խորխոռունին
- 4) Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին, Խորեն Խորխոռունին, Հովհաննես Ա կաթողիկոսը

**19. Տրված պայմաններից առանձնացնել երկուսը, որոնք տեղ են գտել Վահան Մամիկոնյանի և Նիխորի միջև Նվարսակում կնքված պայմանագրում.**

- ա. պաշտոններ չտալ անարժան և ուրացյալ նախարարներին ու հարգել հայ նախարարների ժառանգական իրավունքները
- բ. ճանաչել Հայաստանի պետական անկախությունը
- գ. վերականգնել հողեր ժառանգելու՝ իշխանների ավագ որդիների բացառիկ իրավունքը
- դ. հրաժարվել կրոնափոխության առաջարկից
- ե. Հայաստանի մարզպան նշանակել միայն հայ նախարարներից
- 1) ա, դ
  - 2) ա, ե
  - 3) բ, գ
  - 4) գ, դ

**20. Ընտրել շարքը, որտեղ բացառապես ներկայացված են պարսից արքայի կողմից Վահան Մամիկոնյանին տրված պաշտոնները.**

- 1) գահերեց, հայոց սպարապետ և մարզպան
- 2) իշխանաց իշխան, հայոց սպարապետ և մեծ դատավոր
- 3) գահերեց, հայոց սպարապետ ու հազարապետ
- 4) հայոց աշխարհակալ իշխան, գահերեց ու հայոց սպարապետ

**21. Ընտրել երկու ճիշտ պնդումները.**

- ա. 580–ական թթ. հայոց ապստամբական շարժման արդյունքներից էր Մեծ Հայքի Ուտիք և Արցախ նահանգներում և հարակից տարածքներում հայկական թագավորության հիմնադրումը, որտեղ գահ բարձրացավ Վաչագան Բարեպաշտը:
- բ. Հայաստանի երկրորդ բաժանումով երկրի մեծ մասն անցել էր Սասանյան Պարսկաստանին:
- գ. Դվինի 554 թ. ժողովում վերջնականապես հաստատվեց Հայոց եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:

դ. 590 թ. պարսից նոր արքա Վահրամ II-ը Հայաստանում բռնկված հակապարսկական ապստամբությունը ճնշելու նպատակով ռազմական օգնություն էր խնդրել բյուզանդական Մորիկ կայսրից:

ե. «Սահմանադրութիւն կանոնական»-ը հայ և համաշխարհային իրավագիտության պատմության մեջ նշանավորվել է որպես վաղ կանոնագրություններից մեկը:

- 1) դ, ե                                      2) ա, բ                                      3) գ, ե                                      4) բ, դ

**22. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

ա. Կոստանդին (Կոստաս) II կայսրը 100-հազարանոց զորքով ներխուժել է Հայաստան:  
բ. Արաբները հետապնդեցին Կոստասի զորքին, որը նախ փախավ Տայք, իսկ այնուհետև՝ Վասպուրական, որտեղ և 636 թ. պարտություն կրեց արաբական զորքից:

գ. Թեոդորոս Ռշտունին՝ որպես հայոց իշխան, Հայաստանի հետ միաժամանակ իշխանություն ստացավ նաև Վիրքի ու Աղվանքի վրա՝ մինչև Ճորա պահակն ընկած տարածքները:

դ. Թեոդորոս Ռշտունին 656 թ. մահացել է օտարության մեջ:

ե. Թեոդորոս Ռշտունուն թաղել են հայրենի կավվածքում՝ Օշականում:

զ. 685 թ. հյուսիսից ներխուժած խազարների դեմ մղած պայքարում զոհվել է Գրիգոր Մամիկոնյանը:

- 1) ա, ե                                      2) բ, ե                                      3) բ, գ                                      4) գ, դ

**23. Ո՞ր շարքի բոլոր տարածքներն էր ընդգրկում «Արմինիա» փոխարքայությունը.**

- 1) Հայաստան, Վիրք, Իրան, Մերձկասպյան շրջաններ  
2) Վիրք, Փոքր Ասիա, Հայաստան, Իրան  
3) բուն Աղվանք, Հայաստան, Վիրք, Մերձկասպյան շրջաններ  
4) Հայաստան, Իրան, բուն Աղվանք, Մերձկասպյան շրջաններ

**24. Թվարկված քաղաքներից որոնք են եղել Արաբական խալիֆայության «Արմինիա» փոխարքայության VIII-IX դարերի վարչական կենտրոններ.**

- 1) Բագարանը և Դվինը                                      3) Դվինը և Պարտավը  
2) Կարսը և Դվինը                                      4) Բագարանը և Պարտավը

**25. VIII դարի հակաարաբական ապստամբություններին վերաբերող ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

ա. Սասուն գավառը, որ արաբների կողմից սկզբում մտցվել էր «Ջազիրա» (Հյուսիսային Միջագետք) նահանգի կազմի մեջ, միացվեց Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության ներքո:

բ. Գնալով Դվին՝ Արտավազը Մամիկոնյանը խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք էր ստացել խալիֆայության թշնամիների դեմ կռվելու պատրվակով:

գ. Տայքում զինելով իր ռազմիկներին՝ Արտավազը Մամիկոնյանը հարձակվեց արաբ գլխավոր հարկահանի վրա, իսկեց հավաքված ամբողջ հարկը, ապա իր ընտանիքով ու զինակիցներով հեռացավ Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանային գոտի, այդտեղից էլ՝ Կիլիկիա:

- դ. Զախջախելով Տարոն ներխուժած արաբական ջոկատը՝ Մուշեղ Մամիկոնյանն ամրացավ Արտագերս ամրոցում:
- ե. Կարինը զավթած արաբական կայազորից 6000 հեծյալ եկավ Բագավան գյուղ, այստեղ Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը ջախջախեց թշնամուն և փախուստի մատնեց արաբական զորքի մնացորդներին:
- զ. Հայրենիքի ազատության համար Արծնիի ճակատամարտում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և այլ տոհմերի նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ 3000 հոգի:

- 1) գ, ե                                      2) դ, զ                                      3) ա, գ                                      4) բ, գ

**26. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն արաբները հանձնեցին երկրի հարկահանությունը, փոխվեց բռնություններով ու կամայականություններով ուղեկցվող հարկահանության կարգը:
- բ) Արցախի և Սյունիքի գահերեց իշխանների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու նպատակով Աշոտ I Բագրատունին խնամիական կապեր հաստատեց նրանց հետ:
- գ) Հայոց եկեղեցին մեծապես շահագրգռված էր Հայաստանի անկախության վերականգնման հարցով և լիակատար աջակցում էր Բագրատունիներին:
- դ) Շիրակավանում 869 թ. հրավիրված եկեղեցական ժողովը մերժեց բյուզանդական եկեղեցու՝ դավանական միավորման առաջարկը:
- ե) Աշոտ I-ը վերակազմեց բանակը՝ զինվորների թիվը հասցնելով 140 հազարի:

- 1) ա, դ                                      2) բ, գ                                      3) բ, ե                                      4) գ, դ

**27. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Աշոտ II-ի մահվանից հետո գահ բարձրացավ նրա որդին՝ Կարսի կառավարիչ և հայոց սպարապետ Աբասը:
- 2) Աշոտ III թագավորը 961 թ. Անին դարձրեց թագավորության մայրաքաղաք:
- 3) Գագիկ I-ը վերացրեց Վայոց ձորի Պռոշյանների իշխանությունը և նրա տարածքը նվիրեց Պահլավունիներին:
- 4) Հայաստանում առաջացած մանր թագավորությունները ենթարկվում էին «Շահնշահ հայոց» տիտղոսը կրող Անիի Բագրատունիներին:
- 5) Ենթակա թագավորները չէին կարող գահակալել առանց Բագրատունի շահնշահի հավանության, սակայն իրավասու էին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ:
- 6) Դավիթ Անհողինը Գագիկ II-ից պարտություն կրեց և փախավ երկրից, սակայն հետագայում ներում խնդրեց և հետ ստացավ իր տիրույթները:

**28. Թվարկվածներից որո՞նք են Շահապիվանի ժողովի ընդունած որոշումներից.**

- 1) դատապարտեց նեստորականների գործողությունները
- 2) խիստ պատիժներ սահմանեց իրենց տերերին դավաճանած, տերերից փախած, անհնազանդ ու ըմբոստ ծառաների նկատմամբ

- 3) պատիժներ սահմանեց եկեղեցական կանոնադրությունն ու պաշտամունքն ավելորդ համարող և տարատեսակ անկարգություններ ու անօրինություններ գործող մծղնեականների դեմ
- 4) խիստ պատիժներ սահմանեց եկեղեցու և ընտանիքի կարգերը խախտողների դեմ
- 5) կանոնակարգեց և ամրագրեց Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը

**29. Ո՞ր շարքն է ներկայացնում բացառապես հայոց կաթողիկոսների.**

- 1) Կոմիտաս, Սահակ Պարթև, Անանիա Մոկացի, Վարազտիրոց Բագրատունի
- 2) Դավիթ Սահառունի, Զաքարիա Քանաքեռցի, Ներսես Մեծ, Հուսիկ
- 3) Հովսեփ Վայոցձորցի, Գրիգոր Զ Ապիրատ, Զաքարիա Ձագեցի, Մեծ Գնունի
- 4) Մեսրոպ Արտազեցի, Անանիա Մոկացի, Կոմիտաս, Պետրոս Գետադարձ

**30. Ո՞ր շարքի բոլոր գործիչներն են 850–855 թթ. հակաարաբական հուժկու ապստամբության մասնակիցներ.**

- 1) Եսայի Աբու–Մուսե, Աշոտ Արծրունի, Հովնան Խույթեցի, Արտավազդ Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի, Աշոտ և Դավիթ Բագրատունիներ
- 2) Գուրգեն Արծրունի, Աշոտ և Դավիթ Բագրատունիներ, Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյաններ, Եսայի Աբու–Մուսե, Հովնան Խույթեցի, Աշոտ Արծրունի
- 3) Հովնան Խույթեցի, Աշոտ Արծրունի, Գուրգեն Արծրունի, Բագարատ Բագրատունի, Եսայի Աբու–Մուսե, Աշոտ և Դավիթ Բագրատունիներ
- 4) Բագարատ Բագրատունի, Շապուհ և Սմբատ Բագրատունիներ, Գագիկ Արծրունի, Հովհան Խույթեցի, Աշոտ Արծրունի, Եսայի Աբու–Մուսե

**31. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) 704 թ. Հայաստանում այրուձիի հաշվառում կատարելու և ռոճիկ վճարելու պատրվակով Նախիջևանը բռնազավթած արաբ կառավարիչը իր մոտ եկած բազմաթիվ հայ նախարարների զինաթափում, թալանում ու փակում է Երնջակ բերդում և Խրամի եկեղեցիներում ու ողջակիզում:
- բ) Ըստ Հերթի «աշխարհագրի»՝ ոչ մահմեդականներից գանձվող ծխահարկը փոխարինվում է գլխահարկով:
- գ) Արաբական տիրապետության շրջանում հարկատու դարձավ նաև հոգևորականությունը:
- դ) Հայ նախարարների տիրույթների մի մասը բռնազավթում էին արաբները՝ ստեղծելով ամիրայություններ կոչվող վարչաքաղաքական միավորներ:
- ե) 748 թ. հայերը ապստամբում են Մուշեղ և Հովհան Մամիկոնյան եղբայրների գլխավորությամբ:

- 1) ա, գ                                      2) բ, դ                                      3) ա, ե                                      4) դ, ե

**32. Թվարկվածներից որ երկուսն են եղել հայոց իշխան Աշոտ Մսակերի նստավայրերը.**

- ա) Կարին
- բ) Դարույնք
- գ) Բագավան

- դ) Բագարան
- ե) Դվին

- 1) ա, գ
- 2) բ, դ
- 3) բ, ե
- 4) գ, ե

**33. Բերված պնդումներից որն է սխալ.**

- 1) Յուսուֆը թաքնվում է Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթում, բայց սասունցիները գտնելով ոճրագործին, մահապատժի են ենթարկում:
- 2) Խալիֆը 852 թ. հայ ապստամբների դեմ ուղարկեց իր նենգությամբ ու դաժանությամբ հայտնի թուրք վարձկան զորական Բուղային:
- 3) Բուղան կոտորում է բնակչության մի մասին, մյուսներին՝ գերեվարում, այդ թվում՝ Հովհան Խութեցուն և Բագարատի որդիներին:
- 4) Բուղայի զորքը ասպատակում է Բաղեշը, Տայքը, Զեյթունը և Վասպուրականը:

**34. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Հայ իշխանները, համոզվելով, որ երկրի փրկությունը միասնության մեջ է, համախմբվեցին Աշոտ II-ի շուրջը և միացան երկրի ազատագրման նվիրական գործին:
- 2) Հայաստանը պառակտելու և ռազմականապես թուլացնելու նպատակով խալիֆը Հայաստանի նոր թագավոր ճանաչեց Սմբատ I-ի հորեղբորորդուն՝ հայոց սպարապետ Աշոտին:
- 3) Համոզվելով, որ զենքի ուժով դժվար է Հայաստանի դեմ պայքարում հաջողության հասնել՝ Սաջյան ամիրաները փոխեցին իրենց քաղաքականությունը և որդեգրեցին հայ իշխանների միջև երկպառակություններ սերմանելու քաղաքականություն:
- 4) Գագիկ Արծրունու խնդրանքով Սմբատ I-ը վերանայեց իր վճիռը և Նախճավան քաղաքը վերադարձրեց նրան, ինչի հետևանքով սրվեցին արքայի և Սյունյաց իշխանների հարաբերությունները:
- 5) Հայոց եկեղեցին, որը լիակատար աջակցություն էր ցուցաբերում Բագրատունիներին, մեծապես շահագրգռված էր և կողմնակից Հայաստանի պետական անկախությունը վերականգնելուն:

**35. Բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն հանձնվեց երկրի հարկահանությունը, իսկ հարկերը կրճատվեցին մոտ հինգ անգամ:
- 2) Աշոտ Բագրատունին վերակազմեց բանակը, զինվորների թիվը հասավ 40 հազարի:
- 3) Հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու նպատակով Աշոտ Բագրատունին խնամիական կապեր հաստատեց Վասպուրականի և Սյունիքի գահերեց իշխանների հետ:

- 4) Շիրակավանում 864 թ. հրավիրված եկեղեցական ժողովը մերժեց հայկական եկեղեցու՝ բյուզանդականի հետ դավանական միավորման առաջարկը:
- 5) Հայոց եկեղեցին մեծապես շահագրգռված էր Հայաստանի անկախության վերականգնման հարցով և լիակատար աջակցություն էր ցույց տալիս Բագրատունիներին:

**36. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- ա) Աշոտ Երկաթը իր եղբայր Աբասի հետ հանկարծակի և սրընթաց հարձակումներով լուրջ հարվածներ հասցրին թշնամու ուժերին և քայլ առ քայլ ազատագրեցին երկիրը:
- բ) Աշոտ II-ը հարձակվեց նաև Բալթի ամիրայության վրա, ջախջախեց Յուսուֆի կայսրը:
- գ) Սյունյաց իշխանները, գործակցելով Աշոտ Երկաթի հետ, միացան երկրի ազատագրման նվիրական գործին:
- դ) Աշոտ II-ը նավակներում տեղավորեց իր 70 ռազմիկներին և մի մառախլապատ օր, դեռևս ափ չհասած, հանկարծակի սկսեց նետահարել արաբներին:
- ե) Աշոտ II-ը 923 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ հակաարաբական դաշինք կնքեց:

- 1) ա, գ                      2) բ, դ                      3) բ, ե                      4) ա, դ

**37. Ընտրել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 921 թվականին.**

- ա. Աշոտ II-ի ճակատամարտը Սևանա կղզում
- բ. Գևորգ իշխանի մարտը Գառնիում
- գ. Աշոտ II-ին Հայաստանի շահնշահ ճանաչելը
- դ. Աշոտ II-ի կողմից հակաարաբական դաշինքի կնքումը Բյուզանդիայի մայրաքաղաքում
- ե. Գագիկ Արծրունուն հայոց թագավոր ճանաչելը

- 1) ա, բ, գ                      2) ա, բ, դ                      3) գ, դ, ե                      4) ա, դ, ե

**38. Ընտրել երկու սխալ պնդումները.**

- ա. Գագիկ I-ը վերացրեց Վայոց ձորի Պռոշյանների իշխանությունը և նրա տարածքը նվիրեց Պահլավունիներին, որոնք այնտեղ իրականացրին լայնածավալ շինարարական աշխատանքներ:
- բ. Դավիթ Անհողինը Գագիկ I-ից պարտություն կրեց և փախավ երկրից՝ զրկվելով իր տիրույթներից, սակայն հետագայում զղջաց և ներում խնդրեց ու միայն դրանից հետո հետ ստացավ իր տիրույթները:
- գ. Աշոտ III թագավորը հատուկ հոգատարություն էր ցուցաբերում անդամալույծների, աղքատների, հիվանդների ու կույրերի նկատմամբ, նրանց համար բացում էր հիվանդանոցներ և այլ բարեգործական հաստատություններ:
- դ. Աշոտ II-ի մահվանից հետո գահ բարձրացավ նրա ավագ որդին՝ Կարսի կառավարիչ և հայոց սպարապետ Աբասը:



ե. Հայաստանի տարբեր մասերում առաջացած մանր թագավորությունները ենթարկվում էին «Շահնշահ հայոց» տիտղոսը կրող Անիի Բագրատունիներին ու չէին կարող գահակալել առանց շահնշահի հավանության և իրավասու չէին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ:

- 1) բ, դ                                      2) ա, ե                                      3) ա, դ                                      4) բ, գ

**39. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Գագիկ I-ի օրոք մեծացավ, ամրապնդվեց և հզոր ուժ դարձավ հայկական բանակը, որի վրա հենվելով՝ Գագիկն ընդլայնեց իր պետության սահմանները:
- 2) Գագիկ I-ը Տայքի կյուրապաղատության և վրաց թագավորության հետ շարունակում էր վարել խաղաղ, բարեկամական հարաբերություններ:
- 3) 998 թ. Օշականի Ցլու գլուխ լեռան մոտ հայ-վրացական ուժերը պարտության մատնեցին Ատրպատականի ամիրա Մամլանին:
- 4) Գագիկ I-ը կրում էր «Շահնշահ հայոց» տիտղոսը:
- 5) Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում աչքի ընկավ հայկական զորքերի հրամանատար Վահրամ Պահլավունին:
- 6) Գագիկ I-ի կինը՝ Կատրամիդե թագուհին, 1001 թ. ավարտեց Անիի Ս. Խաչ եկեղեցու շինարարությունը:

**40. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- ա) Բագրատունիները նպատակահարմար գտան Կամսարականներից իրենց անցած Շիրակի նշանավոր Անի ամրոցը դարձնել մայրաքաղաք:
- բ) Աշոտ III-ը և նրա հաջորդները միջոցներ չէին խնայում նոր մայրաքաղաքը բարեկարգելու, շքեղ պալատներով, եկեղեցիներով, բնակելի և այլ շինություններով կառուցապատելու համար:
- գ) Անին մայրաքաղաք դարձնելու տոնակատարությունը միացվեց Աշոտ III-ի թագադրության հանդիսության հետ:
- դ) Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսը բոլորի ներկայությամբ մեծ շուքով օծեց Աշոտ III թագավորին և նրան հոչակեց շահնշահ՝ արքայից արքա:
- ե) Աշոտ III-ի թագադրության հանդիսություններին Անի էին հրավիրվել «ամենայն իշխանքն տանն Հայոց», զորքը, Աղվանքի թագավորը՝ իր շքախմբով, բարձրաստիճան հոգևորականներ և այլ նշանավոր դեմքեր:
- զ) Աշոտ III-ի թագավորությունը օրինական ճանաչվեց Բյուզանդական կայսրության, օսերի թագավոր Չարմաղանի, հարևան Վիրքի ու Աղվանքի թագավորությունների կողմից:

- 1) ա, ե                                      2) բ, գ                                      3) դ, գ                                      4) գ, դ

**41. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Բագրատունյաց Հայաստանի վերելքի շրջանում ավատատիրությունը վաղ միջնադարյան փուլից թևակոխեց զարգացած ավատատիրության դարաշրջան:
- 2) Բագրատունիները Մամիկոնյաններից իրենց անցած Շիրակի Անի ամրոցը դարձրին երկրի մայրաքաղաք:

- 3) Սմբատաշեն պարիսպները կառուցվել են 977–989 թթ.:
- 4) Գագիկ I-ի օրոք հայկական տարածքների մեծ մասը միավորվել էր կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

#### 42. Ընտրել երկու սխալ պնդումները.

- ա. Բագրատունյաց թագավորության մեջ արքայական կալվածքները տնօրինողները ենթարկվում էին իշխանաց իշխանին:
- բ. Բագրատունյաց արքունիքում իշխանաց իշխանը թագավորին հաշվետու էր ենթակա իշխանների գործունեության համար, և նրան էին ենթարկվում երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:
- գ. Բագրատունյաց պետության մեջ իշխանաց իշխանն էր տնօրինում պետական գանձարանը և բանակը, և այդ պաշտոնը սովորաբար տրվում էր արքաեղբորը կամ գահաժառանգին:
- դ. Բագրատունյաց թագավորության մեջ իշխանաց իշխանին էին ենթարկվում ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները:
- ե. Բագրատունյաց պետության մեջ իշխանաց իշխանն էր տնօրինում պետական գանձարանը, և այդ պաշտոնը սովորաբար տրվում էր արքաեղբորը կամ գահաժառանգին:

- |         |         |         |         |
|---------|---------|---------|---------|
| 1) ա, գ | 2) գ, դ | 3) բ, ե | 4) դ, ե |
|---------|---------|---------|---------|

#### 43. Ընտրել սխալ պնդումը.

- 1) Դվինի միջնաբերդը կառուցված էր Ախուրյան գետի ափին՝ մի ժայռաբլրի վրա, և շրջապատված էր պարիսպներով, իսկ դրա շուրջը տարածված էր ընդարձակ քաղաքը, որը նույնպես պարսպապատ էր:
- 2) Բագրատունյաց Հայաստանում հայոց թագավորները կաթողիկոսի ընտրության ժամանակ վճռական դիրքորոշումը վերապահել էին իրենց:
- 3) Բագրատունի թագավորները պետությունը կառավարում էին բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների կամ գործակալությունների միջոցով, և այդ պաշտոններում նշանակվում էին արքայական տան ներկայացուցիչներ կամ արքային հավատարիմ խոշոր ավատատերեր:
- 4) Բագրատունիների օրոք չկար Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև:

#### 44. XII դարում Սյունիքի թագավորությունն ուներ՝

- 1) 43 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան
- 2) 40 ամրոց ու բերդ, 43 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան
- 3) 40 ամրոց ու բերդ, 72 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան
- 4) 72 ամրոց ու բերդ, 43 վանք և 1200-ից ավելի գյուղ ու ավան

**45. Ո՞ր քաղաքներն էին գտնվում Վասպուրականով անցնող միջազգային առևտրի հարավային ուղու վրա.**

- 1) Վանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը
- 2) Բերկրին, Արճեշը, Մանազկերտը, Կարինը
- 3) Վանը, Արճեշը, Մամեստիան, Խլաթը
- 4) Արծնը, Բերկրին, Արճեշը, Անին

**46. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

- 1) Կոտմանի ճակատամարտում հայ-վրացական միացյալ զորքերը պարտություն կրեցին մոնղոլներից:
- 2) 1231 թ. մոնղոլները պարտության մատնեցին Ջալալեդդինին:
- 3) Ծանոթ լինելով Այսրկովկասի իրավիճակին՝ մոնղոլները զորքը բաժանեցին ջոկատների, որոնք իրենց հրամանատարների՝ նոյոնների գլխավորությամբ սկսեցին հպատակեցնել երկրամասը:
- 4) Պաշարված անեցիներն անձնատուր չեղան մոնղոլներին, հարձակվեցին մոնղոլ պատվիրակների վրա և սպանեցին նրանց:
- 5) Անիի բախտին արժանացան նաև Դվին, Կարին, Բայազետ քաղաքները:
- 6) 1242–1243 թթ. մոնղոլական զորքերը շարժվեցին դեպի երկրի արևելյան շրջանները, որոնք այդ ժամանակ Իկոնիայի սուլթանության հսկողության տակ էին:

**47. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Ջաքարյանների իշխանապետությունն իր մեջ ընդգրկում էր Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Սևանի շրջակայքը:
- 2) Հայաստանի հյուսիս–արևելքում՝ Լոռի–Փամբակում, Գարդմանում և Փաղիստում, Ջաքարյաններից կախյալ ստեղծվել էր Վահրամյանների իշխանությունը:
- 3) Ջաքարյանների մի ճյուղ էլ նստում էր Լոռու իշխանության կենտրոն Թմուկ (Թմկա) բերդում:
- 4) 1126 թ., երբ քաղաքում սով սկսվեց, անեցիները քաղաքը հանձնեցին Շադդադյաններին:
- 5) Ջաքարեի կրտսեր եղբայր Իվանեն (Հովհաննես, Հովհաննես) դարձավ աթաբեկ:

**48. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Փիլարտոս Վարաժնունին, հենվելով հիմնականում հայերից կազմված զինուժի վրա, կարողացավ որոշ ժամանակ դիմագրավել սելջուկների առաջխաղացմանը դեպի հայկական իշխանության սահմանները:
- 2) 1189 թ. խաչակիրների երկու բանակներ էին մտել Կիլիկիա և ձեռնամուխ եղել Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը, սակայն քանի որ Կոստանդին I-ը վերահսկում էր Տավրոսի լեռնանցքները, ուստի խաչակիրները հարկադրված էին համագործակցելու նրա հետ:

- 3) Կիլիկիայի հայկական իշխանությունը հիմնադրման սկզբնական շրջանում ընդգրկում էր Կիլիկիայի միայն մի մասը, իսկ հետագայում զորեղանալով՝ իր մեջ ներառեց նաև Կիլիկիայից դուրս գտնվող մի շարք շրջաններ:
- 4) 1042 թ. Կիլիկիայի կառավարիչ նշանակված Սենեքերիմ Արծրունուն էին հանձնվել Մսիս, Ադանա, Տարսոն քաղաքները և Լամբրոն ու Պապեռոն ամրոցները:
- 5) Փոքր Ասիայում ստեղծված Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին բնորոշ էին թշնամանքը և մշտական ռազմական առճակատումները:

**49. Ո՞ր քաղաքներն ու բերդերն էր ստացել Ապլղարիպ Արծրունին.**

- 1) Ադանա, Սիս, Մամեստիա քաղաքները, Լամբրոն ու Պապեռոն բերդերը
- 2) Ադանա, Սիս, Տարսոն քաղաքները, Ծամնդավ ու Կոռոմոզլ բերդերը
- 3) Ադանա, Մսիս, Տարսոն քաղաքները, Լամբրոն ու Պապեռոն բերդերը
- 4) Ադանա, Մսիս, Տարսոն քաղաքները, Կոռոմոզլ ու Կոռիկոս բերդերը

**50. Տրված պնդումներից առանձնացնել երկուսը, որոնց շուրջ համաձայնություն ձեռք չի բերվել Լևոն II-ի և Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ի միջև.**

- ա. Լևոնը համաձայնեց առանց փրկագնի ազատ արձակելու Բոհեմունդին:  
բ. Լևոնը համաձայնեց Բոհեմունդին վերադարձնելու Անտիոքից խլված տարածքները:  
գ. Բոհեմունդի ավագ որդի և ժառանգորդ Ռայմոնդն ամուսնանալու էր Լևոնի եղբոր ավագ դուստր Ալիսի հետ, իսկ նրանցից ծնված արու զավակը ժառանգելու էր Կիլիկիան և Անտիոքը:  
դ. Բոհեմունդը պարտավորվեց խոշոր փրկագին վճարել Անտիոք վերադառնալու դիմաց:  
ե. Բոհեմունդը պարտավորվում էր Լևոն II-ին վերադարձնել Կիլիկիայից խլված տարածքները:

- 1) ա, դ                                  2) բ, դ                                  3) գ, ե                                  4) բ, գ

**51. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) XII դարի վերջին Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա պետությունն էր:  
բ) Եգիպտոսի հզորացումից ու Տրիպոլիի կոմսության անկումից հետո պարսիկների վիճակը խիստ ծանրացել էր:  
գ) Խաչակիրներին օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ:  
դ) Արքայական թագ ձեռք բերելու գործում Լևոնը բանակցություններ սկսեց Հռոմի պապի և Սրբազան հռոմեական կայսրության կայսր Բոհեմունդ IV-ի հետ:  
ե) Լևոնի թագադրության հարցով շահագրգռված էր նաև պապականությունը, որը փորձում էր Հայոց եկեղեցին ենթարկել հռոմեական կաթոլիկ եկեղեցուն:

- 1) ա, գ                                  2) բ, դ                                  3) բ, ե                                  4) գ, ե

**52. Տրված պայմաններից առանձնացնել երկուսը, որոնք տեղ չեն գտել Հեթում I-ի և Մանգու խանի միջև կնքված հայ-մոնղոլական դաշինքում.**

- 1) Մոնղոլական տերությանը հարկատու լինելու պայմանով մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 2) Մոնղոլական տերությունը և Կիլիկիան պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ:
- 3) Մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկիայի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 4) Իկոնիայի սելջուկների հարձակումներից պաշտպանվելու նպատակով Կիլիկիայի սահմանամերձ բերդերում պետք է տեղակայվեին մոնղոլական կայազորներ, որոնց ծախսերը հոգալու էին հայերը:
- 5) Մոնղոլները խոստանում էին վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից, իսկ հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատել հարկերից:

**53. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Թեև Մեսրոպ Արտագեցի կաթողիկոսի հրավիրած Սսի եկեղեցական ժողովը վերահաստատեց Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները, սակայն Եվրոպայի քրիստոնեական պետություններն այդպես էլ օգնական զորքեր չուղարկեցին մահմեդականների շրջափակման մեջ հայտնված Կիլիկիային:
- 2) Կիլիկյան ավագանու՝ Տարսոն քաղաքում հրավիրած ժողովը որոշեց Զաբեյին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հետ, որով էլ վերջապես լուծում ստացավ գահակալության խնդիրը:
- 3) Հայ-մոնղոլական դաշինքի ստորագրումը նախապատրաստելու նպատակով Հեթում I-ի հայր Կոստանդին Գունդստաբլը մեկնեց Կարակորում և բանակցություններ վարեց Մանգու մեծ խանի հետ:
- 4) 1259 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Ասորիքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը, սակայն 1260 թ. տեղի ունեցած ճակատամարտում հայ-մոնղոլական զորքերը ծանր պարտություն կրեցին մամլուքներից:
- 5) Կիպրոսի և քրիստոնյա Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունն ապահովելու նպատակով Կիլիկյան Հայաստանի արքունի խորհուրդը 1342 թ. որոշեց կիլիկյան գահը հանձնել Գվիդոն Լուսինյանին:

**54. Կիլիկյան Հայաստանին վերաբերող ստորև տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Պատերազմի ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվում էր աշխարհազոր:
- 2) Սահմանվել էր ասպետի աստիճան:
- 3) Մշտական բանակ պահելու համար մտցվեց ռազմական հարկ:
- 4) Մեծ տեղ ունեին ռազմաօդային ուժերը:

- 5) Ռազմական նավատորմի համար հատկապես կարևորվում էր Վահկա և Կոռիկոս ծովային բերդերի նշանակությունը:
- 6) Ռազմական նավատորմն անհրաժեշտ էր նաև ծովային առևտրի անվտանգությունն ապահովելու համար:

**55. Ստորև բերված պնդումներից որինք են սխալ.**

- 1) Շահ Աբասն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների հետ, ֆրանսիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմեց ու վերազինեց պարսկական բանակը, ձուլվեցին թնդանոթներ:
- 2) XVII դարի սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ, գահակալական պայքար, երկրում ծավալվում էին գյուղացիական ու զինվորական ապստամբություններ:
- 3) Շահ Աբասը 1603 թ. սկսեց կորցրած տարածքների վերագրավումը:
- 4) Շահ Աբասը մեծ բանակով հարձակվեց ու գրավեց Թեհրանը, անցնելով Ախուրյանը՝ գրավեց Ջուղան ու Նախիջևանը և պաշարեց Երևանի բերդը:
- 5) 1604 թ. թուրքական սուլթանը շահ Աբասի դեմ նոր բանակ ուղարկեց:

**56. Ստորև բերված պնդումներից որ երկուսն են սխալ.**

- ա) Աղվանից կաթողիկոսությունը անվանվում է նաև Գանձասարի կաթողիկոսություն:
- բ) XV դարից սկսած՝ Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն դարձավ Ամարասի վանքը:
- գ) XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի տիրապետությանը Հայաստանում փոխարինելու եկան օսմանյան և սեֆյան հակամարտող պետությունների ծանր ու ավերիչ նոր ժամանակները:
- դ) Սև ծովից հարավ-արևմուտք՝ Իրանի Արդեբիլ քաղաքում էր շեյխ Սեֆիի հիմնադրած կրոնական համայնքը:
- ե) Ակ-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սեֆյանները հիմնադրեցին իրենց պետությունը:

- 1) բ, գ                      2) բ, դ                      3) ա, ե                      4) գ, դ

**57. Ընտրել բացառապես Արևելյան Հայաստանում գտնվող ինքնավար հայկական իշխանություններից կազմված շարքը.**

- 1) Խաչեն, Շատախ, Ջրաբերդ, Վարանդա
- 2) Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ
- 3) Ջրաբերդ, Սասուն, Դիզակ, Խաչեն
- 4) Վարանդա, Խաչեն, Մոկս, Դիզակ

**58. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա) Հայաստան մուտք գործած թյուրքական և քրդական ցեղախմբերն անգիջում պայքար էին ծավալել միմյանց դեմ՝ փորձելով ամրապնդել իրենց տիրապետությունը երկրում:
- բ) Քոչվոր ցեղախմբերը ստիպված էին լինում համագործակցել հայ իշխանական տների հետ, ճանաչել նրանց հողային սեփականատիրական իրավունքները և իրենց ներկայացնել որպես «Հայաստանի թագավոր» (Շահ-ի Արման):
- գ) Ջհանշահը շարունակում է զգալի չափով ապավինել հայ բնակչության օժանդակությանը, ուստի և նպաստում է հայոց կաթողիկոսարանի վերահաստատմանը Էջմիածնում:
- դ) Կարա-Յուսուֆի կառավարման ժամանակաշրջանում Գեղարքունիքի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանություններն ու վարչական կառավարումը և սկսեցին կոչվել մելիքներ:
- ե) Աղթամարի կաթողիկոսական գահին տիրած և իրենց Արծրունյաց թագավորական տոհմից սերած համարվող Սմբատ և Գագիկ Աղթամարցի կաթողիկոսները հավակնում էին ոչ միայն Ամենայն հայոց կաթողիկոսի գահին, այլև փորձում էին վերականգնել հայոց թագավորությունը:

- 1) ա, դ                                      2) բ, դ                                      3) դ, ե                                      4) բ, ե

**59. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Անանիա Շիրակացու կազմած թվաբանության դասագիրքը աշխարհում հնագույնների շարքին է պատկանում:
- 2) VI դարում փիլիսոփայությամբ կամ իմաստասիրությամբ զբաղվել է նշանավոր ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը:
- 3) Դավիթ Անհաղթն իր «Եղծ աղանդոց» երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից:
- 4) «Սահմանք իմաստասիրութեան» երկում մեծ տեղ է հատկացված բնության ճանաչմանը:
- 5) Դավիթ Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության:

**60. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

- ա) Սեբեոս պատմիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ-հռոմեական և հայ-պարսկական հարաբերությունների, պարսկա-բյուզանդական հակամարտության, Արցախ և Ուտիք աշխարհների մասին, ինչպես նաև նկարագրում է հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյան տիրապետության դեմ:
- բ) Սեբեոս պատմիչի երկն ընդհանուր առմամբ արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հարևան երկրների պատմության մասին:

գ) Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում մանրամասն տեղեկություններ են հաղորդվում Հռոմեական կայսրության նվաճումների ժամանակաշրջանի, ինչպես նաև օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին:

դ) Վաղմիջնադարյան Հայաստանի աշխարհագրության և քարտեզագրության անզուգական հուշարձան է Մովսես Խորենացու և նրա գործը շարունակողի՝ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ը:

- 1) ա, գ                                      2) ա, դ                                      3) բ, գ                                      4) բ, դ

**61. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

ա) Գլաճորի համալսարանը համահայկական ճանաչում ուներ. այստեղ բարձրագույն կրթություն ստանալու էին գալիս ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ հայկական գաղթավայրերից:

բ) Հայ մշակույթի զարգացման մեջ մեծ դեր է խաղացել նաև XIV դարի խոշոր մշակութային կենտրոն Գևորգյան ճեմարանը:

գ) Տաթևի համալսարանը բեղմնավոր գործունեություն է ծավալել XIV դարի երկրորդ կեսին և XV դարի սկզբին:

դ) Կիլիկիայում գործող բարձրագույն դպրոցների շարքում մեծ հռչակ էր վայելում Սսի համալսարանը:

ե) Հայկական մշակույթի, մասնավորապես մանրանկարչության, գրչության արվեստի և երաժշտության զարգացման գործում մեծ դեր խաղաց Կիլիկիայում գործող Ծործորի դպրոցը:

զ) Սկևռայի դպրոցում է աշխատել նշանավոր մանրանկարիչ Գրիգոր Միհեցին:

- 1) ա, դ                                      2) բ, ե                                      3) բ, գ                                      4) գ, դ

**62. Ո՞ր դպրոցներն են հիմնվել կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների ջանքերով.**

- |                        |                   |
|------------------------|-------------------|
| 1) Աղբերց վանքի դպրոցը | 4) Ծործորի դպրոցը |
| 2) Մեծքարի դպրոցը      | 5) Սկևռայի դպրոցը |
| 3) Ակների դպրոցը       | 6) Քոնսայի դպրոցը |

**63. Ընտրել երկու սխալ պնդումները.**

ա. Անանիա Շիրակացին կատարել է գիտությունների դասակարգում ըստ բնագիտության, թվաբանության ու աստվածաբանության և իր փիլիսոփայական երկերում լայնորեն համադրել է գիտությունների տարբեր բնագավառներից հայտնի մի շարք դրույթներ:

բ. Ղևոնդ պատմիչը նկարագրել է հայ ժողովրդի հերոսական պայքարը Արաբական խալիֆայության դեմ:

գ. Ստեփանոս Տարոնեցու «Պատմութիւն Տարոնոյ» աշխատությունում նկարագրված է օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը:



դ. Հայ եկեղեցաշինության մեջ առաջացած նշանակալի երևույթ էր կենտրոնագմբեթ կառույցների ի հայտ գալը, որոնք ավելի դիմացկուն էին երկրաշարժերի ժամանակ:

ե. Պահպանված և մեզ հասած հայկական առաջին մանրանկարները, որոնք վերաբերում են VI–VII դդ., չորսն են և ունեն ավետարանական բովանդակություն, կերպարներն արտահայտիչ են, տպավորիչ ու գունագեղ և ազգային ինքնատիպություն են կրում:

1) բ, գ

2) ա, գ

3) գ, ե

4) ա, դ

**64. Թվարկված շինություններից ո՞ր երկուսի հեղինակն է Մանվել ճարտարապետը.**

ա. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու

դ. Սանահինի վանքի

բ. Անիի Մայր տաճարի

ե. Հաղպատի վանքի

գ. Արծրունիների թագավորական պալատի

զ. Նորավանքի

1) ա, բ

2) ա, գ

3) դ, ե

4) գ, զ

**65. Գտնել ճիշտ պնդումները.**

1) Երբ Օշին թագավորը և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը փորձեցին իրագործել Սսի ժողովի որոշումները, հանդիպեցին հայ բնակչության համառ դիմադրությանը:

2) Ադանայում տեղի ունեցան բողոքի ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին հրաժարվել Սսի ժողովի որոշումները կենսագործելուց:

3) Եկեղեցիների միավորման հակառակորդների մի մասին ձերբակալում և աքսորում են Կահիրե, իսկ մյուսներին բանտարկում են:

4) Բուն Հայաստանում նույնպես հրաժարվեցին Սսի և Ադանայի ժողովների որոշումները կատարելուց:

5) Հայ հասարակության մեջ առաջացավ մի խմբավորում, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ. այն ստացավ հակաունիթորներ անվանումը:

**66. Ո՞ր հինավուրց հայկական իշխանական տները հզորացան IX դարում.**

1) Արծրունիներ, Մամիկոնյաններ, Բագրատունիներ, Գնունիներ

2) Բագրատունիներ, Արծրունիներ, Սյունիներ, Արցախի իշխաններ

3) Բագրատունիներ, Գնունիներ, Արծրունիներ, Սյունիներ

4) Բագրատունիներ, Գնունիներ, Սյունիներ, Արցախի իշխաններ

**67. Աշոտ Մսակերն ընդարձակեց իր տիրույթները.**

1) Տայքում, Գուգարքում, Սյունիքում

2) Այրարատում, Տարոնում, Տայքում

3) Սյունիքում, Տայքում, Վասպուրականում

4) Վասպուրականում, Սյունիքում, Արցախում

**68. Ստորև բերված պնդումներից դր երկուսն են սխալ.**

- ա. Հայոց իշխան Եսայի Աբու-Մուսեի քաջարի զինվորները Քթիշ ամրոցը (Տող գյուղի մոտ) մոտ երկու տարի անառիկ պահեցին:
- բ. Բուղան դիմեց խաբեության. բանակցելու պատրվակով իր մոտ կանչեց ու ձերբակալեց Եսայի իշխանին:
- գ. Վասպուրականում ապստամբները Գուրգեն Արծրունու գլխավորությամբ ջախջախեցին և դուրս մղեցին արաբներին:
- դ. Հայոց հզորագույն ապստամբությունը (850–855 թթ.) սասանեց արաբական տիրապետությունը Հայաստանում:
- ե. Սմբատ սպարապետի որդին՝ Աբաս Բագրատունին, 862 թ. ճանաչվեց հայոց իշխան ու սպարապետ:

- 1) ա, բ                      2) գ, դ                      3) գ, ե                      4) ա, ե

**69. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- ա. Արաբական խալիֆայությունը IX դարում սկսեց թուլանալ և անկման ուղի բռնել:
- բ. Զարգացման տարբեր աստիճաններում գտնվող, տարբեր լեզու, դավանանք ունեցող ժողովուրդներին Արաբական խալիֆայության մեջ բռնի միավորումը կայուն ու երկարատև լինել չէր կարող:
- գ. Արաբական խալիֆայության ենթակա երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, աստիճանաբար ավելի ու ավելի էր ուժեղանում արաբական լուծը թոթափելու ձգտումը:
- դ. Խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա վաղեմի հակառակորդ Պարսկաստանը, որն ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին:
- ե. Արաբական խալիֆայության թուլացումից Հայաստանում հմտորեն օգտվում էին հատկապես ժամանակի նշանավոր իշխանական տներից Վաչուտյանները:
- զ. Գերազանցապես օտար վարձկաններից բաղկացած արաբական բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին:

- 1) ա, գ                      2) գ, ե                      3) դ, ե                      4) բ, գ

**70. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Բագրատունյաց թագավորները ձգտում էին ամբողջ Հայաստանը միավորելու մեկ միասնական, կենտրոնացված պետության մեջ:
- 2) Զարգացած միջնադարում Հայաստանի կենտրոնախույս ուժերը խրախուսվում էին սահմանակից երկու հզոր պետությունների՝ Բյուզանդիայի և Աղվանքի կողմից:
- 3) Հայաստանի, հատկապես ծայրագավառների նշանավոր իշխանությունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և ինքնաբավ կյանք էին վարում՝ հաճախ ձգտելով անկախության:



- 5) Կիլիկիայում հայկական պետականության առաջացման նախօրյակին տեղում հաստատված հայ բնակչությունն արդեն ուներ կայուն կազմակերպված սոցիալական միջավայր և Հայոց եկեղեցու թեմեր:
- 6) 1065 թ. Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց բյուզանդական կայսրից ստացավ Կիլիկյան Տավրոսում գտնվող Լամբրոն բերդը:

**75. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Իկոնիայի սուլթանությունը ընդարձակում էր իր տարածքները Բյուզանդիայի հաշվին:
- 2) Իկոնիայի սուլթանությունը և Եգիպտոսը թշնամաբար էին տրամադրված Կիլիկիայի նկատմամբ:
- 3) Միրիոկեֆալոնի ճակատամարտից հետո Իկոնիայի սուլթանությունը մեկընդմիջտ հրաժարվել էր Կիլիկիայից:
- 4) Երուսաղեմը գրավելուց հետո Եգիպտոսի Այուբյան սուլթանությունը որոշ ժամանակ զբաղված էր խաչակրաց տիրույթների նվաճումով:
- 5) Երուսաղեմը մահմեդականներից հետ գրավելու համար 1189 թ. սկսվեց խաչակրաց երկրորդ արշավանքը:
- 6) Լևոն II-ը կապեր հաստատեց խաչակիրների առաջնորդներից մեկի՝ Սրբազան հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ:

**76. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.**

- ա. Մառիի ճակատամարտում զոհվեց արքայորդի Ստեփանեն:
- բ. Մառիի ճակատամարտում արքայի որդի Լևոնը գերի ընկավ:
- գ. Մառիի ճակատամարտից հետո բարդացավ նաև խաչակիրների վիճակը:
- դ. Մառիի պարտությունը և Անտիոքի անկումը վերջ դրեցին քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու Հեթում I-ի ծրագրին:
- ե. Հեթում I-ը 1270 թ. գահը հանձնեց եգիպտական գերությունից ազատված Հեթում II-ին:

- 1) ա, գ                      2) ա, ե                      3) բ, դ                      4) բ, ե

**77. Որոնք էին Կիլիկիայի հայկական պետության զինված ուժերի կազմակերպման ու ղեկավարման համար ստեղծված երեք գործակալությունները՝**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| ա. սպարապետությունը | դ. ասպետությունը    |
| բ. խնամակալությունը | ե. մարաջախտությունը |
| գ. սպասալարությունը | զ. սենեսկալությունը |

- 1) բ, դ, գ                      2) ա, բ, գ                      3) ա, գ, ե                      4) բ, գ, ե

**78. Ո՞ր շարքի բոլոր ինքնավար իշխանություններն էին գտնվում Արևմտյան Հայաստանում.**

- |                           |                        |
|---------------------------|------------------------|
| 1) Սասուն, Դիզակ, Շատախ   | 3) Մոկս, Սասուն, Շատախ |
| 2) Շատախ, Վարանդա, Սասուն | 4) Մոկս, Խաչեն, Սասուն |

**79. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) IV դ. վերջին մայրենի լեզվով գիր և գրականություն ունենալն ազգապահպանության խնդիր էր դարձել, քանի որ հայոց գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու համար:
- 2) Հայոց գրերը դարձան հայ ժողովրդի համար գոյատևման, ազգային ինքնության և արժեհամակարգի պահպանման հզոր միջոց բոլոր ժամանակներում:
- 3) Ըստ Կորյունի՝ IV դ. սկզբին Սահակ Պարթևի նախաձեռնությամբ Արտաշատում եկեղեցական ժողով է գումարվել, որտեղ որոշվել է «հայ ազգի համար նշանագրեր գտնել»:
- 4) Հայաստանում լուսավորչական գործունեությունն ընդարձակելով՝ Մաշտոցը հետագայում տառեր է ստեղծել նաև վրացիների և Աղվանքի ցեղերից մեկի՝ գարգարացիների համար:
- 5) Հայ պատմիչները վկայում են հայկական նախամաշտոցյան այբուբենի մասին, որը V դարի սկզբին պահվում էր Ասորիքում՝ ասորի մատենագիր Բարդաճանի մոտ:

**80. Թվարկված գործիչներից ովքեր են ղեկավարել Տաթևի համալսարանի ուսումնագիտական աշխատանքները.**

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| ա. Գրիգոր Միհեցին     | դ. Խաչատուր Կեսարացին |
| բ. Գրիգոր Տաթևացին    | ե. Հովհան Որոտնեցին   |
| գ. Կիրակոս Գանձակեցին | զ. Թովմա Մեծփեցին     |

- 1) ա, գ                      2) բ, դ                      3) բ, ե                      4) դ, զ

**81. Ստորև բերված պնդումներից որն է սխալ.**

- 1) X–XIV դարերում կրթական համակարգը բաղկացած էր տարրական և բարձրագույն տիպի դպրոցներից:
- 2) Վարդապետարաններում ուսման տևողությունը 7–8 տարի էր:
- 3) Վարդապետական գավազան ստացած շրջանավարտներն իրավունք էին ստանում զբաղվելու ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական գործունեությամբ:
- 4) Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էր Հաղպատի վարդապետարանը, որտեղ իրենց գիտամանկավարժական գործունեությունն են անցկացրել Դավիթ Ալավկաորդին, Գրիգոր Դարանաղցին, Գրիգոր Տաթևացին:

**82. Ստորև բերված պնդումներից որն է սխալ.**

- 1) Անիի Բագրատունյաց թագավորության, Կիլիկյան Հայաստանի և Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նոր կրթական համակարգի առաջացման և զարգացման համար:
- 2) Զարգացած միջնադարը նախորդ ժամանակաշրջանից ժառանգեց կրթության կազմակերպման և գիտելիքների հաղորդման այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին էր «յոթ ազատ արվեստների» համակարգը:

- 3) Դպրոցները, որոնք եկեղեցու տնօրինության տակ էին, բաժանվում էին ծխական, վանական և պետական տիպերի:
- 4) Քաղաքներում եկեղեցու իրավասությունից դուրս հիմնվում էին աշխարհիկ դպրոցներ, որոնց մի մասը վերածվում էր բարձրագույն տիպի դպրոցների:

**83. Թվարկված գործիչներից իրավագետներ են՝**

- |                              |                      |
|------------------------------|----------------------|
| ա. Հովհաննես Դրասխանակերտցին | դ. Գրիգոր Տաթևացին   |
| բ. Դավիթ Ալավկատորդին        | ե. Սմբատ Գունդստաբլը |
| գ. Մխիթար Գոշը               | զ. Սեբեոսը           |
- 1) բ, գ, ե                      2) ա, գ, դ                      3) բ, դ, ե                      4) գ, դ, զ

**84. Թվարկված շինություններից ո՞ր երկուսի ճարտարապետն է Տրդատը.**

- ա. Անիի Մայր տաճարի
  - բ. Ս. Գրիգոր Լուսավորիչ զվարթնոցատիպ եկեղեցու
  - գ. Տաթևի
  - դ. Նորավանքի
  - ե. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու
- 1) ա, բ                      2) ա, գ                      3) գ, ե                      4) բ, դ

**85. Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Կիլիկյան Հայաստանում կար 112 բերդ:
- 2) VII–VIII դարերում քանդակագործության մեջ ինքնուրույն ճյուղ դարձավ խաչքարային արվեստը:
- 3) Միջնադարում ճարտարապետության բնագավառում հատկապես զարգացան քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը և եկեղեցաշինությունը:
- 4) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում պատկերված են Գագիկ II–ը և Ս. Գրիգոր Լուսավորիչը:
- 5) Միջնադարյան նշանավոր խաչքարագործ վարպետներ էին Մոմիկը և Պողոսը:

**86. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելու նպատակով Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ III–ը Հայաստանի տարբեր գավառներից հավաքված մանուկների մի մասին տալիս են ասորի դպրության, մյուսներին՝ հելլենական:
- 2) Միլանի հրովարտակի ընդունումից հետո սրվեցին Հռոմեական կայսրության և Մեծ Հայքի թագավորության հարաբերությունները, և նախկին բարեկամ երկրները դարձան ակոյաններ:
- 3) Խոսրով Կոտակի օրոք Դվինը դարձավ Հայաստանի մայրաքաղաք:
- 4) Շապուհ II–ը օգնության խնդրանքով դիմել էր Արշակ II–ին, և վերջինս հայոց զորքով պարսիկներից շուտ հասնում է Մծբին քաղաքի մոտ և հաղթանակ տանում հռոմեացիների նկատմամբ:
- 5) Վաղես կայսեր հրամանով հռոմեացի հրամանատարները խնջույքի ժամանակ դավադրորեն սպանում են հայոց նշանավոր արքաներից մեկին՝ Պապին, և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին:

**87. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1098 թվականին.**

- ա. Ռուբինյան իշխանի կողմից Վահկա բերդի գրավումը
- բ. Մլեհի սպանությունը
- գ. խաչակիրների կողմից Եդեսիայի գրավումը
- դ. Ռուբեն իշխանի ապստամբությունը Բյուզանդիայի դեմ
- ե. Երուսաղեմի թագավորության ստեղծումը

- 1) բ, գ                      2) ա, գ                      3) բ, ե                      4) ա, ե

**88. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- ա. Փիլարտոսը հիմնադրեց ընդարձակ իշխանություն Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում:
- բ. Լևոն I-ի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմանները հարավում հասան մինչև Միջերկրական ծով:
- գ. Թորոս II-ի ջանքերով կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Սիս, ուր մնաց մինչև 1441 թ.:
- դ. Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ:
- ե. Թորոս II-ը իր իշխանությանը միացրեց Եդեսիայի կոմսությունը:

- 1) ա, գ                      2) գ, ե                      3) դ, ե                      4) բ, դ

**89. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1307 թվականին.**

- 1) մամլուքների առաջին արշավանքը Կիլիկիա
- 2) Սսի եկեղեցական ժողովը
- 3) Ադանայի եկեղեցական ժողովը
- 4) Կիլիկյան հայոց թագավորների և 40 իշխանների սպանությունը
- 5) մամլուքների կողմից Սսի պաշարումը

**90. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- ա. Կիլիկյան Հայաստանում մշտական բանակ պահելու համար մտցվել էր ռազմական հարկ:
- բ. Հիվանդախնամների հոգևոր-ասպետական միաբանությունը հայոց բանակին ամեն տարի տրամադրում էր 4000 ռազմիկ:
- գ. Կիլիկյան Հայաստանում հեծելազորը բանակի հիմնական կորիզն էր:
- դ. Կիլիկյան Հայաստանում ռազմական նավատորմի համար կառուցված բերդերից կարևոր էր Վահկա բերդը:
- ե. Այսան ուներ ծովային և ցամաքային բերդեր:

- 1) ա, գ                      2) բ, գ                      3) բ, դ                      4) դ, ե

**91. Գտնել սխալ փաստարկները.**

- 1) Տիրան արքային ձերբակալել էր Ատրպատականի մարզպան Ատրվշնասպը:
- 2) Սահակ Պարթևը կարողացավ չեզոքացնել իրեն հակաթոռ նշանակված ասորի Շամուելի գործունեությունը:
- 3) «Ամոթալի» պայմանագրի համաձայն՝ Հռոմը պարտավորվել էր այլևս չօգնել Հայաստանին:
- 4) Վաչե Մամիկոնյանը մագքութներին ջախջախել է Օշականի Յլու գլուխ լեռան մոտ:
- 5) Տրդատ Մեծը հազարապետ է նշանակել Արտավազը Մանդակունուն:
- 6) Արիստակես կաթողիկոսի սպանությունից հետո կաթողիկոս է դարձել նրա ավագ եղբայր Վրթանեսը:

**92. Թվարկվածներից որո՞նք են Պապ թագավորի բարեփոխումներից.**

- ա. Արքունի հողերի հաշվին ավելացվում են Տրդատ Մեծի օրոք եկեղեցուն տրված հողերը:
- բ. Բանակի թիվը հասցվում է մոտ 100 հազարի:
- գ. Վերացվում է «պտղի և տասանորդի կարգը»՝ բերքից վճարվող տուրքը:
- դ. Բացվում են նոր կուսանոցներ և այրիների ապաստաններ:
- ե. Հոգևորականների հարազատներին արգելվում է պետական ծառայություն կատարել:

- 1) բ, գ                                      2) դ, ե                                      3) ա, դ                                      4) ա, գ

**93. Ջհանշահի օրոք որտեղի՞ հայ իշխանական տների շառավիղները սկսեցին մելիք կոչվել.**

- 1) Վասպուրականի, Սյունիքի, Արցախի, Գեղարքունիքի, Վայոց ձորի
- 2) Գուգարքի, Սյունիքի, Արցախի, Գեղարքունիքի, Վայոց ձորի
- 3) Սասունի, Սյունիքի, Արցախի, Գեղարքունիքի, Վայոց ձորի
- 4) Սյունիքի, Արցախի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Համշենի

**94. Արևմտյան Հայաստանում հայ ավատատերերի մանր իշխանություններ էին պահպանվել՝**

- 1) Մոկսում, Տայքում, Սյունիքում, Վասպուրականում
- 2) Սասունում, Մոկսում, Շատախում, Ջեթունում
- 3) Սպեր-Բաբերդում, Կարնո երկրում, Գեղամա երկրում, Սյունիքում
- 4) Խաչենում, Վարանդայում, Ջրաբերդում, Դիզակում

**95. Վասպուրականի թագավորությունում կար՝**

- 1) 4 000 գյուղ, 8 քաղաք, 72 ամրոց, 115 վանք
- 2) 4 000 գյուղ, 2 քաղաք, 115 ամրոց, 40 վանք
- 3) 1 000-ից ավելի գյուղ, 4 քաղաք, 43 ամրոց, 40 վանք
- 4) 4 000-ից ավելի գյուղ, 6 քաղաք, 115 վանք, 72 ամրոց



**96. XI դարի կեսերից սկսվեց հայ բնակչության զանգվածային արտագաղթը դեպի՝**

- 1) Կիլիկիա, Ասորիք, Կասպողովկիա, Հյուսիսային Միջագետք
- 2) Կիլիկիա, Բալկաններ, Իրան, Հնդկաստան
- 3) Կիլիկիա, Ուկրաինա, Լեհաստան, Իրան
- 4) Կիլիկիա, Ասորիք, Փոքր Ասիա, Հյուսիսային Կովկաս

**97. Անին ազատագրելուց հետո Չաքարյանները թշնամուց մաքրեցին.**

- 1) Տարոնը, Վասպուրականը, Տաշիր-Ձորագետը
- 2) Տայքը, Սպերը, Բարձր Հայքը
- 3) Աղձնիքը, Գուգարքը, Ուտիքը
- 4) Արարատյան դաշտը, Սյունիքը, Արցախը

**98. Անիից ու Դվինից բացի՝ Բագրատունյաց Հայաստանի նշանավոր քաղաքներից էին նաև՝**

- 1) Կարսը, Արծնը, Վանը
- 2) Կարինը, Արտաշատը, Մանազկերտը
- 3) Երևանը, Կապանը, Ոստանը
- 4) Արճեշը, Բերկրին, Սիսը

**99. Ընտրել ճիշտ պնդումները, որոնք արտացոլում են Կիլիկյան Հայաստանի բանակի բնութագրական կողմերը և առանձնահատկությունները.**

ա. Կիլիկյան Հայաստանում արքունական հեծելազորի հրամանատարը կոչվում էր սպասալար:

բ. Սպարապետությունը Կիլիկյան Հայաստանում որևէ իշխանական տան ժառանգական պաշտոնը չէր:

գ. Կիլիկյան Հայաստանում պատերազմներին մասնակցում էր միայն մշտական կանոնավոր բանակը. աշխարհագրորդ ճակատամարտերին չէր մասնակցում:

դ. Կիլիկյան Հայաստանի բանակում հոգևոր-ասպետական միաբանությունների գործերը ազատված էին ռազմական ծառայություն կատարելու պարտականությունից:

ե. Հիվանդախնամների միաբանությունը պարտավոր էր Կիլիկյան Հայաստանի բանակին տարեկան տրամադրել 1400 հեծյալ ռազմիկ:

- 1) ա, բ                                    2) բ, ե                                    3) գ, դ                                    4) գ, ե

**100. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.**

1) Անտիոքի և Կիլիկիայի միջև խնդիրներ ծագեցին Դաշտային Կիլիկիայի արևմտյան շրջանների պատճառով:

2) Լևոն II-ի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագիր կնքվեց Սիս քաղաքում:

3) Պայմանագրի համաձայն՝ Բոհեմունդը հսկայական փրկագին պետք է վճարեր:

4) Բոհեմունդի ժառանգորդ Ռայմունդի և Լևոնի եղբայր Ռուբենի դուստր Ալիսի արու գավակը պետք է ժառանգեր միայն Անտիոքը:

5) Անտիոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել հայ-խաչակրաց միացյալ պետություն:

**101. Թվարկվածներից ո՞ր բերդերն են Կիլիկիայում հանձնվել Ապլլարիա Արծրունի ստրատեգոսին.**

- 1) Պիզու
- 2) Լամբրոն
- 3) Պիր
- 4) Պապեռոն
- 5) Ծամնդավ

**102. Ո՞ր քաղաքներն է այցելել Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը.**

- 1) Լվով և Լիվոնոն
- 2) Միլան և Փարիզ
- 3) Վենետիկ և Հռոմ
- 4) Ամստերդամ և Մարսել

**103. Մոնղոլների դեմ ապստամբելու համար մահապատժի ենթարկվեցին՝**

- 1) Արագածոտնի տիրակալ Վաչե Վաչուտյանը և Հասան Պոռոշյանը
- 2) Սյունիքի տիրակալ Լիպարիտ Օրբելյանը և Վասակ Պոռոշյանը
- 3) Գագի տիրակալ Զաքարե Վահրամյանը և Սարգիս Զաքարյանը
- 4) Խաչենի տիրակալ Հասան-Ջալալը և Զաքարե Զաքարյանը

**104. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

- ա. Գագիկ Արծրունին, խիստ դժգոհ մնալով Սմբատ թագավորից, բանակցություններ սկսեց Ատրպատականի ամիրա Յուսուֆի հետ:
  - բ. Յուսուֆի միջնորդությամբ խալիֆը 921 թ. Սմբատի փոխարեն Հայաստանի թագավոր ճանաչեց Գագիկ Արծրունուն:
  - գ. Բագրատունիների թագավորությանը վերջ տալու նպատակով Յուսուֆ ամիրան Գագիկ Արծրունու հետ հարձակվեց Հայաստանի վրա:
